

ՄԻՈՂ

ԱՄԱԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԻԹԵՒՆ ԵՐԱՒԱՆՆԵՄԻ ՀԱՅ ԳԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ



Ի. ՏԱՐԻ - ՆՈՐ ՀՐԶԼՆ 1946

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Ներգաղթը (Ա).

ԽՄԲ.

brk

1

— Սկսող աշխարհը (Բ).

ԽՄԲ.

4

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.ի դիմումը երեք մեծերուն.

7

ԿՐՕՆԱԿԱՆ

— Ապահարզան.

Տ. Ի.

10

— Աստուած պատմութեան մեջ.

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

13

ԿՐՕՆԱՊԱՏՄԱԿԱՆ

— Աստուածաւունջի Հայերէն հին քաղամանու-
թիւնները (4).

ՆՈՐԱՅՐ ՎՐԻ. ԾՈՎԱԿԱՆ

16

ԴՐԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

— Քսան եւ հինգ տարիներ ռուս գրականութեան.

ԿԼԵՊ ՍԹՐՈՒՎ

19

Ձեկոյց եւ ճեղքկապի՝ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր
ուղեւորութեան ի Սուրբ Էջմիածին.

22

ՔԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ

— Հայրենի աղբիւր.

ԵՂԻՎԱՐԴ

28

— Այլերով մեծ ու օրհուս...

Ն. ԿԱՏԱՐ

29

— Իմ աստիճան.

ՇԷՆ - ՄԱՀ

30

ՄԵԹՈՏԱԲԱՆԱԿԱՆ

— Վարկածին ու փորձարկութեան դերը
բնական գիտութիւններու մեջ.

Լ.

31

ՆԵՋՈՒԱԳԻՏԱԿԱՆ

— Եբրայական ազգեցութիւնը Հայերէնի վրայ.

ՊՐՈՖ. Հ. ԱՀԱՌԵԱՆ

34

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

— Մթնոլորտ.

ԱԻՆՏՈՒՄ

37

— Խաղաղութեան կամ Պառտեան Հայոց
պատմութեան մեջ.

ԱՐՏԱԽԱԶԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

39

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

— Պատճառական այցելութիւններ եւ ամսօրեայ ներքին շուրհ.

43

— Նկեղեցական եւ բնական.

43

— Վարդապետական գաւազանի, Լանջախաչի եւ ծաղկեայ փիլոնի
օնորհաբաշխութիւններ.

45

— Բարեպաշտական նուերներ.

46

ՏԻՐՈՒՆԻ

— Տ. Գարեգին Աւագ Քննյ. Պողոտեան.

46

— Միաբան Սարգիս Սեւադաբեան.

47

— Սօֆիա Մայրապետ Շահապեան.

47

— Մարիամ Մայրապետ Մամիկոնեան.

47

— Միաբան Սարգիս Մարտիկեան.

47

— Միաբան Տիգրան Փափազեան.

47

Կոչ Յաբեկեանական Բարեպաշտ Կանաչեանի.

48

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգրինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 6
կամ մէկ ու կէս Ամերիկեան Զօլար:

ԲԱԺԱՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆՈՒԿ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ն Ե Ր Գ Ա Ղ Թ Ը

Ա.

Անցեալ Դեկտեմբերին, Խորհրդային Կառավարութիւնը մասնաւոր հրամանագրով մը հրահանգեց Հայաստանի Կառավարութիւնը ներգաղթ կազմակերպելու, և առ այդ՝ լայն պատրաստութիւններ եղան երկրէն ներս և արձանագրութիւններ կազմուեցան Սփիւռքի հոծ և կարեւոր կեդրոններուն մէջ, օտարութեան ստուերներուն նստած հայրենակարօտ բազմութիւնները Հայաստան փոխադրելու համար:

Նոյն օրերուն, Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, պատմական դիմում մը կատարեց Երեք Մեծերուն՝ պահանջելով Թրքահայաստանի ազատագրումը և կցումը արդէ Հայաստանին: Անտարակոյս այս դիմումը և ներգաղթի մասին եղած կարգադրութիւնները սերտ առնչութիւններ ունէին իրարու հետ, և կը ձգտէին, գէթ այս անգամ, լուծելու Հայ Դատը՝ անտեսուած արգարութեան գորգեան հանգոյցը. ու կը հաւատանք թէ ներգաղթը առաջին արարն է այդ սրտառուչ տրամային: Ներգաղթի զաղափարը կ'ենթադրէ ընդարձակումը արդէ Հայաստանի սահմաններուն, յաւելումով մեր պատմական հայրենիքի բռնազրաւուած հողերուն:

Ներգաղթը հետեաբար հրաւերի խօսք մը չէ միայն, այլ մեր տարիներու երազին, սպասումին, տառապանքին ճարտք լուծումը: Անոնք որ օր մը՝ արիւնի և ոճիւրի օր մը, հեռացուեցան իրենց Հայրենիքէն, արիւններու և բոցերու մէջէն մազապուրծ, մերկ, անօթի, կը հաւատային տակաւին ու հաւատացին միշտ՝ թէ «Հայոց աշխարհի գարունը» պիտի դայ: Վասնզի Հայ Ժողովուրդը իր դարաւոր կեանքի ընթացքին, բոլոր ճշմարտութիւններէն աւելի, խոր փորձառութեամբ զգացեր է թէ արուեստական և պարտադրեալ մահերը՝ որով երբեք մարդկային վայրագութիւնները փորձեր են իր վրայ, չեն կրցած և պիտի չկրնան սպաննել ամբողջ ազգ մը: Հոգեկան ոյժ մը կայ մեր մէջ, ասիկա զգացեր ենք մենք, տեսեր են ուրիշներ, զոր բացատրել, վերլուծել կարելի չէ, որուն մէջ կը միանան, կը նոյնանան լեզու, կրօնք, աւանդութիւն, ցեղային ինքնուրոյն ընդունակութիւններ, քաղաքակրթական ձգտումներ, ոյժ մը որ կը յայտնուի մեր մէջ, մեր ուրախութեան, մեր տրտմութեան և մեր տագնապներուն մէջ, և մեր բոլորին նայուածքն ու հոգին կը սկսեմ նոյն նպատա-

կակէտին, ապագայի հաստատ հաւատքով։ Այդ հոգեկան ոյժին շնորհիւ ահա-
ւասիկ նորէն ողջ ենք, թևերուն տակ մեր դարաւոր երազին։

Մենք եղբար մանաւանդ մահուանդ ճամբուն՝ ժողովուրդ հայոց, և երբ կը
կարծուէր թէ այլևս վերջացած էս, արեան հեղեղներու ներքև դարաւոր արիւ-
նոտ փառքին, ապրելու բնագոյր, ապագայի մեծութեան պատկերը և Աստուծոյ
նախախնամող ալը այս անգամ ևս բարձրացուցին զքեզ։ և դուն հեռաւոր ա-
փուլնքներու վրայ, մերկ, անօթի և կիսամեռ, հաւաքելով ուժերդ նորէն կանգ-
նեցար։ Կազմեցիր տնտեսութիւնդ ուժերուդ և պարագաներու ներած չափով,
չինեցիր Եկեղեցի ու դպրոց և յառաջ տարիր հոգեկան ու կրթական գործը։
Ու կախած կարօտի տաւիլդ օտար և մութ շուրերուն վրայ՝ Բաբելոնի տա-
րազիւններուն նման երգեցիր թող իմ ալս զիս մոռնայ, եթէ ես քեզ մոռնամ
իմ հայրենի երկիր, թող լեզուն քիմքս փակչի, եթէ քեզ չյիշեմ, եթէ փառքդ
չնուազեմ անդադար»։ Հակառակ սակայն, մեր տոհմային այս առաքինութեանց,
Սփիւռքի ժողովուրդը տակաւ կը կորսնցնէր հայ ողիին յատկանիշերը։ Տարբեր
ազգեցութիւններու և մշակույթներու մաշումին ենթակայ, հայ զաղթաշխարհը կը
զրկէր այն արժէքներէն՝ որոնք տակաւին երէկ մեր անձեռնմխելի առաքինու-
թիւնները կազմեր էին։ Առանց կասկածի ենթարկելու մեր ժողովուրդի ինքնա-
պահպանման ամուր և խոր բնագոյնը, Սփիւռքի Հայութիւնը հանդերձուած
չէր միսմիակ իրացնելու իր ապահովութեան գործը։ Դէմ ենք կեցեր սուրով,
պարանոցով և հոգիով, հակառակ մեր տկարութեան, աշխարհակալ կայսրու-
թեանց, և պահեք՝ մենք զմեզ։ սակայն մէջտեղ է մեր պատմութիւնը։ Մեր
պաշտպան սուրբերը օտարութեան մէջ՝ նուաղելու, այլասերելու վտանգը կ'ա-
ճեցնեն իրենց ներսը։ Մենք այսօր ստիպուած ենք իր լեզուին, կրօնքին և ազ-
գին հետ իր արիւնը յօժարակամ զոհարերող մարդու գաւակին մէջ առնուազն իր
հայրը յիշեցնելու համար, օտար լեզուով թերթ խմբագրել և հայ հոգիին խորթ
միջոցներով ստեղծել ջանալ իր մէջ հայութեան յատուկ հասարակաց կամուրջը։

Հասարակաց խօսքերու արձագանգ մը չենք ուզեր որ արթնցնեն մեր
այս խօսքերը ընթերցողի հոգիին մէջ։ Անշուշտ կը հաւատանք հայ հոգիին և
անոր հրաշքին։ սակայն մեր դարաւոր փորձառութեամբ սորված ենք թէ հայ
հոգիին գերազոյն պաշտպանը դարձեալ Հայ Հայրենիքն է, ամէն բանէ առաջ
և ամէն բանէ վեր։ Ահա թէ ինչո՞ւ համար ներգաղթը Սփիւռքի տակաւ կոր-
սուելու դատապարտուած զոյութեան համար, կը դառնայ ազատարար զօտի,
փրկութեան լաստ ու մանաւանդ լրումը իր մեծ կրօնին։ Սերունդը որուն աշ-
քերը բացուեցան առաջի մեծ պատերազմի սարսափներուն վրայ, ու սերունդը
որուն ոսկորները ճանչցան մեր պատմութեան մեծ աղէտին ծանրութիւնն ու
արհաւիրքը, այսօր Սփիւռքի քաւարանեան պայմաններուն մէջ, հաւասար չա-
փով կը զգան հայրենի հողին կարօտն ու բարիքը և անոր աշտարակուող գե-
ղեցկութիւնը մեր տրտմութիւններուն վերև, և կ'ուզեն բնականաբար որ վայր-
կեան առաջ իրենց արի բազուկները ամբողջութեամբ տրամադրուին Հայ Հայ-
րենիքի ոյժին, փառքին ու գեղեցկութեան։

Իրականութիւն է այլևս մեր երազը, կը հաւատանք, որուն բաղձանքով
բացուեցան օտարութեան մէջ իր խանձարուրը քակող մանուկին շրթները, և զոր
չտեսնելու մղձաւանջէն կը տառապին զերեզմանին մօտեցող պանդուխտ հոգիները։

159-59

Անշուշտ երկար եղաւ մեր սպասումը, և խոր մեր տառապանքը, սակայն բնաւ չպակեցաւ մեզի յոյսին քաղցրութիւնը։ Անցնող քառորդ դարուն՝ մեր հայրենիքը, իբր հաւատարապատիւ անգամ խորհրդային Միութեան, բոլորեց բարգաւաճ շրջան մը, վայելելով հզօր պաշտպանութիւնը այս վերջնոյն։ Եւ մեր կարօտի ու երազներու այդ աշխարհը երկու տասնեակ տարիներու ընթացքին գերագոյն զոհողութիւններու զինով ջանաց և նիւթեց, մշակելով հողը, բանալով ջրանցքները, զարգացնելով գիւղատնտեսական աշխատանքները, և ուշագրաւ համեմատութիւններու հասցնելով ճարտարագործութիւնը իր բոլոր երեսներուն վրայ։

Շատցաւ նորակերտ բնակարաններու թիւը, խարտեաշ բարիքով ծածկւեցան դարերով անմշակ հողերը, հոյակապ գործարաններ իրենց շոգեպինդ աշխատանքին մէջ տակաւ շատցուցին պակսող բարիքները։ Մասնաւոր դարկ տրուեցաւ կրթական և մշակութային գործին, յառաջդրուեցան և իրենց իրագործումը գտան ընկերային և վարչական բարենորոգումները, և Երևան մայրաքաղաքը՝ դարձաւ կեդրոն հայ մտքին։ Սփիւռքը՝ որուն առջև կը բացուէին աւելի գեղեցկացած իր հայրենիքին դուռները, երախտագիտութեան անհուն պարտք մը ունի Հայաստանի իմաստուն վարիչներուն և մեր երկրի հովանաւոր ու պաշտպան Ռուս մեծ ժողովուրդին և անոր աննման և մեծիմաստ ղեկավարին։ Իսկ Սովիէտ և Հայրենական այս մեծ պատերազմի մէջ, փառքը զոր աւելցուցին մեր բազմահազար զինուորները ռուս զինուորի կողքին, մեր պատմութեան ամբողջ դարերուն, անոր բոլոր նսեմութիւններուն վրայ իսկական կարմիր գեղեցկութիւն մը եղաւ իր արեան կարմիր հոսումով, ստեղծելով ադաւաթական քաջութեան արդար համբաւը ինչպէս երէկ՝ այնպէս ալ այսօր, Կերչէն մինչև Պեոլին։

Լայն բացինք փակագիծը, ներգաղթի մտածումին մէջէն, որ այս տըրտում օրերու ամենէն սրտառուչ և խանդավառ իրողութիւնն է Սփիւռքին։ Համայնական զգացողութեան մը մէջ Սփիւռքի հոգեկան միութեան իրագործումը չունի աւելի նպաստաւոր և փայլուն առիթ՝ որքան մտատեսիլ պատկերը բերաւոր ուժերու, մատաղէն մինչև սպառածը, որոնք կ'իյնան ճամբայ մեր դարաւոր սպասումը պսակելու, Հայաստանի հողին անպատմելի հմայքին մէջը։ Հայ Հայրենասիրութիւնն է անիկա, երէկ զոհողութեան կրակներու գաշտերուն, ինքզինքը ամբողջանուէր տրամադրած այդ հայրենիքի անգնացաւ ազատագրութեան, այսօր նոյն և աւելի կորովով հեղեղային արշաւը տեղի ունեցաւ ազատագրութեան, այսօր ինքնիք, հոն դառնալու համար հայ ստեղծագործումին անմահ խորհրդանշանը։

Պիտի ուզէինք որ այս համայնական զգացողութիւնը նոր կրօնքի մը նման լեցնէր մեր բոլորին հոգիները, հոնկէ ընդմիշտ վտարելով մեզ բաժան բաժան ընող տարակարծութիւնները, կիրքերը, իմաստութիւններն ու յաւակնութիւնները։ Հայաց հայրենիքը հզօր է՝ նոր կրօնքի մը չափ՝ հայ ժողովուրդի բոլոր զաւկներուն հոգիին։ Կը հաւատանք թէ այս զգացումը ամբողջական ապրումն է Սփիւռքի բոլոր խաւերուն համար։

Ներգաղթ՝ կը նշանակէ դադարը մեր հալածական ու տարագնաց քայքայուն օտար հողերուն վրայ, և սփոփանք մեր հոգիներուն, վանդի յետայսու, մեր մեռելները պիտի չսպանն ալլա օտար երկինքներու և ցուրտ ու ծանր հողերու տակ։

Ներգաղթը մանաւանդ հոգիներու ներգաղթ մըն է, դարաւոր գերութեան ժանգերն են որ պիտի անհետանան մեր զգացումին բոլոր ճամբաներէն, երբ մեր հոգիները պիտի զիտնան մտնել հաղորդութեան քուրային մէջը ցեղին սրբազան կրակին և պիտի բլլան. — Մէկ սիրտ, մէկ ժողովուրդ, Հայ ժողովուրդ, Սովիէտական Հայ Հայրենիքի մէջ։

ԽՄԲ.

Ս Կ Ս Ո Ղ Ա Շ Խ Ա Ր Յ Ը

Բ

Կը բանանք Սիոնի նոր տարեշրջանը մէկէ աւելի հակամարտ զգացումներով: Ամբողջ աշխարհը շահագրգռող բազմաթիւ տաղանայներէն՝ բացառութեամբ մեզի պատկանող, ներգաղթող, տեսանք իր բոլոր խրախուսիչ և բարեգէպ հանգամանքներովը կանխող խմբազրականին մէջ: Անշուշտ անհկա չսպառներ մեր ժողովուրդին հոգերը այնքան իրարմէ աղաղակող, այնքան կարօտ արդար և սրտցաւ լուծումի: Երկրորդ այս խմբազրականին մէջ մենք կ'ուզենք ազգայինէն անդին, մարդկայինը, աւելի մեծ բառով մը համամարդկայինը նկատի ունենալ:

Երբ ռազմադաշտերուն վրայ, ամիսներ առաջ, լռեց արիւնի և աւերման վերջին պատգամը, պատերազմի մղձաւանջէն տառապող ու աւերը զգացող ամէն հոգի, նախ քաղցր փափաքն ունեցաւ որ եկող խաղաղութիւնը ըլլար ապահով և վերջնական, որպէսզի բոլոր ժողովուրդները կարենային երթալ ապագային, առանց պատերազմին և անոր սարսափին: Յետոյ իւրաքանչիւր անհատ այս աշխարհի վրայ, որքան ատեն որ կրնար ծառայել և օգտակար ըլլալ, ունենար պատենութիւն ինքզինքը իրազործելու: Եւ ամենէն վերջ, տարիքի և ոյժի իր պարտքը վճարելէ յետոյ, իրաւատէրն ըլլար հանգիստի այն բաժինին, զոր իր աշխատանքը գնոր էր զործունէութեան իր շրջանին: Խաղաղութիւն, զործ և ապահովութիւն, ասոնք պահանջներ են ինչպէս անհատներու՝ նոյնպէս նաև ազգերու համար, իր կարմիր լաթերէն դեռ, նոր մերկացած սկսող աշխարհէն: Առանց այս երաշխաւորումին, մարդիկ միշտ պիտի փորձեն սրել արիւննէն դեռ չցաքած սուրը: Գազաններն անգամ կը քնասեն, կ'ըսուի, երբ անօթի են ու անապահով:

Տակաւին հարիւրամեակ մը առաջ, իմաստութիւն կը նկատուէր մտածել հին առածին, «Թէ խաղաղութիւն կ'ուզես՝ պատերազմի պատրաստուէ՛ք»։ սակայն այսօր աշխարհի բարիքին համար մտածողները եկած են այն եզրակացութեան, թէ խաղաղութիւն ունենալու համար անհրաժեշտ է նախ զիտնալ անոր ազդեցութիւնը, ապա լծուիլ զանոնք արգասաւորելու աշխատանքին: Ի վերջոյ կենքին պահանջները և անոնց գոհացում տուող ուժերը պէտք է հաւասարակշռուին, ներդաշնակութիւն կարենալ ստեղծելու համար: Այսօրուան աշխարհին մէջ շատ բան զեղչուած է այն պատճառներէն, աւելի ճիշտ պատրուակներէն, յանուն որոնց, ասկէ դար մը առաջ միայն, մարդիկ պատերազմներու կը դիմէին: Անշուշտ թէ անայլասիրութիւնը, դասակարգային խտրութիւնը, կրօնական տարբերութիւնները չունին այն կիզիչ և չհաշտուող նկարագիրը՝ որոնք մեզի ծանօթ են անցեալէն: հակառակ ասոր սակայն, պատերազմի կիրքը մարդուն մէջ մարելէ շատ հեռու է, որքան ալ աճի փաղանջը խաղաղասէրներու: Բիչ չէ եղած միշտ թիւը անհատներու, ինչպէս ժողովուրդներու, ու

որոնք արիւնի այս պաշտամունքը վերածել ուզեն քաղաքակրթական բարձրագոյն հրամայականներու :

Շատ են պատճառները պատերազմին , և զարգացող ու նոր կարելիութիւններու մօտեցող աշխարհը միշտ պիտի պատորէ իր խղճմտանքը և պիտի մշուշէ իր նայուածքը , տնտեսական , փառասիրական , փոխ վրէժի և վախի զգացումներով : Շատեր՝ մեր օրերու մարդարէններէն , մտածեր են ու կը մտածեն թէ՛ այս աւերին առջև առնելու համար անհրաժեշտ է ստեղծել իրաւասու մարմին մը , կարելի բոլոր ապահովութիւններով , որպէսզի վերջ տրուի միջազգային անիշխանութեան : Ուրիշներ՝ ապագայ այդ մղձաւանջէն տազնապահար , կը պահանջեն միջազգային օրէնքի մը ենթարկել աշխարհը . և տակաւին աւելի ծայրայեղներ , կը մտածեն որ վերջ տրուի բոլոր ինքնիշխանութիւններու , և քանի մը մեծ պետութիւններէ կազմուած գերազգային իշխանութեամբ առաջնորդուի մեր մուլարակին ճակատագիրը : Թէ՛ այդ Մարմինը ինչպէս պիտի բաժնէր իր ճակատագիրը Ազգերու Լիկայ , Միջազգային Կառավարութիւն և Ապահովութեան Խորհուրդ կոչուող մարմիններու ճակատագրէն , այժմէն դժուար է գուշակել , սակայն մօտ է ապագան և կեանքը բազմապահանջ , որուն դէմ լսատակերտուած ամէն կարելիութիւն՝ երբեմն տարիներու կեանքով է միայն պայմանաւոր :

Ինչ որ մեր օրերու պատերազմին գերագոյն տազնապահ է մտածող բոլոր հոգիներուն վրայ , ատիկա ոչ միայն պարտութիւնն է բարոյական յղացքներուն , այլ այլասերումը անոնց : Դար մը առաջ սկսող ու վերջացող պատերազմներու մէջ նուազ չէր ոճիրին զիջխանձ ախորժակը , սակայն այդ պայքարները խոշոր չափով անոնց մարմնեղէն դրութեան արտայայտութիւնն էին , ամբողջի միշտ հղեղէնովը : Այսօր խախտած կը թուին մեր խղճմտանքին ու հետեւաբար բարոյականին բոլոր դրութիւնները , և հասարակ տեղիք մըն է այլևս ըսել՝ թէ՛ աշխարհը կ'ապրի իր մեծագոյն տազնապահներէն մէկը : Լուսաւորութեան և ճարտարարուեստի մեր դարը եղաւ անդթութեան , տարակոյսի և բարոյական յղացքներու նահանջի դար մը : Սկզբունքներն ու աւանդութիւնները որոնք վարեր էին կեանքը արեւմտեան քաղաքակրթութեան այս վերլի երկու մեծ պատերազմներու մէջ , խոշոր տոկոսով փաղրեցան իրենց դերէն : Քաղաքական և ընկերային տեսութիւնները , որոնք կիրարկուեցան այնքան մեծ յաւակնութեամբ , փոխանակ մեղմիւրու տակաւ աճող այս տազնապար , ծառայեցին մարդկային ծանր և թանձր բնագոյններու սանձարձակման : Ու տարբեր ալ չէր կրնար ըլլալ , երբ արդարութեան կը յաշորդէր ոյժը , և անհատն ու իր իրաւունքը կը փոխարինուէր զանգուածով :

Ներկայ քառուր սակայն , ինչպէս կ'երևի , կը շեշտէ անհրաժեշտ պէտքը ապագայ կարգին . բան մը պէտք է փոխուի , և կամ աւելի ճիշտ , այլափոխուածները պէտք է նախ իրենց ճիշտ հասկացողութեանը զան : Նոր աշխարհին մէջ պէտք է իրենց վայել տեղը գտնեն այն բոլոր՝ որոնք նահանջի միւլուեցան այնքան անդթօրէն :

Նախընթաց երկու մեծ պատերազմներու մէջ մարդկային բարոյականի որոշ յղացքներ՝ որոշ ապահովութիւններ էին ստեղծեր՝ ու կը ստեղծէին մարդերու հոգիին խորը . այսօր բարոյական և նիւթական այդ ապահովութիւնը կախուած է նոր և անուելի գիւտէ մը , որուն համար անգուլ կը ճգնի մարդկային

ուղեղը: Աթօմիք ռումբի ստուերը նահանջի մատնած է ցարդ իրենց դերը ու նեցող՝ բոլոր պատերազմական միջոցները, նոր և աւելի գերազանց միջոց մը կրնայ ունէլ ժողովուրդի մը տալ աննախընթաց գերակշռութիւն մը մարդերու կեանքին և ճակատադրին հետ խաղալու համար: Ստեղծուած է առանձին զիտութիւն մը՝ «մահուան գիտութիւն», և հեռապատկերը կործանման ուժերու կայսրութեան: Շրջուած է քանակի տիրապետութեան ցարդ ամենայալի սկզբունքը: Կը բացուի շրջանը այլամերժ իմացականութեան: Ոչ մէկ արգելք՝ որպէսզի փոքր ժողովուրդ մը այդ իմացականութենէն հանէր նոր միջոց մը աշխարհէն ուղածին շափ մաս փոշիի վերածելու: Այս հաւաստումին պարզ է հետեանքը. — Իմացականութեան դէմ հոգին:

Մեր օրերու աշխարհը յանուն խաղաղութեան, կը պատրաստուի աւելի ծանր ու կործանարար պատերազմներու, վասնզի միջոցները որոնց կը հաւատայ և անդուլ ճիշդը որոնք ի գործ կը դրուին ի գիւտ նոյն այդ միջոցներուն, համատարած այդ մղձաւանջն է որ կը ստեղծեն բոլոր հոգիներուն մէջ:

Պէտք չէ խաբուիլ այն միամիտ լաւատեսութենէն, թէ աւերման նոր և անուշիկ զենքերու և միջոցներու գիւտը բնական ապաղինման պիտի առաջնորդէր մարդկութիւնը: Բարի հոգիներու այս տրամախոհութիւնը շատ քիչ վստահութիւն կրնայ ներշնչել իրերու այժմու գրութեան մէջ: Յուսահատ չենք մարդերէն, անշուշտ աշխարհը ստիպուած է նորէն իր ներսը փնտռել իր մեծ բխումները մարդերու վրայով՝ որոնք հաւատային կարելի գեղեցիկ իրադրծումներուն այս կեանքին մէջ և չամչնային օր մը մարդ ծնելու ճակատադրէն: Թէ պիտի գայ այն օրը՝ երբ մեր հանապազօրեայ հացը, որուն համար մենք ահուայ ակռայի կուգանք, ամէն երդիքի տակ, խտացած արև մը ինչպէս, ճառագայթէր, ուր մեր հիմա արիւնով զնել յօժարած բարիքները ըլլային առատ և ընձեռելի: Ասիկա մեր հաւատքն է, որ՝ կը խորհրդէ թէ աւելի կ'արժէ քան մղձաւանջը յոռի աշխարհի մը: "

Ոչ ոք կը մտածէ փաստերու փաստին, որ նուաճումն է անբան տարրին, անասուն բնազդներուն, կոյր ուժերուն, իրադրծուած նոյն այդ մարդերու կողմէն, որոնք այսօր մահուան գործիքներ կը պատրաստեն: Մարդեր որոնք ծնան հոգին վրայ այս աշխարհին, դրին հիմը մաքին, անով շարունակելու համար անդրագոյն ճակատագիրներու հերոսական պայքարը, և մօտեցնելու մարդը Աստուծոյ, որ սկիզբն ու շտեմարանն է բոլոր պարզներուն և շնորհներուն:

Գժտութիւնը չարիք մըն է, պատերազմը՝ ոճիր, վասնզի ան ամենէն անգութ յայտնութիւնն է ատելութեան՝ որ կ'որլանայ և կ'եռայ մարդոց սիրտերուն մէջ: Պատերազմը յանցանք մը և պատիժ մըն է միանգամայն, ու անանկացած է իր իսկ զարհուրանքէն: Հասարակ տեղիք մի նկատէք մոռցուած պատգամը դարաւոր ճշմարտութեան, թէ հոգիներուն մէջ կատարուելիք յեղաշրջումը միայն՝ անկարելի կրնայ դարձնել ընտելման այս արհաւիրքները, ազգերէ ազգ, ժողովուրդներէ ժողովուրդ: Այսօրուան մարդը, անհրաժեշտաբար պէտք է հաւատայ հոգեկան ոյժի այս հրաշքին:

Վասնզի Աստուածայինը, անբաժան բաժինն է մարդկային կեանքին:

ԻՄԲ,

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՂ. ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի

ԴԻՄՈՒՄԸ ԵՐԵՔ՝ ՄԵԾԵՐՈՒՆ

Ի. Վ. ՍՏԱՆԻՆԻՆ

Հ. Ս. ԹՐՈՒՄԸՆԻՆ

Կ. Ռ. ԷԹԼԻՆԻՆ

Հայ եկեղեցու պետերը՝ կաթողիկոսներն ու պատրիարքները, դարերի ընթացքում հայ ժողովրդի ներկայացուցիչներն են հանդիսացել պետութիւնների առաջ և նորա բաղձանքների ու տառապանքների, խնդիրների ու պահանջների արտայայտիչները:

Այս պատմական մոմենտին, երբ դեմոկրատ և ազատասէր մեծ պետութիւնները՝ Սովետների Միութիւնը, Մեծ Բրիտանիան և Միացեալ Նահանգները յաղթանակ տարան չարի և բռնութեան՝ Ֆաշիզմի և նացիզմի վերայ, երբ լուծուում են ժողովուրդների զոյութեան հարցերը, Թիւրքիայից վտարուած և ամբողջ աշխարհում թափառող հայ ժողովուրդը ամենայն իրաւունքով դնում է իր արիւնոտ հարցը մեծ պետութիւններիդ արգարադատութեան առաջ:

Մենք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ., հաւատարիմ մեր ժողովրդապաշտպան տրադիցիաներին՝ սրբազան պարտք ունինք ի Սփիւռա աշխարհից բերած, դժբախտ հայ ժողովուրդի դատը ներկայացնելու Ձեզ, խնդրելով նորա արդար լուծումը. մանաւանդ թէ այդ իմաստով բազմաթիւ դիմումներ ենք ստացել աշխարհի ամէն կողմը գրուած հայերի կողմից: Հայ հին ժողովուրդը դարերի ընթացքում օսմանեան պետութեան լծի տակ հանդուրժել է բոլոր զրկանքներին, հարստահարութիւններին և ծանր տաժաններին, ենթարկուել է իրաւազուրկ ռայայի — ստրուկի դրութեան, սակայն պահել է, իսլամական ֆանատիկ միջավայրում, իր քրիստոնէական կրօնը, կրթութիւն է նորա խաղաղասէր ոգով, պահպանել է իր լեզուն և հաւատացել ազատութեան, որ պիտի բերէին քրիստոնեայ պետութիւնները և քաղաքակրթութիւնը: Եւ երբ այդ յոյսը հետզհետէ իրականանում էր բալկանեան բախտակից ժողովուրդների նկատմամբ ու նոքա ազատուում էին թրքական լծից, հայ ժողովրդի համար այդ դարձաւ ճակատագրական աղէտ և այն մահաբեր: Ինչպէս յայտնի է, հայկական բարենորոգումների խնդիրը առաջին անգամ քաղաքական ասպարէզ իջաւ Սան-Ստեֆանոյի դաշնագրութեամբ 1878-ին: Հայկական վիլայէթների ծանր կացութիւնը, անվերջանալի կեղեքումները և աւազակութիւնները, հայերի կեանքի ու զոյքի անապահովութիւնը ստիպեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքին դիմել յաղթական ռուսներին, որ Թիւրքիայի հետ խաղաղութիւն կնքելիս նկատի ունենան հայերի դժոխային վիճակը: Ռուսներն ընդառաջ եկան, բայց Սան-Ստեֆանոյի 16-րդ բարենպաստ յօդուածը Բեռլինում վերածուեց 61-րդ աղէտաբեր յօդուածին:

Սուլթան Աբդուլ Համիդը օգտուելով եւրոպական մեծ պետութիւնների հակամարտութիւնից և շահամոլութիւնից, փոխանակ իրազործելու իր յանձն առած բարենորոգումները, սկսեց սիստեմատիկ կերպով զործադրել իր դիւական ծրագիրը՝ ոչնչացնել հայերին, համարելով այն հայկական հարցը ջնջելու լաւա-

գոյն միջոցը: Եւ յիշուի կազմակերպած աւագակային բանդաների միջոցով, մասնակի շարդերով, կողոպուտներով, հրդեհումներով և 1894-1896 թվերին մասսայական շարդերով՝ նրան յաջողուեց աւելի քան 300.000 հայեր սպանել և վտարել երկրից դուրս:

Սուլթանին յաջորդող օսթիմները՝ Իթթիհատը, Թալատթ և էնվեր փաշաները և քեմալական նոր Թիւրքիան, Համիդի այդ ճշգրտական իմաստութիւնը հասցրին իր զագաթնակէտին: Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրեակին Թիւրքիայում ուղղող 2.500.000 հայերից այսօր Թիւրքիայում կան մօտաւորապէս 100.000 հայեր, որոնք քաշ են տալիս իրենց ողբալի գոյութիւնը «գեմոկրատիկ» նոր Թիւրքիայում:

Աւելի քան մի միլիոն հայեր ոչնչացան զարհուրելի կոտորածների մէջ: Թիւրքերը Բալկանեան ագառազրուած ժողովուրդների դէմ ունեցած վրէժը անպաշտպան հայերից հանեցին:

Մենք չենք ցանկանում կանգ առնել այս անսահման տրագիկայի վրայ, բազմաթիւ հատորներ կան գրուած բոլոր լեզուներով այդ զարհուրանքների մասին, պետութիւնների արխիւները լիքն են իրենց կոնսուլների գեկուցումներով այդ մասին: Մարդկութեան լաւագոյն մասը՝ ազնիւ սիրտ ու միտք կրողները բողոքեցին և ըմբոստացան մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող այդ հրէշային ոճիրի դէմ: Եւ սակայն հայ ժողովուրդը իր սրբազան հայրենիքից վտարուած ու անպաշտպան, ցրուեց ի սփիւռս աշխարհի:

Ի լրումն հայ ժողովուրդի պիւսին եկած դժբախտութիւնների, Թիւրքերը 1920 թվին ուխտադրուծ կերպով յարձակուեցին ու խլեցին Հայաստանի կարեւոր կենսական մասերը՝ Ղարսը, Արդահանը, Սուրմալուն: Սովետական նորածին Միութիւնը ազատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով վերկեց նա այնտեղ ապրող հայերին վերահաս բնաջնջումից: Այսպիսով ստեղծուեցաւ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան, որը 25 տարուց ի վեր խաղաղութեան և ազատութեան մէջ բուժելով իր վերքերը զարգանում և բարգաւաճում է:

Այսօր ժողովուրդների բախտը միացեալ դեմոկրատիկ պետութիւնների ձեռքում է: Այս արեւահեղ պատերազմից յետոյ, ուր միլիոնաւոր կեանքեր զոհուեցին արդարութեան և հումանիզմի յաղթանակի համար, մեծ և հզոր պետութիւնների անխուսափելի պարտականութիւնն է, որ մարեն չարի և բռնութեան բոլոր օջախները, որպէսզի նորից չկրկնուեն ժողովուրդների շարդերը, նրանց պարաքն է վերացնել անցեալ անարդարութիւնները, ճիշտ ճանաչել թշնամուհ և բարեկամին, և հատուցանել ազնիւ և պարտաճանաչ զրկուածին, զոհուածին, անիրաւուածին:

Այս հաւատով Ձեզ են դիմում Թիւրքիայից վտարուած հին ու նոր հայ զաղթականները, որոնք թափառում են երկրագնդի զանազան մասերում և նուցա հետ Ամենայն Հայոց հինաւուրց Հայրապետութիւնը և խնդրում Ձեզ ճանաչել հայերի իրաւունքը իրենց պատմական հայրենիքի վրայ, որ նոքա սրբազործել են իրենց արիւնով և քրտինքով և ծածկել յիշատակաց արժանի հաւատաւ կուսութեան կոթողներով: Մենք խնդրում ենք առնել Թիւրքիայի ձեռքից այդ բռնազրաւուած և այժմ համարեայ ամայացած հողերը և վերադարձնել իրենց իսկական տէրերին ու միացնել Սովետական Հայաստանին, որով նոքա

հնարաւորութիւն կ'ունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցներին կողքին, աշխատելու և իրենց ազգային մշակոյթը զարգացնելու :

Սա կը լինի արդար զնահատականը փյն հակառակման զոհաբերութիւններին և անձնագոյութեան, որ հայ ժողովուրդը բերեց, յանուն միաւորեալ դեմոկրատիկ պետութիւններին գործին, յանուն դեմոկրատիայի յաղթանակին :

Հայ ժողովուրդը բոլոր ճակատներում քաջութեամբ կռուեց յաղթանակի համար, ուստի անխրաւութիւն կը լինի, եթէ այս անգամ էլ նա յուսախաբ լինի : Աշխարհը անհերելի կը համարէ, եթէ այս անգամ էլ հայերի սրբազան իրաւունքը չյարգուի :

Թիւրքիայի դաժան լծից ազատուեցին Յունաստանն ու Սերբիան, Ռուս մանիան, Բուլղարիան, Լիւանան ու Ալբանիան, Կրետէ կղզին ու Պաղեստինը : Ինչո՞ւ համար, ի՞նչ իմաստուն պատճառաբանութեամբ մարդկութիւնը պիտի զլանայ տառապեալ Հայաստանին տալու իր արդարագոյն իրաւունքը :

Պետութիւնները յանուն իրենց հանդիսաւոր խոստումների և յայտարարած սկզբունքների, պարտաւոր են կատարել քաղաքակրթական մի վեհ ազտ, մարդասիրական մի սուրբ գործ՝ փրկել վերջնական կորստից մի հին կուլտուրական ազգի մնացորդները, մի ազգի, որ ստեղծել է կրասիկ լեզու և զրախանութիւն, տուել է արուեստի հոյակապ կոթողներ և ունի արժէքաւոր ներգրումներ համամարդկային կուլտուրայի մէջ :

Թիւրքիան և նորա բարեկամները վիժեցնելու համար՝ հայկական դատը յայտարարում են, թէ ներկայ Թիւրքիան, դեմոկրատիկ իրաւակարգ ունի, նա հին Թիւրքիան չէ, և հայերը, եթէ կամենան, կարող են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը : Սակայն հայ ժողովուրդը անցեալի առթիւ փորձերից զիտէ, որ զոյութիւն չունի հին և նոր Թիւրքիա, նա միեւնոյն Թիւրքիան է, և հայ ժողովուրդը, ինչպէս և եւրոպական դիպլոմատիան, լաւ գիտեն Թիւրքական խոստումների արժէքը :

Միակ ելքն է Թիւրքա - Հայաստանի ազատագրումը և կցումը Սովետական Հայաստանին :

Ուստի վերստին խնդրում ենք, որ Թիւրքիայի հայկական վիլայէթները միացուեն Սովետական Հայաստանին, որպէսզի հայութիւնը ամբողջանայ հաւաքուելով հայրենի երկրում և ապահովութեան ու խաղաղութեան մէջ շարունակէ իր ընդհատուած քաղաքակրթական աշխատանքը և ի յայտ բերէ իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը :

Այս արդար ու վսեմ գործի յաջողութեան համար աղերսանօք դիմում եմ Ամենակարող Աստծու օգնութեանը, թող Բարձրեալն օրհնէ Ձեզ և առաջնորդէ Ձեր միտքն ու կամքը բարին կատարելու, այլև շարժէ ներկայ Թիւրքիայի ղեկավարների խիղճը, քաւելու իրենց և նախորդների ծանր յանցանքները, որպէսզի վերանայ այն ամենամեծ անարդարութիւնը, որ կատարուեց լուսաւորութեան և քաղաքակրթութեան դարում մի ըստ ամենայնի խաղաղ, շանասէր և ստեղծագործող ժողովրդի հանդէպ :

ԿՐԾՆԵԿԱՆ

ԱՊԱՀԱՐԱՆ

Ամենուս շատ ծանօթ այս պարագան, լուրջ գոռարութիւններու առջեւ կը գնէ զմեզ, երբ հաշտեցնել փորձենք ամուսնութեան մասին աւետարանի ուսուցումը արդի ազատամտութեան հետ: Քրիստոնեայ մտածողներէն շատեր՝ կը կարծեն թէ Յիսուս վերջնականօրէն Վճռած ու ճշգրտած է այս պարագան, նկատելով որ Ան մարդկային կեանքին վերաբերեալ ընդհանուր օրէնքներ և սկզբունքներ միայն խօսած է և նպատակ ունեցած է օրինադիրք մը տալու աշխարհին: Եկեղեցական ուրիշ հայրեր սակայն՝ կը յաւելուն թէ Յիսուս այս պարագային ըրած է իր յստակ հաւաստումը: Կաթոլիկ Եկեղեցին ապահարգան տալու իր արգելքը կը հիմնէ աւետարանի ուսուցման այս վերջի հասկացողութեան վրայ:

Այս խնդրոյն վերաբերեալ Նոր Կտակարանի համարներն են (ՄՏՔ. Յ. 31-32, ԺԺ. 3-10, ՄԻԿ. Ժ. 2-12, Ղուկ. ԺՁ. 18, Ա. Կորնթ. Է. 10-16 և 39), վերջի երկուքին մէջ մանաւանդ, Յիսուս բացարձակապէս կ'արգիլէ ամուսնաթողութիւնը: Մինչ Մատթէոսի վերոյիշեալ երկու գլուխներուն պարագային ան կը ֆիյալ առարկելի: Սակայն այս ներհակութեան մասին խօսելէ առաջ, կարեւոր է նկատի ունենալ թէ ա) — ի՞նչ յանցանքով ապահարգանք հոս կ'արտօնուի և բ) — անիկա վերամուսնութիւն կ'արտօնու՞ թէ ոչ բաժնու՞մ միայն: Յիշուած բացարձակութիւնը «շնութեան» պարագային է միայն. այս բառը իր նախնական իմաստին մէջ կը նշանակէ յարբերութիւն պոռնիկի մը հետ (porneia): Բնադաստեղծն ու մանք կ'առարկեն թէ ապահարգանք կրնայ ըլլալ եթէ կինը անպարկեշտ եղած է ամուսնութենէն առաջ: Ասիկա սակայն անկարելի է և երբեք թոյլատրելի եղած չէ Եկեղեցիին մէջ:

Հռովմէական Եկեղեցւոյ միկնիչները, կը պնդեն թէ Յիսուս նուիրագործած է բաժնու՞մը պոռնիկութեան պարագային, բայց ոչ ապահարգանքը, վերամուսնական արտօնութեամբ: Ասիկա սակայն անկարելի կը

թուի, հետեւեալ պատճառներով: Նախ Բ. Օրէնքին (1-4) համարները որոնցմէ կ'առաջնորդուի Յիսուս, բացայայտօրէն կ'արտօնեն վերամուսնութիւնը: Երկրորդ՝ պոռնիկութեան պատճառով եղած ապահարգանքը չարգիլիք ամուսնութիւնը արձակուած կնոյ, և թէ վերամուսնութիւնը պոռնիկութիւն չէ պոռնիկութեան պատճառով եղած ապահարգանքէն վերջ: Ու երրորդ՝ ապահարգանքն առանց վերամուսնանալու իրաւունքին՝ անծանօթ է ինչպէս Հրէից՝ նոյնպէս Հռովմէացւոց Օրէնսդրութեան մէջ:

Սակայն հոս կարելի է առարկել թէ, եթէ յանցաւոր կնոյ ամուսինը կրնայ վերամուսնանալ առանց քանելու պոռնիկութեան յանցանքը, անհեթեթ է ըսել թէ անոր պիտի առնէ արձակուած կինը, պոռնիկութիւն ըրած է՝ ըլլայ: Որովհետեւ պոռնիկութիւնը պատահական ոճիւր մըն է ամուսնական կեանքին մէջ, և եթէ կարելի է երկու կողմերուն համար, կարելի է նոյն պատճառներով, որովհետեւ ամուսնական կապը կը շարունակուի և երկուքն ալ կապուած են իրարու:

Գալով Մատթէոսի երկու գլուխներուն մէջ յիշուած անցքերուն, կրնանք վստահօրէն եզրակացնել թէ Յիսուս կ'արտօնէ ամուսնութիւնը, երկու կողմերուն ալ շնորհելով վերամուսնանալու ազատութիւնը, նոյն իսկ պոռնիկութեան պարագային: Որով Մատթէոսի աւետարանի համարներուն մէջ եղած բացարձակութիւնը, չի հաշտուիր Մարկոսի և Ղուկասի աւետարաններոյ հետ, որոնք անգիշտող են: Սակայն այս կարծեցեալ հակասութիւնը կը պարտուի, երբ նկատի ունենանք որ Յիսուս միշտ մատնանշեց օրինապաշտութեան անցաւոր բնութիւնը, բայց յարգեց զայն, վստահ ինքը քանդելու եկած չէր, այլ ամբողջացնելու: Միւս կողմէն ինք ձեւին կը հակադրէ կատարեալը, բացարձակը որ երեւոյթին և ձեւին շատ քիչ տեղ կը թողու: Այսպէս է նոր օրէնսդրութեան գաղափարական նկարագիրը, որ, անոնց պատարելութիւնը կանոն ընելով մարդկային կեանքին, մեզի ցոյց կուտայ ձիւնապատ այն զազաթը, որուն պէտք է հասնիլ, առանց սակայն աշխարհին տալու ամէն մէկին մատչելի քաղաքային իրաւագիտութեան մը սկզբունքները: Քրիստոս մեկնիչն ու երաշխաւորն է

գերազոյն բարոյականի մը, որ, երբ բազմաթիւ հիւնին հետ, կը նմանի ուժէն ճարձատուն նոր գինիին, զոր անխոհմտութիւն պիտի ըլլար գնել կարկտուած տիկերու մէջ, Ա՛յս է ահաւասիկ, իր բուն իմացումին մէջ, մատնանշուած հակասութիւնը, որ ուրիշ բան չէ բայց նոր չէնքին մէջ ընդունելէ առաջ ընտելիները, պահել հինը, ատով կարելի ընելու փոխադրութեան գործը:

Առաջին նայուածքով, աւետարաններու վկայութիւնները այս մասին հակասական կ'երևին. կարգ մը հատուածներ Ղեւտական օրէնսդրութիւնը կը հաստատեն, մինչդեռ ուրիշներ անոր ջնջումը կը յայտարարեն: Իրապէս Յիսուս զտուժ չի կատարեր: Երբ օրինաց եւ մարգարէից մը վրայ կը խօսի, կարծես իր խօսքը մէկ ամբողջի մը՝ ամբողջութեան մը մասին է, որուն մէջ կը յայտնէ իր Հօր կամքը:

Միւս կողմէն սակայն բազմաթիւ յայտարարութիւններ միւս իմաստին ոյժ կուտան, հասկնելով թէ Տէրը ոչ միայն յաւիտեական չի նկատեր Մովսիսականութիւնը, այլ ընդհանրական ջնջած է զայն իր բարոյականովն ու պաշտամունքովը միանգամայն: Հոս այս պարագային աւետարանական սէրն է որ տեղը կ'անցնի բնական ձգտումներուն: Եւ շատ բնական է որ իր դիրքը նոյն ըլլար նաեւ ամուսնութեան ըմբռնումին շուրջ: Յիսուս կը յարգէ ու կը կատարէ հին օրէնքը, վասնիկ կը վերանորոգէ զանոնք, կատարելով թէ՛ մին և թէ՛ միւսը, կ'ընդգրկէ և միութեան կը վերածէ զանոնք: Արդարեւ, Քրիստոսի մէջ կը միախառնուին օրէնքը, Աստուծոյ կամքը որ մարգուն կը պարտադրուի, և ծէսը, մարգէն առ Աստուած վերընծայուած պարգեք, որոնք, երկուքն ալ, իրենց կատարումը կը զտնեն սիրոյ մէջ, որ աւետարանին արքայական առանձնաշնորհումն ու պարտականութիւնն է:

Իբր լուսարանութիւն և հաւաստիք այս ընդհանուր իրողութեան, կ'արժէ մէջ բերել Եկեղեցւոյ հին հայրերէն ումանց արտայայտութիւնը ամուսնական ըմբռնումին շուրջ: Հերմաս (շուրջ 140) կ'ըսէ թէ ամուսինի մը որ կը շարունակէ տակաւին կենակցել իր անհաւատարիմ կնոջ հետ, կը մասնակցի անոր պոռնկութեան: Տերտուլիանոս (շուրջ 200) կը պահանջէ որ ամուս-

նինը վտարէ իր պոռնկացող կինը, և թէ կինը՝ նոյնպէս պէտք է վարուի իր անհաւատարիմ ամուսնոյն նկատմամբ: Ուրիշ բան է անտարբեր կենալ, և ուրիշ բան՝ պատրաստ ըլլալ ներելու ապաշխարութեան վերջ: Կը թուի թէ հին գրիչները համաձայն են շնորհագրկուն վերջ եղած վերամուսնութեան, բաժանումէ մը յետոյ անշուշտ: Ապամանով որ յանցաւոր կողմը ապաշխարէ: Լակտանտիոս (Ձ. 325-ին) վաւերական կը նկատէ վերամուսնութիւնը ամուսինի մը՝ որ արձակուած է իր կնոջմէն, պոռնկութեան պատճառաւ: Միտքէ պէտք չէ վրիպենել սակայն սա պարագան թէ բոլոր հին հայրերը անխտիր, բացարձակօրէն արգելք չհրահրանալով հանգիստ վերամուսնութեան, քաղցր ալքով չեն նայած երկրորդ ամուսնութեան մը: Աւելի վերջ՝ Յուստինոս կը յիշատակէ քրիստոնեայ կին մը, որ ապահարզան պահանջեց իր հեթանոս ամուսինէն, որ կը ստիպէր զինք ենթարկուելու իր անբնական գործածութեանց:

Ս. Պողոս Ա. Կորնթ. Ե. զիտոյն մէջ կը խօսի խառն ամուսնութեանց մասին. վկայութեան կը կանչէ «Տէրը» որ կ'արգիլէ կնոջ ձգելու իր ամուսինը առանց բացառութեան, բայց կը յաւելու, թէ ինք իր անձնական հեղինակութեամբ կ'արտօնէ այդ բացառութիւնը, եթէ հեթանոս ամուսինը արձակէ իր քրիստոնեայ կինը, այս վերջինը ապահարզութեան ներքէ չէ՞ որ ուրիշ բան չի նշանակեր բայց եթէ կրնայ ամուսնանալ նորէն: Թէ և ուսումնասիրողներէն շատեր՝ ասոր հակառակ կ'ուզեն հասկնալ, սակայն կը խորհիմ թէ անխառն պիտի ըլլար արձակուած և այրի կնոջ մը ըսել թէ՛ այլեւս պարտաւորութեան ներքէ չեա՞յ, եթէ անկէա առաւ պիտի չըլլար վերստին ամուսնանալու:

Այս բոլորէն վերջ, եզրակացութեան մը գալու պէտք չկայ թէ, Յիսուս ամուսնական սրբութեան աւելի բարձր տեսակէտ մը կ'ուզէ տպաւորել մեր մէջ, քան ինչ որ ըսապիներն ու անոնց դպրոցները կը հասկնալին և կ'ազդէին ըսել: Տիրոջ նպատակը չէր դժուար և ծանր կանոններ գնել: Աւելի դժուար պարագայի մը ան դիւրութեամբ պիտի ըսէր, ինչպէս ըսած էր ուրիշ պատուիրանի մը համար, «ամուսնութիւնը մար-

դուռն համար եղած է և ոչ թէ մարդը ա-
մուսնութեան համարս :

Դժուար պարագաները կը ստեղծեն գէշ
օրէնքը, բայց գէշ օրէնքն է որ կը շատցնէ
թիւը ծանր պարագաներու :

Վարդապետութիւնը՝ թէ ամուսնութիւ-
նը անլուծելի է բացարձակապէս, նոր կտա-
կարանով չի կրնար ապացուցուիլ՝ Ո. Պո-
զոս չի պաշտպաներ զայն, կամ աւելի ճիշտ
անիկա չարսօնիւր իսկ խառն ամուսնու-
թիւններու լուծումը : Ընդունելով Մատ-
թէոսեան բացառութիւնը կանոնին մէջ, Ա-
կեղեցին կ'ընդունի մեկնութիւնը Քրիստոսի
այն խօսքերուն՝ որոնց համաձայն ամուս-
նութիւնը ըստ ինքեան անլուծելի ըլլայ :

Ըսել կ'ուզեմ թէ երբ Քրիստոսի խօս-
քերը կ'ընդունուին, անոնք պէտք է հառ-
կցուին որ նպատակ ունին վճռելու ապա-
հարզանը ոչ իբր պարզ բաժանում, որով-
հետեւ անոնք որոշապէս ըսուած են իբր
բացառութիւն բացարձակ օրէնքի մը : Մատ-
թէոսէն յիշուեալ տարիներ վերջ, վերամուս-
նութեան դէմ եղած զգացումը եթէ չա-
րունակուէր մնալ նոյն, ինչպէս էր ի հնումն,
անիկա պիտի շարունակէր ըլլալ տիրական :
Հայրերէն ոմանք ինչպէս որ տեսանք, յո-
ժար էին խնդրոյ առարկայ ընել այն հար-
ցը թէ՛ ոչ-սեռային օրինադասցութիւննե-
րէն ոմանք ևս կրնային բարոյապէս համար-
ժէք ըլլալ պոռնութեան :

Քրիստոնեայ կայսրերը բացայայտօրէն,
Եկեղեցւոյ կողմէն առանց ոչ մէկ բողոքի,
արտօնուեցան ապահարզանի, ինչ ինչ պա-
րագաներու, և վերամուսնութեան : Յոյն Ե-
կեղեցին կ'արտօնէ որ անմեղ կողմը վեր-
ամուսնանայ, և նոյնիսկ երբեմն ալ վեր-
ամուսնութիւն կը զիլի մեղաւոր կողմին :
Հռոմէական Եկեղեցին զը մնայ խիստ
սկզբունքին նկատմամբ, և ամուսնութիւնը
չեղեալ նկատող հրամանադրերը զայլազ-
դութիւն յառաջ բերած են : Իսկ Բողոքական
Եկեղեցիները ապահարզան տուած են վեր-
ամուսնութեան իրաւունքով, պոռնութեան
կամ այլ օրինադասցութիւններու համար :

Քրիստոնեայ պետութեան մը պարտաւա-
նութիւնն է մարկային բնութեան անկատա-
բութեան համաձայն օրէնքներ սահմանել,
միաժամանակ ճանչնալով պարտականու-
թիւնը պահելու միակ սրբութիւնը ամուս-
նական պայմանագրին, զոր Քրիստոսը ան-

վիճելիօրէն մտադրութիւն ունեցած է շնչ-
տելու : Արդար է շնութիւնը պատժել իբրեւ
ստորնացուցիչ արարք, իբր ամենազանգ
պարտաւորութեան մը խղուժը, զոր այր մը
և կին մը կը կնքեն իրենց կեանքի ամբողջ
ընթացքին համար : Աւրախացուցիչ է տես-
նել շնացողի ամուսնութիւնը իր մեղսակցին
հետ բացարձակօրէն արգելուած :

Գալով անմեղ կողմին, պէտք է գոր-
ծադրել Յոյն Եկեղեցւոյ ներողամիտ սկզբ-
բունքը, թէ և ամենազինու կերպը այս պա-
րագային արդար կողմին չվերամուսնանալն
է : «Որ կարողն է տանել՝ տարցիւ :

Եթէ օրէնքը այսպէս խստանայ ի շնոր-
հակա քրիստոնեական բարոյականին, ար-
գելելով ամուսնութիւնը՝ մաքրելու նպա-
տակով շնացող զոյգը, այն ատեն ինչու
քրիստոնեայ պետութիւն մը պէտք է չէ ար-
տօնէ ապահարզանը վերամուսնութեան ա-
զատութեամբ, բացի շնութեան պարագա-
ներէն : Նման կարելի պարագաներ են,
չքուժը, անգլութիւնը, մշտական գինու-
վութիւնը, վնեւրական խառը, ճճբային
հակումները, մարմնական և մտային թաք-
նուած պակասութիւնները :

Բայց քանի որ այս կարգի նախատես-
ուած պարագաներ գո՛ւրս կը մնան Քրիս-
տոսի կողմէն նկատի առնուած և հաստատ-
ուած օրէնքներէն, պէտք է ընդունինք այն
իրողութիւնը թէ պետութեան օրէնքը և
Եկեղեցին օրէնքը չեն կրնար նոյն ըլլալ :
Խնդիրը սակայն աւելի լուրջ է քան
այս, շատ մը քաղաքացիներ, անուանա-
պէս նոյնիսկ քրիստոնեայ չեն, և ոչ մէկ
պարտաւորութիւն կը զգան հաւատարմու-
թեան ուլտ ընել իրենց ամուսնութեան
ատեն, իրենց կեանքի ամբողջ ընթացքին
համար : Եթէ, ինչպէս կարելի կը թուի,
պետութիւնը պարտաւորուի ընդունելու ի-
րաց այս վիճակը, միակ լուծումը կը թուի
ըլլալ ընդունիլ թէ օրէնքը պէտք է ճանչ-
նայ երկու կերպ ամուսնութիւններ : Անոնք
որոնք Եկեղեցւոյ օրհնութիւնը կ'ուզեն ի-
րենց միութեան ատեն, ուխտած են ըլլալ
հաւատարմութիւն իրենց կեանքի ամբողջ
տեւողութեան ընթացքին : Բայց եթէ երկու
անձեր ուզեն կնքել աւելի սահմանաւոր
պայմանագրութիւն մը, որու տրամադրու-
թիւնները որոշապէս հասկցուած կ'ըլլան
երկու կողմերէն ալ, անոնց առջև կը բաց-

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Քրիստոսի ծննդեան, քիչ մը աւելի դժուար ըմբռնելի բացատրութեամբ մը, Աստուծոյ ժամանակին մէջ յայտնութիւնը, Անոր մարդեղութեան և մարդերու մէջ բնականութեան խորհուրդը, առաւելաբար կը համախմբէ մեր մտածումը վերնագրի թելադրանքի շուրջը:

Քրիստոսի ծնունդը, աննախընթաց ու եզակի, ոչ միայն քրիստոնէական մտածողութեան՝ այլ նաեւ մարդերու մարդկայնութեան մէջ, միակ դէպքն է: Այս պարագան կը մղէ մեզ,՝ անդրադառնալ տիեզերական այս մեծ իրողութեան — Աստուծոյ յայտնութեան — պատմութեան մէջ:

Ի՞նչ է այդ յայտնութիւնը, Միթէ Աստուած մէկ անգամ է երեցած մարդոց, և ինքզինքը յայտնած, ժամանակին ու պատմութեան մէջ: Ինչ է այն խորունկ նշանակութիւնը, և հետեաբար ինչի մէջ կը կայանայ աննախընթաց և եզակի նկարագիրը՝ Աստուծոյ պատմութեան մէջ լինելու տիեզերական մեծ իրողութեան:

Աստուած կը յայտնէ ինքզինքը, ժամանակի սկիզբին: Մեր տիրութեան ստեղծագործութիւնը սկիզբն է մեր ժամանակին: Եւ Աստուած կը յայտնուի իր ստեղծագործութեան արարքով: Այդ ստեղծագործութիւնը ըլլալով սկիզբը ժամանակին, կ'ըլլայ նաեւ սկիզբը տիեզերքին ու մարդերու պատմութեան: Անգամ մը որ հիմք կը դրուի այս տիեզերքին, Աստուած այլևս սկիզբը կ'ընէ իր նոր յայտնութիւններուն, իր ստեղծագործութեանը մէջ: Ան հովին մէջ է երբեմն: Ստէպ փոթորիկին

ուր քաղաքագետարանի տոմարը, և պետութիւնը կը ճանչնայ անոնց վիճակը իբր խառնակեցութենէ քիչ մը աւելի բարձր բան մը: Իսկ թէ այսպիսիները պիտի կըրնան Եկեղեցւոյ անգամ նկատուի, այդ ալ ուրիշ հարց:

Տ. Ի.

ու անձրեւին մէջ, կրակի ու որոտումի մէջ: Սիւքին մէջ, ծառերու մէջէն վազող, Եւ կամ լուսեղէն ամպով՝ անապատին մէջէն առաջնորդող: Կը խօսի լեռներու բարձունքներէն: Մարգարէները միջոցներն են իր ինքնայայտնութեան, իր սաստիկուն, իր յորդորներուն, իր պատգամներուն, իր հրահանգներուն: Նահապետները այլ կերպեր՝ Անոր յայտնութեան: Հրեշտակները, սուրբերը, հոգիով աղքատ մարդերը կը նշկատուին յայտնութեան ուրիշ անօթները Աստուծոյ:

Աւ հոս կը փակուին Աստուծոյ՝ այն կերպ յայտնութիւնները: Այդ բոլորը կ'իրապրծուին ժամանակին մէջ: Աստուած կ'երեւայ ու կ'այայտանայ, ժամանակի զօտիին վրայ: Այդ ժամանակը, մարդերու միջոցաւ, յայտնութիւնը կ'ընէ Աստուծոյ: Եւ Աստուած կ'երեւայ իր ստեղծած ժամանակին մէջ, իր ստեղծագործութեան զանազան կերպերով:

Իայց որ մը, ճշմանակներու լրումին, Աստուած, այս անգամ տեսնելի կերպով կը յայտնէ ինքզինքը, իր ստեղծած ժամանակով, և կը մտնէ պատմութեան մէջ: Աստուած իր մարդացեալ որդւոյն միջոցաւ, կը մտնէ մեր պատմութեան մէջ: Իր որդւոյն ծննդեամբ, մեր ժամանակին մէջ ընթացք կ'առնէ, իր սատուածային իրագործումներով: Այսինքն Աստուած ոչ միայն կը յայտնուի, այլ կ'ապրի մեզի հետ, միշտ պէս:

Հրաշքը մարդեղութեան: Աստուած ժամանակին ընդմէջէն կ'իջնէ մեր պատմութեան մէջ:

Ի՞նչ է սակայն այդ պատմութիւնը, ժամանակի մէջ ընթացք առնող շարժումներու և իրագործումներու զուտարը: Մենք մեր պատմութիւնը ունինք: Օղակ առ օղակ, ժամանակի ընթացքին վրայ, մարդերը կը շինեն իրենց արարքներուն շրջան: Այսպէսով մարդերը կ'ունենան իրենց անցեալը, կ'ապրին ներկան, որ կ'երթայ միանալ անցեալին: Եւ վերջապէս, ապագան որ նոր իրագործումներու կարելին է:

Ասիկա մեր պատմութիւնն է: Աշխարհի պատմութիւնը: Մեզի պատմութիւնը: Եւ միջոցի սահմանաւորումներուն ենթակայ, մեր իրագործումներուն, մեր շարժումներուն ընթացքը: Եւ Քրիստ

զոս իր ծննդեամբ, մտաւ մեր պատմութեան մէջ։ Մեզի նման ենթարկուեցաւ ժամանակի անբարեկեցութեան, և ապրեցաւ մեր կեանքը, և ունեցաւ իր պատմութիւնը, մեր պատմութեան նման։ Աւել տարաններով պահուած և մեզի աւանդուած պատմութիւնը Գրիստոսի կեանքին, ամբողջ մըն է, Անոր՝ այս աշխարհի պայմաններով ունեցած իրազօրծունեութիւն։ Ապրեցաւ մեզի հետ։ Մեր պայմաններով լեցուց իր օրերը։ Ուրախացաւ՝ հարսանիքներու ընթացքին։ Խորովեցաւ և հոգեոց հանեց իր սիրելիի գերեզմանին առջև։ Աշխատեցաւ իրեններուն հետ, տառապեցաւ անոնց նման։ Գոհացաւ անոնց հետ, և զայսուցաւ անոնց նման։ Ուրիշ խօսքով, Յիսուս ծնաւ մեր ժամանակին մէջ, լեցուց զայն մեր պայմաններով իրագործելի աւարքներով։ Հետեւաբար շինեց իր ընթացքը։ Ունեցաւ իր պատմութիւնը մեր երկրին վրայ։

Բայց ճիշտ այս մտածումի աւարտին, մեր միտքը այդ բոլորով, կ'երթայ աւելի անդին, այդ բոլորին իրրեւ պատճառ, իրրեւ նպատակ եղող զսպանակներուն։ Ինչո՞ւ Յայնուսթիւնը Աստուծոյ հովերէն, ու ուրախանալէն վերջ, մի կերպարանքով, ինչո՞ւ յայտնուիլը Անոր, մեր միջոցին մէջ։ Ինչո՞ւ զգենումը՝ մեր պատմութեան կերպարանքին։ — Այս հարցերը կուգան, և կը քակուին տրամաբանական ընթացքի մը մէջ բռնուած։ Եւ անոնք կուգան բերելու ամենախոր իրաւը, ամենաստուգ ճշմարիտը Աստուծոյ Որդին, կամ սխալ չէ ըսել, Աստուծոյ մեր մէջ ներքնակութեան, պարզ՝ մեր պատմութեան մէջ իջնալու խոր հորդորք։

Գրիստոս ծնաւ, կատարելով ինքնաշարժութեան ակտը։ Ասիկա անոր համար՝ որպէսզի անգամ մը ևս վերբերէ մեր աշխարհը իր կապանքներէն, վերադարձնէ զմեզ մեր գոյութեան սկզբնածագին, դնէ զմեզ մեր առաջուկն ըլլալու կերպին մէջ։ Գոհակերպէ մեր մեղանչական ճակատագիրը աստուածային լուսաւոր կեանքին։ Կարճ։ Գրիստոս իջաւ մեր պատմութեան մէջ, զմեզ իր պատմութեան մէջ փոխադրելու։ Ասիկա անհրաժեշտութիւն մըն էր։ Մեր պատմութեան ճակատագիրն է ասիկա, որուն չկրցաւ դիմադրել անիկա։

Անկարելի էր հովին ու փոթորիկներուն ընդմէջէն, ուղղել նաւը մեր սայթաքող կեանքին։ Անիկա կ'երթար ձախ, դէպի աւելի աշխարհը, դէպի մեղքի մութ կայքերը։ Աշխարհն ու մարդը մոռցած իրենց միւս պատմութիւնը, նոր պատմութիւն մը կը շինէ։ Եւ ասիկա կորուստը եղաւ անոնց։ Անհրաժեշտ էր Մարդը, որ պիտի գտնէր վերստին մարդերը, որոնք անգամ մը ևս պիտի տար մոռցուած կարելիութիւնները՝ մոռցուած կեանքի մը իրագործունեութիւն։ Ուրիշ խօսքով դէնք զանոնք իրենց իրական պատմութեան ընթացքին մէջ։

Գրիստոս ծնաւ, իջաւ մեր կեանքին մէջ, առաւ մեր պատմութիւնը, որպէսզի իրմով բարձրանանք իր կեանքին, և մշտնեմք իր պատմութեան մէջ, որոնք մերն էին երբեմն։

Բայց ի՞նչ է այդ նոր պատմութիւնը, նորօրինակ կեանքի մը իրագործունեութիւն այդ ընթացքը։

Ասիկա Գրիստոսի կեանքն է, մարդերու կեանքին հակադրուած։ Ասիկա երկնքի կեանքին պատմութիւնն է, աշխարհի կեանքին հակադրուած։ Բայց հակառակ այս հակադրութեան, այդ երկու կեանքերը, և անոնց մէջ ընթացք առնող շարժումներու գումարը, հետեւաբար այդ երկու պատմութիւնները, էապէս նոյն լինելութեան, իրերայալորդ արտայայտութեան կերպերն են։ Մեր պատմութիւնը հոս չէ որ կը սկսի, անիկա իր սկիզբը ունի երկնային պատմութեան մէջ։ Վասնզի մեր լինելութիւնը իր գոյութիւնը կ'առնէ հոգեկան այն աշխարհին մէջ, ուր ճակատագրուած ենք վերադառնալու։ Եւ ճշմարիտ պատմութիւնը, հոգեկան կեանքի և հոգեկան փորձառութեան իրագործունեութիւն ընթացքն է։ Երկինքն ու երկնային կեանքը, որուն խորքերէն սկիզբ կ'առնէ պատմութեան ընթացքը, կը կազմեն ամենախոր ներքինը հոգեկան կեանքին։ Երկինքը, այս իմաստով վերանցական վիճակ մը չէ այլևս, այլ մեր հոգեկան կեանքի ամենախոր մասերէն մէկը։ Երբ թափանցենք այդ խորքերուն հոն մենք պիտի հաղորդուինք երկնային կեանքին հետ։ Այդ կեանքին մէջ, շտեմարանուած կան հոգեկան այն խոր փորձառութիւնները, որոնք այնքան տարբեր են

մեր երկրային կեանքին մէջ իրազործուող մեր փորձառութիւններէն: Եւ ճիշտ այս հոգեկան կեանքի իրականութեան մէջ, գոյութիւն ունի ճշմարիտ պատմութեան ազգայնայն Աստուածային կեանքին յայտագրութեան մէջ, որուն ընդմէջէն կը յայտնուի անոր ունեցած յարաբերութիւնը մարդու հոգեկան կեանքին հետ: Ուրիշ խօսքով երկնային պատմութիւնը, տրաման է Աստուծոյ և մարդուն ունեցած փոխադարձ յարաբերութեան: Երկնայինը այն ամենախոր իրականութիւնն է, ուր մարդն ու Աստուած կը հանդիպին իրարու, ուր մարդը իր շրջները կը մօտեցնէ գերազայն և բացարձակ կեանքի աղբիւրին:

Ինչպէ՞ս ըմբռնել սակայն այդ փոխադարձ յարաբերութիւնը Աստուծոյ և մարդուն: Ի՞նչ է նկարագիրը այդ տրամային: Անիկա խորագէտ կը յայտնուի Քրիստոնէութեան մէջ: Քրիստոնէութիւնը էապէս ծընունդն է Աստուծոյ՝ մարդոց մէջ, և փոխադարձաբար մարդուն՝ Աստուծոյ մէջ: Եւ ասիկա կը ձևացնէ հրա՛ Քրիստոնէական կրօնի խորհուրդին: Աստուած շարունակ կը ծնի մարդոց հոգեկան կեանքին մէջ, Անիկա նախաազդերն է պատմութեան: Բայց նոյնքան խոր է այդ պատմութիւնը, երբ իր մէջ ունի իբրեւ իրողութիւն՝ մարդուն ալ ծընունդը յԱստուծոյ, իրազործուած աստուածային կեանքին մէջ: Եթէ իրաւ է տե՛նը մարդուն առ Աստուած, նոյնքան արդար է նաև ընդունիլ աստուածային տե՛նը՝ առ մարդը, և հետևաբար՝ ծնունդը Աստուծոյ մարդուն մէջ: Եւ այս երկու շարժումները, մարդէն առ Աստուած և Աստուծոյ մարդն, կը կազմեն կեդրոնական խորհուրդները Քրիստոնէութեան: Եւ այս խորհուրդները կը միանան Քրիստոսի անձին, Աստուծոյ Որդւոյ մէջ: Քրիստոսի անձին մէջ միայն կարելի կը դառնայ Աստուծոյ և մարդուն փոխադարձ յարաբերութիւնը: Աստուծոյ ծնունդը մարդուն, և մարդուն՝ Աստուծոյ: Քրիստոսի ծնունդը մեր ժամանակին մէջ, պատմութիւնն է այս մեծախորհուրդ ընթացքին, որ իր լայն ազդեցութիւնը ունեցաւ մեր, մարդերուս, արտաքին պատմութեան վրայ: Այս իմաստով Քրիստոսի՝ աշխարհի բերած պատմութիւնը կ'ըլլայ ալ միայն յայտնութիւնը Աստուծոյ,

այլ նաև փոխադարձաբար մարդերու յայտնութիւնը, Աստուծոյ մէջ:

Երկու այս յայտնութիւնները սակայն էապէս կա՛մաւոր յայտնութիւններ են: Այդ երկուքը իրենց հիմը ունին ներքին աշատութեան խորհուրդին մէջ, Երկնային պատմութիւնը, Աստուծոյ ազատ կամքին յայտնութեանց գումարն է: Փոխադարձաբար, նոյն խորքով, մարդը իր ազատ կամքով կը յօրինէ իր պատմութիւնը այս երկրի վրայ: Առանց այդ ազատութեան անկարելի պիտի ըլլար ըմբռնել պատմութիւնը երկնքին և երկրին: Աստուած ժամանակներու սկիզբին, իր ներքին ազատ կամեցողութեան անսալով, յօրինեց և ոտեղծագործեց մեր տիեզերքը: Այդ տիեզերքին մէջ յայտնեց ինքզինքը, ուրիշ խօսքով երկրի վրայ փոխադրեց իր պատմութիւնը իր ազատ կամեցողութեամբ: Բայց ստեղծուած այդ աշխարհը, իր կարգին, կազմեց իր պատմութիւնը, լեցուն ողբերգութեամբ, և մեղքով: Անիկա եղաւ պատմութիւնը մարդերուն, մեղապարտ դէպքերու հանդիսարանը: Բայց այդ երկու ազատ կամեցողութեանց արդիւններուն մէջտեղ կը կանգնի Քաջելութիւնը Քրիստոսին: Քաջելութիւնը զիջումն է Աստուծոյ՝ մարդոց երկրային պատմութեան: Աստուծոյ կամաւոր այդ նախատինքը, անհրաժեշտութիւն էր, որպէսզի մարդիկ նոյնքան ինքնակամ յօժարութեամբ, փոխադրեն Աստուծոյ կեանքին մէջ, և անոր պատմութիւնը ընէին իրենց պատմութիւնը, երկրային պատմութեան վերջ:

Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը աւելի լուսաւոր կը դառնայ անոր կամաւոր խաչելութեամբը: Եւ մեր պատմութիւնը՝ կ'իմաստնանայ այդ կամաւոր զիջումով: Աստուած յայտնուեցաւ մեր պատմութեան մէջ, գերազայն առաքելութեան հաշտոյնը Հոն, յաղորդութեան համար անհրաժեշտ էր իրազործել զիջում մը: Եւ ասիկա եղաւ Քաջելութեան խորհուրդը: Հօս աւելի կը խորանայ պատմութիւնը երկնքէն եկած կեանքին: Այդ պատմութեան յայտնութիւնը, այս իմաստով, կարելի է ըմբռնել միայն Քրիստոսով, իբրեւ կառարեալ մարդ և Աստուած, և մասնաւոր կառարեալ միութիւնը անոնց: Քրիստոս, Աստուծոյ և մարդու Որդին, կը կանգնի եր-

կնային և երկրային պատմութեանց միջև: Ան է ներքին հոգեկան զոգը այդ երկու վիճակներուն: Առանց Քրիստոսի, գոյու-թեան պիտի չունենար կապը Աստուծոյ և մարդոց, երկնային և երկրային իրազոր-ծուցներու, այսինքն՝ պատմութեանց: Քրիստոսի ներկայութեամբ է որ գոյութեան կը բերուի պատմութիւնը: Քրիստոս է ամենախորհիւր և աղբիւրը պատմութեան: Աստուծոյ և մարդոց ուշերը իր մէջ է որ կը միանան իրարու, և իրմէ զուրս է որ կը բաժնուին իրարմէ: Այդ պատմութիւնը ժամանակ չունի այլևս: Անկալա յաւիտեանական լինելութիւնն է հոգիին, և անոր իրազործումներուն: Քրիստոսով հոգի բերուած պատմութիւնը գէպքերու շարաւարում չէ — ատկալա յատուկ է ժամանակի պատմութեան — այլ վիճակներու՝ գէպի Աստուած, գէպի կատարեալը՝ բարեշրջում մը:

Աստուած կ'իջնէ մեր պատմութեան մէջ: Զայն կ'առնէ իր մէջ, բայց չի ենթարկել իր անոր: Ուրիշ խօսքով Աստուծոյ՝ մեր պատմութեան էջը, խորապէս նպատակ ունի զայն ինքզինքին և իր պատմութեան վերածել: Ուրիշ խօսքով իրազործել մեր փրկութիւնը մեղքի կապանքներէն:

Աստուած ձեռն իր ինքնակամ փափաքովը մեր մէջ, մեզի պէս, որպէսզի մենք ալ մեր ինքնակամ մղումով ծնինք իր մէջ և ըլլանք իրեն նման: Աստուած իշաւ մեր պատմութեան մէջ, որպէսզի մեր կարելիութիւններով զմեզ փոխանորդէ իր կարելիութիւններով իրազործելի պատմութեան մէջ: Ժամանակէն՝ յաւիտեանականին, մեղքէն՝ սրբութեան, բազմաթիւէն՝ միութեան, աշխարհէն՝ երկնքին, այսինքն, իրեն տանելու համար զմեզ:

Աստուծոյ և մեր միջև խզուած էր կապը յարաբերութեան, զայն պէտք էր վերանորոգել: Այս է ճակատագիրը ճշմարիտ պատմութեան:

Ահա թէ ինչու պէտք մըն էր որ Քրիստոս մարգանարու ծնէր: Մտնէր մեր պատմութեան մէջ:

Խորհուրդ մեծ եւ անհշիլի որ յայսմ արուր յայնեցաւ...

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՐՈՆԱՊԱՏՄԱՆԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ
ՀԱՅՅԵՐԷՆ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգրապոյն սրբագրութիւններ. — Խո-րենացի երկրորդ թարգմանութեան պարագան յիշելէ անմիջապէս յետոյ կ'աւելցնէ հետեւեալ անպատշաճ տողերը. «Բայց քանզի անգէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մես-րոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լիզու պանծալի, ի ստոյգ յօգանալ ճեմարանին վերաբանութեան» (Գ. կա)։ Ի՞նչ ըսել կ'ուզէ մեր պատմահայրը: Խօսքը տանք Հ. Գ. Զարբանէլեանին⁽¹⁾. ԱՄուք են հայ պատմահօր այս խօսքերը, և ցարդ ոչ ստույգութեան հասկըցուած անոնց իմաստը, ուստի և հետեւաբար ենթադրութիւնք՝ կամ գուշակօրէն մեկնաբանութիւնք (էջ 227-228): Ապա կարգ մը խորհրդածութիւններէ յետոյ կը յարէ. «Անշուշտ Աղեքսանդրեան կոչուած գրչագիրն, և Որդիներայ՝ քառիշեան, վեցիշեան և Ութիշեան աստուածաշնչից համեմատական և բաղդատական երկասիրութիւնքն առանձին քննութեան և ուսումնասիրութեան նիւթ ընելու մտածութիւնն՝ իրենց վարդապետաց փափաքէն ու նպատակէն դուրս չէր: . . . Որդիներան (աստեղանիշ, բրգաձև) նշանադրաց՝ որ օրինակաց կամ թարգմանութեանց իրարմէ ունեցած տարբերութիւնն ցուցնելու համար՝ մեր ձեռագրաց մէջ ընդունուած և յաճախ գործածուած է՝ յայտնի նշանակ մը կրնայ համարուիլ թէ այս բաղդատութիւնն ու համեմատութիւնն եղած է մեր թարգմանութեան վրայ» (էջ 230-31): Դարձեալ շատ բան կ'ըսուի իր քննաբանութիւնը ան կը կրկնէ թէ Ս. Գրքը ուսումնասիրութեան և հայկական թարգմանութեան կատարելագործման նպատակով կատարած են թարգ-

(1) Մանեսագործուն Հայկական Թարգմանութեանց Նախնեաց (Գոր Գ-ԺԳ), Վենետիկ, 1889:

մանիչք այդ հեռաւոր ուղիգնացութիւնը, և կը վերջացնէ գրիւով. «Մեր թարգմանութեան՝ Աղեքսանդրեան կոչուած սուրբ գրոց օրինակին հետ ունեցած բազմապատիկ և բազմաթիւ համաձայնութիւնք և նմանութիւնք զայս կը հաստատեն» (էջ 234),

Այս կարծիքը յիշած է նաև, լուսանցքի ծանօթութեան մը մէջ, Լ. Ք. Զրաքեան (3)։

Տարբեր կարծիք մը, որ նուազ հաւանական կը թուի, յայտնած է այս մասին Լ. Վարդան Սոմաւնեան (3)։ Սիւլիէ յետոյ Ռորենացոյ խնդրական տեղիքը, կը հաստատէ թէ «այդ արուեստն՝ կարեւոր սուրբ գրոց թարգմանութեան՝ էր ըստ իս գիտութիւն նոցա վաւերականութեան և անվաւերականութեան, նախականութեան և երկրորդականութեան, զոր հիմնովին չունելով թարգմանիչք, չուզեցին յախուռն ամէն գիրք թարգմանել և զուր վաստակիլ. որով սի բազում մասանց թերացեալ» կը մնար մեր թարգմանութիւնը. . . . Ապա ուրեմն և սուրբ գրոց «թերացեալ մասունքն» յետոյ ևւ անոնցմէ թարգմանուեցան։ — Սորա ուրիշ հաւաստիք մ'է՛ յիշեալ մնացորդ գրոց ոմանց ապատ, և ո՛ր նման յառաջգոյն թարգմանուած գրոց՝ խղճամիտ թարգմանութիւն ինչին» (էջ 162, ծ.)։

Ե. Մ. Դուրեան (4) ուրիշ կերպով կը մեկնէ Ռորենացոյ յիշեալ տողերը, ատենց մէջ շօշափելով յաւակնութիւնը Սիւնեաց Վարդապետարանին, զոր իրեն յատուկ գալրոցական ըմբռնումով ու ոճով Ս. Գիրք մեկնելու և թարգմանութիւն ընելու հմտութիւնն ու արուեստը իրեն միայն կը սեպահականէր, ինքզինք հուշակելով «զուխ և հրամանատար» բոլոր հայ վարդապետներու, և իր այդ յաւակնութիւնը կ'ուզէր արդարացնել տա՛ հիմամբ՝ թէ Սահակ և Մեսրոպ իրեն վերապահած էին այդ բարձրագոյն հեղինակութիւնը (էջ 33)։

Ս. Գրիգ «Երբորդ» կամ «Նորաբեր» քաղամանսրիւնը. — Գալուստ Տէր Մկրտչու չեան Աբաբոյի 1908 տարուան Մայիս-Յունիսի թիւին մէջ յօդուած մը ունի «Տիմո-

րեոս Կուղի Հակաճառութեան Հայ Թարգմանութեան Ժամանակը եւ Սուրբ Գրիգ Սրբոց կամ «Նորաբեր» Հայ Թարգմանութիւնը» խորագրով (էջ 564-589)։ Այս ընդարձակ և հմտութեամբ լի յօդուածին վերջին մասին մէջ քննութեան առնուած են Թէոդորոս Գոթինաւորի «Ընդդէմ Մայրապետացոյն» ճառին այն հատուածները, ուր միջին քաջատրութիւններով ակնարկութիւններ կ'երևին «նորաբեր թարգմանութեանց» Գ. Տէր Մկրտչեանի կարծիքով «Նորապատում գրութիւն», «նորապատում շարագրութիւն», «նոր թարգմանութիւն», «նորաբեր թարգմանութիւնք» նշանակում են «մի երբորդ թարգմանութիւն, բոլորովին տարբեր Սահակ-Մեսրոպեան խմբագրութիւններէ»։ Նորաբեր բառը ցոյց է տալիս նաև, որ այս, ըստ իս երրորդ, թարգմանութիւնը չէ կատարուած ըսն երրորդ, այլ օտարութեան մէջ» (էջ 583). . . . «Այս նորաբեր» թարգմանութիւնից առ այժմ մեզ չատ ջրէ բան է յայտնի. 1. որ նա չունէր Կորնթ. երրորդ Թուղթը. 2. չունէր Դուկ. Թ. 43-44 տները, որոնք դուրս ձգուեցան յետոյ և հին թարգմանութեան՝ Զեռագիրներէ չատերից. և 3. մի տուն միայն ունինք զպառփուպէս այս թարգմանութիւնից, վերեւում մէջ բերուածը. «Ո՛ր աւարտուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի» (էջ 584)։ Զօդուածագրին կողմէ բանասէրներու ուղադրութեան յանձնուած այս «նորաբեր» կամ «երրորդ» թարգմանութեան վարկածին չուրջ քանի մը խօսք ըսել հոս աւելորդ չըլլայ թերեւս։

Կարգով առնենք այն երեք ծանօթութիւնները, զորս ունինք, ըստ Գ. Տէր Մկրտչեանի, այս երրորդ թարգմանութեան մասին.

1. — Որ նա չունէր Կորնթ. երրորդ Թուղթը. — Այս ժխտական ծանօթութիւնը ինքնին հաստատական փաստ մը չի ներկայացնէր Ս. Գրքի երրորդ հայ թարգմանութեան մը գոյութեան մասին։

2. — Զուեւէր Դուկ. Թ. 43-44 տները. — Ուրիշ ժխտական փաստ մը, որուն չենք կրնա արժէք մը տալ, մանաւանդ որ այս երկու համարները կը պակսին շատ մը հին ձեռագիրներու մէջ։

3. — Միակ. հաստատական վկայու-

(3) «Պրաքսիէ», Թաղմավեպ, 1899, էջ 462։

(3) «Կենսագիր եւ նկարագիր եգնիպ Վարդապետ Կողբացոյ», Թաղմավեպ, 1893, Ապրիլ։

(4) Պատմութիւն Հայ Մատենագրութեան, Երուսաղէմ, 1933։

թիւներ որ ունինք երրորդ թարգմանութեան մասին — մէկ կողմ թողով առ այժմ Տիմ. Կուզի Հակաճառութեան, յունաբան վկայութիւնները — սա է. «Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի» (Մարկ. Գ. 27):

Նախ կը հարցնենք թէ յիշատի «նորաբեր» թարգմանութեան կը պատկանի այս տունը թէ Քոթենաւորի գրչին. եթէ վերջինն է, ուրեմն «երրորդ» թարգմանութեան մասին միակ հաստատական վկայութիւնն ալ կը չքանայ: Մեր կարծիքով այդ մէջերումը յատուկ է Քոթենաւորին, որովհետեւ

1. — Մարկոսի յոյն բնագրին քարգմանութիւնը չէ՛ որ կը ներկայացնէ այն, այլ իմաստին ամփոփումը ի յիշողութենէ: Եթէ Մարգարմեցույ նոր թարգմանութեանէ մէջընթաց մը եղած ըլլար, պիտի ներկայանար աւելի ամբողջական ձևով:

2. — Քոթենաւորը նոյն թուղթին մէջ ուրիշ վկայութիւն մըն ալ ունի Ազաթան-գեղոսէն, նոյնպէս ի յիշողութենէ բերուած ինչպէս կը հետեւի բնագրին համաձայն չըլլալէն. — «Անորէն իշխանն իբրեւ աստուածանալն կամեցաւ, զամենայն ընդ մեղօք գրանեաց» (էջ 155): Մինչդեռ Ա. զամենագեղոսի մէջ կը կարդանք. «Անորէն իշխանն իբրեւ աստուածանալն կամեցաւ, ձեռն արկանէր և զամենայն մարդիկ մեղօք կապէր» (Վենետիկ, 1930, էջ 211, հատ. Գ. Ե.), որ քիչ տարբերութիւն ունի առաքելիին թուղթին ընթերցումէն. — «Իսկ որ անորէն իշխանն էր՝ իբրեւ աստուածանալ կամեցաւ, ձեռն արկանէր ի նոսա, եւ զամենայն մարդիկ մեղօք կապէր» (Գ. Կորնթ. Բ. 16, 17):

Այսպէս ուրեմն մեր առջեւ Քոթենաւորէն ընծայուած ոչ մէկ փաստ կը մնայ ի նպաստ «երրորդ» թարգմանութեան մը վարկածին:

Սորենացիի մէկ հաստուածը (Գ. 61), որ Մեսրոպեան թարգմանութիւնը թերի կը նկատէ, քննութեան առած ենք մեր ուսումնասիրութեան նախընթաց մէկ էջին վրայ:

Գալով Տիմոթէոսի Հակաճառութեան «տարօրինակ յունաբան եւ բազմաթիւ» վկայութիւններուն, անոնք Տիմոթէոսի թարգմանչին տեղւոյն վրայ իսկ կատարած

անկախ վերածուծներն են, և ոչ թէ «նորաբեր» թարգմանութենէ մը բառացի ընդօրինակութիւններ⁽⁵⁾:

Իբրեւ հզօրակացութիւն պէտք է ըսնեք որ մեր այժմ ունեցած տուեալները անբաւական են՝ գէթ իբր հիմնաւոր վարկած ընդունիլ տալու երրորդ թարգմանութեան մը գոյութեան ենթադրութիւնը:

Հայ թարգմանութեան գիտական արժեք. — Հայ թարգմանութիւնը, կատարուած ըլլալով գերազանցապէս յաջողակ թարգմանիչներու կողմէ, ճշգրտութեամբ կը ներկայացնէ իր նախատիպ յոյն բնագրեր, և հետեւաբար զգրեթէ նոյն արժէքը ունի մեզի համար, ինչ որ պիտի ունենար յոյն բնագրին ինքնին, որմէ կերտուեցաւ այնո կ'ըսէ Կոնիքի⁽⁶⁾, ոսկեդարեան զոյգ կտակարաններուն համար:

Ձարտանշիւան շատ բարձր կը գնահատէ մեր Աստուածաշունչին բանասիրական արժէքը՝ գրելով. «Հետաքննական և մեծապէս ընդունելի պիտի ըլլայ արեւմտեան բանասիրաց՝ հայկական թարգմանութեան» իրենց ծանօթ լեզուով մը փոխադրութեամբ հրատարակութիւնը: Եւ կը լարէ թէ, «Մեր վաստակատէր և բազմամուտ ծերունեաց մէջուն (Հ. Եղիա Վ. Թումանյան) այսպիսի երկասիրութիւն մը ի լատին՝ գեռ տպագրութեամբ լոյս տեսած չէ»⁽⁷⁾ (էջ 244):

Հանրածանօթ բացատրութիւն մը դարձած է «Թագուհի թարգմանութեանց» կուլուց, որով կը յորջորջուի Հայ Ս. Գիրքը: Այդ բացատրութեան հեղինակն է Վասիլէ

(5) Հ. Աճառեան, առանձին քննութեան մը ենթարկելով Կուզի կուլուցները, ցոյց տուած է որ Հակաճառութեան թարգմանիչը չէր օգտագործած հայերէնն ոչ մէկ Աւետարան, այլ իւրաքանչիւր անգամ յունարէնէ կրկին թարգմանած էր ընծայեալ տեղիքը. Տիմոթէոս Կուզ եւ Ս. Գրքի ճարտէր քարգմանութիւնը, Եփեսոս, 1913, Ա., էջ 1-22: (Տատիանի Համադարարանն եւ Հայ, Աւետարաններու Առաջին թարգմանութիւնը, Հ. Գ. Խապարեան, Վիեննա, 1937, էջ 97-98, յիշ.)

(6) «Arm. Version of the OT.», J. Hastings, Vol. I. 1900, էջ 152:

(7) Հոս կ'արժէ յիշել նաև որ Հ. Եղիա Թովմանեանն Աստուածաշունչի հայ թարգմանութիւնը բազմաթիւ անգամ է ուրիշ թարգմանութիւններէ և բնագրերէն բերու հետ և տարբերութիւնները ցուցակաբար, որոնցմէ կարճ բայց հետաքրքրական ցանկ մը ի լոյս հանած է Հ. Գ. Զ. Թագմավէպ հանդէսի մէջ (1851, էջ 235-237):

Լակրոզ, Բրուսիոյ թագաւորին խորհրդա-
կանը, որ Քլոտ Լանֆանին գրած մէկ նա-
մակին մէջ այսպէս կ'ըսէ. « Էջայերէն թարգ-
մանութիւն Աստուածաշունչ գրոց, որպէս
ինձ թուի, թագուհի է ամենայն թարգմա-
նութեանց, քանզի և բարբառ ճոխ է այն,
և բաւական՝ առ ի զամենայն իմաստս բնա-
գրին՝ լի է անթերի ընծայելով: Լակրոզ կը
շեշտէ հայ թարգմանութեան արժէքը՝ ա-
ւելցնելով. « Զայս եւեթ յիշատակել աստէն
ոչ դանդաղեցայց, եթէ մարթ իսկ է բազում
ուրիշ՝ զեթմանասնիցն հայերէն թարգմա-
նութեամբն ուղղագրել » (Յաղագս քարգմա-
նութեամբ Աստուածաշունչ օտուից ի հայ լե-
զու, Է. Գ. Զ., Բաշմէշ, 1851, էջ 234, 235):

Ուրեմն, կ'ըզրակացնենք, Աստուածա-
շունչի բնագրական քննադատութեան հա-
մար հայերէն թարգմանութիւնը կը գրաւէ
ուշագրաւ գիրք մը և կրնայ ընծայել ոչ
աննշան օժանդակութիւն մը Ս. Գրոց բնա-
գիրներու վերականգնութիւն ձգտող մեծ ու
կարեւոր աշխատանքին:

Հայ Թարգմանութեան ազգային աւ-
թեք. — Ամէն բանէ առաջ կ'ուզեմ շեշ-
տել որ Աստուածաշունչը անգրանիկ հայ
մատենան է, երախայրիք մեր տոհմային
գպրութեան: Հայ լեզուն առաջին անգամ
կը գրուի իր սեփական երկնայապարզ և քան-
չկոյ տառերով: Այդ սեփական լեզուն
ունի հարուստ հնչույթներ, նուրբ երանգ-
ներով, ճոխ քերականութիւն՝ որուն բարդ
կանոնները դեռ էն սառած սպիտակ էջե-
րու վրայ. փարթամ բառամթերք՝ անգին
կանծարան հայ մշակոյթի և քաղաքակըր-
թութեան: Հայ տաղանդաւոր ժողովուրդի
բարձր հանճարին այդ գերազանց ստեղծա-
գործութիւնը, իր լեզուն, զմայլելի կո-
թողի մը պէս կանգնուեցաւ յանկարծ՝ Աստ-
ուածաշունչի հայ թարգմանութեամբ: Բազ-
մաթիւ հայ գաւառաբարբառներու մէջէն
Սահակ — Մեսրոպի հանճարը ընտրեց ամենէն
զեղեցիկն ու առողջը և զայն բարձրացուց
զրական լեզուի մակարդակին: Աստուածա-
շունչի հայ թարգմանութիւնը շօշափելի ի-
րականութիւն մը դարձուց այդ մեծ ու
գծուարին գործը: Մեզի համար արեւ. պէս
այն կենսական դերը զոր կատարեց Հայ
Աստուածաշունչը: Հայ եկեղեցիին անկա-

ԳՐԱՆՔՆԵՆԱԳԱՏԱԿԱՆ

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐ

ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(1918 — 1943)

(ՔԱՂՈՒԱԾԱԲԱՐ)

Պէտք է ընդունել որ կայ Սովետ գրա-
կանութիւնը: Նախադասական և յետ-
յեղափոխական զրականութեան միջև ստոյգ
է շարունակութիւնը: Ռուս յեղափոխու-
թիւնը որ առաջագրեց վերանորոգել ըն-
կերութեան մաքուր մեքենականութիւնը,
ստեղծեց ընկերային և գեղագիտական նոր
արժէքներ, չըբաւ — չէր ալ կրնար —
յանկարգակի, և մանաւանդ ոչինչէն, ըս-
տեղ ծուլը իւրայատուկ գրականութեան
մը: Սկսելու համար անկա պարտաւոր էր
օգտագործել գոյութիւն ունեցող գրական
ձեւերը եւ՝ խմբակցութիւնները: Բայց Յե-
ղափոխութենէն ապին Ռուսիոյ մէջ գրա-
կանութեան պատմութիւնը, այդ երկրին
կարեւոր ու կենսական կերպարանքներէն
մէկն է, Համայնավար կառավարութեան
կողմէ վճռական ու գիտակից աշխատանքի
մը պատմութիւնը, — ստեղծել մասնաւոր-
եաւ սովետ գրականութիւն մը նախադեռալ
ծրագրի մը համաձայն:

Մեթոտ ու քաղաքականութիւն՝ այդ
նպատակը իրագործելու, պարզեցին փո-
փոխութիւն, ժամանակի ընթացքին, բայց
մնաց անփոփոխ, ինքը՝ նպատակը: Ինչպէս
ուրիշ մարզերու վրայ, համայնավարները
հոս ալ մերթ գործագրեցին ծանր ճնշում,
մերթ ալ իրենք գիրենք ստիպուած գզացին

խութեան հաստատուն խաբիսը եղաւ այն
դարուց ի դարս: Գ. Վ. Զարբանէշեան
Աստուածաշունչ Գրոց ի մեր լեզու փոխա-
գրութիւնը կը կոչէ իրաւամբ « մեր ազ-
գային եկեղեցական պատմութեան ու հայ-
կական գրականութեան ամենանշանաւոր
գէպքը » (էջ 57):

(4) ՆՈՐԱՅՐ ՎՐԴ. ԾՈՎԱԿԱՆ
ՎԵՐՋ

նահանջի և գիշերման: Ան որ կը զբաղի Սոցիալական գրականութեամբ, չի կրնար, գրական հարցերու մէջ, կառավարութեան քաղաքականութիւնը անտեսել: Մնայուն միջգործակցութիւն մը (interaction), ուրիշ, մէկ կողմէն՝ քաղաքական ուժերու, վերջ, հակակշիռն ու գրական շնչը և ասիական ենթարկելու իրենց բլանիւն. միւս կողմէն՝ գրական ձգտումներու, որոնք մերթ ի՛նչդ՝ վզին այս հակակշիռն դէմ ու մերթ կը ջանան իրենք գիրենք յարմար ընծայել այդ բլանին:

Երկու հիմնական կայաններ, ուրիշ, փոխանցման սա շրջանին: Առաջինը՝ 1917-ին մինչև 1921: Երկրորդ՝ գոյութիւն ունեցող գրական ձեւերու եւ աւանդութեանց քայքայման (որ իրականին մէջ թերեւս կը կանխէր առաջին մեծ պատերազմը): Նախայեղափոխական գրականութեան մէջ երկու դպրոցներ. — Իրապետներ և Խորհրդայիններ: Առաջինները՝ վերադարձներն էին ուսուցիչական և հոգեբանական վէպին՝ մեծ շրջանէն, որ Զեյնովի տակաւ կարճ պատմութեան ձեւին է վերածուած: Բայց խորհրդայնաշատ շարժումը այլապէս շահական էր ուսուցիչական մէջ: 1910-ին, ան կ'ընդգրկէր բովանդակ գրական ջանքը, այդ երկրին: Ան նորակերպած էր իր ոգին, քերթողական թէքնիկին մակարդակը բարձրացուցած, ազատագրած՝ գրականութիւնը ձգտումնապաշտ շղթաներէն ընկերային և քաղաքական հանգանակներուն, ու բնականութեան (naturalisme) նեղ նպատակներէն (1900-1912): Կարեւորը, ուսուցիչական գրականութեան մէջ չըլլալն էր անոր՝ զուտ գրական դպրոց մը, այլ՝ նորոգում մը գեղարվեստական և հոգեբանական լման հայեցակէտներու: Ան կը զուգահեռի անհատապաշտութեան ու կրօնական խտրաբարձի ամբարձումներուն: Թուս էմիգրացիայի աւանդական արժէքներուն մէկ վեր-գնահատումն է: Խորհրդայնաշատութիւնը կը մեղման, մօտաւորապէս 1912-ին, կրնանք ըսել ինքնասպառնումով, գլխաւորաբար ձգտելուն ըլլալ աւելի բան մը գրական դպրոցէ մը, — ըլլալու համար կրօնք մը: Զգուշ մը, խորհրդայնաշատներուն իսկ մէջ, աւելի մեծ իրապատկութիւն մը դէպի, բանաստեղծութիւնը աւելի մօտ բերելու կեանքին: Ասիական կը գտնենք արտայայտուած Այեքսանտր

Պլոքի գործին վերջին փուլին մէջ, — մեծագոյն քերթողը խորհրդայնաշատներու և առաջին թուր արդի ուսուցիչներուն: Երկու դպրոցները եկան առաջ, իր հակադրեցութիւն, խորհրդայնաշատներու իմաստասիրական և կրօնական նպատակներու ընդդէմ (Ալեքսիզով, Կոստին)՝ մօտ դասակարգութիւն: Իր օրակարգներէն մէկն էր գեղեցիկ յսակութիւնը: Կը ջանայ բառերուն հագցնել նոր միւս մը, իր միջոց մը, մեքիսմ մը՝ բանաստեղծութեան. գերազանցութիւնը չնորհել թանձրացեալ տրամաբանական տարրին, Բանին արհեստին մէջ, իր հակադրում մը թանձրուն, զուգորդական (associative), երաժշտական տարրին, որուն վրայ որոշ փառասիրանք էին գրեթե խորհրդայնաշատները: Թէև իր կարգ մը արտայայտութեանց մէջ ռոմանթիք, ան կը ձգտի յենդանուրն, դէպի մեծագոյն իրապատկութիւն ու պարզութիւն:

Միւս շարժումը որ ճակատ յարգարեց խորհրդայնաշատութեան դէմ ու նպաստեց անոր վերջնական քայքայման, ապագայապետութիւնն էր (futurisme): Թէև իր ծագման շրջանին իտալական Մարինիսթի շարժումին հետ ունէր հասարակաց եզրեր, ան իր ուսուցիչական շարժում մը առաւ իր աճումը: Ձեռն միատարր: Զուգորդական ժերազիր մը: Որոշակաւ ժառանգել էր ան: Առանց քաղաքական յեղափոխութեան աշխարհ պիտի վայելէր ժամանակաւոր իր յաղթանակը, — խնդրական կէտ մըն է: Այնպէս ինչպէս որ է, երկու ազգայններ կը գտնենք որոնք նպատակներ իր գաղնակցութեան թուսին նոր յեղափոխութեան գործութեան հետ: Աստեղծութեան առաջինը իրողութիւնն էր որ, Յեղափոխութեան ծագման ժամանակ, պոլշեփիկները գրականութեան մէջ յենլի ուժեր չունէին և հետեւաբար օգնութիւն փնտռեցին գրական ծայրայեղ ձախ մէջ: Երկրորդ իրողութիւնը անձնական հմայքն էր պաշտօնապաշտ վրատի միւս Մայակովսկիի: Մայակովսկի շրջանի ամենէն օտուտած ու հզօր քերթողն էր: Զուգորդականութիւնն ապագայապաշտութեան կարգ մը տեսական, վերացեալ նպատակներուն, կամ անոր-զգայնապատկան (trans-sense) բանաստեղծութեան մը փորձարկութիւններուն: Բայց գիտակ էր կա-

բեղիկներից զորս նոր կառավարությունը, իր գրական և գեղարուեստական պրոպագանդան մէջ, կ'ընծայէր զանգվածային հասարակական տիրույթները միմեկին հաւատարմութեամբ միմեկին յարգելով։ Այս ըմբռնումը իր ալ արուեստի ըմբռնումն էր։ Ան էր որ սոցիալիզմականացուց ապագայապաշտութիւնը, զայն վերածելով յեղափոխական պրոպագանդայի շէնքի մը։ Համայնավար Յեղափոխութեան սկզբնական շրջանին, ապագայապաշտութիւնը մօտէն կ'ապուստէր պրոպագանդայի արուեստին հետ։ Կը տիրէր գրական կեանքին։ Տեսակ մը գրական մենաշնորհ մըն էր։ Բանաստեղծութիւնը կը տիրապետէր գրական միջոցառումներուն վրայ։ Այս հանգամանքը մասամբ կուգար տեղական պայմաններէ։ Նկարչութիւնը դժուարացած էր։ Տպագրել գիրքերուն թիւը պակասած չափազանց։ Դրականութիւնը կը շարունակէր պարկի իր ունկնդրելի տեսանքներուն մէջ։ Հրատարակութեանց տեղը գրուած էին բերանացի *recitatives*։ Մոսկուայի բազմաթիւ «բանաստեղծներու» սրճարաններուն մէջ որոնք մենաշնորհ կը մնային ապագայապաշտութեան և իրենց՝ դանակիցներուն։ Վերջապէս իրենցն էր Ռուս գրականութեան։

Կառավարութիւնը, կ'ազդեալէր նաեւ համար ու զանգվածներով տարրոգ արուեստի այս ձևին առաւելութիւններն ու թերութիւնները կ'ընտելէր սակայն։ Պոլշեմիկները շատ լաւ գիտէին իրենց և ապագայապաշտութեան միջև նպատակներու տարբերութիւնը։ Իրենց սկզբնական շրջանին իսկ անոնք փորձեցին ստեղծել իրական գասակարգային արուեստ մը զորում ի սպաս պրոպագանդայի մենատիրութեան։ Ապագայապաշտութեան քաջակերելով հանգիստ առնելէ հիմնեցին պրոլետարիատը, այսինքն աշխատարանները պրոլետարական մշակութիւնը, ուր ոչ — համայնավար մասնագէտներ, գլխաւորաբար հին սերունդի քերթողներէն, կը մարդէին երիտասարդ ու խոստմնալից գրողներ, աշխատուող գրասկարգէն։ Սովետականութիւնը ուրեմն նոր ուղի գիծերու, որոնք ընկերութեան նոր կարգին մէջ յարմար ըլլային գրականութիւն մը ստեղծելու։

1921-ը վերջ կը գնէ ապագայապաշտութեան։ Բանաստեղծութեան նախադասութեան, արհեստականօքն պրոլետար գրականութիւն մը կառուարուող փորձերուն։ Մէկ

կողմէն կը վերջանար նաև Քաղաքացիական կռիւնը ու կը սկսէր Նեպոլ (նոր տնտեսական քաղաքականութիւնը, New Economic-Policy, որուն սկզբնատարները կուտան NEP)։ Այս վերջինը կեանքի բերաւ անհատական հրատարակչականներ, ոգևորեց գրականութիւնը և գրավաճառութիւնը ու ջանաց ստեղծել համեմատաբար աւելի մեծ ազատութիւն մը արուեստի գործին։ Նոյն ատեն, քաղաքացիական պատերազմին վախճանը դէպի խաղաղ կեանք դարձուց կարմիր բանակին երիտասարդ մարտիկ դերողները, մինչ պատերազմը ինքը հարուստ նիւթ էր հայթայթած գրական գործերու մէջ մարտիկ։ 1921—24-ը ուրեմն շրջանն է քաղաքացիական կռիւին։ Սովետ գրականութեան գլխաւոր թեման այդ թուականէն մինչև օրս, կը զաղկանայ այս նիւթէն։ Յեղափոխական նոր արձակը պիտի նկարագրէր յեղափոխութիւնը և սեւեռէր անոր իմաստը, նախաւոր կերպով՝ արձանագրել, պահել ապագային համար կատարուածը։ Երիտասարդ գրողները այս շրջանին յեղափոխութեան տարերային և ռումանթիք կողմերով է որ կը շահագրգռուէին։ Քաղաքացիական կռիւ, գուպարներ (guerrilla) Ռուսիոյ սահմաններուն վրայ։ 1921-ի Սովետ, թափառումները ու պատահարները ընդարձակ Ռուսիոյ ընդմէջէն — ահա թեմաները առաջին յեղափոխական արձակին։ Մատաղ գրողներ կ'աճապարէին իրենց փորձառութեան հարուստ թիւերը և սեւեռէր անոր չունենալով խնամեալ վէպին, լայն ծրագիրներուն։ Կարճ պատմութեան մը ձեւը, մանրամասն մը (անէքսոդ), առանց մանրամասն վերլուծման, յաճախ՝ քնարական պիրի բօնով մը, ու ահա տիրականը։ Պատմութեան կը տարուէր առաջ միեւնոյն ատեն բազմաթիւ բաններու վրայ։ Կառուցումը կ'ախորժէր երաժշտական թեմայէն, իր փոփոխմանէն, — տենդապին, անբնական, առաւելագոյն աստուած (diction)։

Քաղաքացիական կռիւին անգուլթ փորձառութիւնը սորվեցուց այս մատաղատի գրողներուն գիմնականը, անտարբեր ու աներկիւղ, ամենէն զարհուրագին տեսարանները, ու խօսքը, ամենէն բարասկիւլի բաներէն։ Այս եղանակին — ինքնակազմ և զարգացող — կը պատկանի Իվանովի Hollow Arabia գիրքը ուր անգլագած ձեւով

մը կը պատմուի անօթութենէն մարդակե-
րութեան մղուած գեղջութենեւ տառաման,
Արեւելեան Ռուսիոյ մէջ: Մէկը յատկա-
նիշներէն այդ շրջանի երեակայական գրա-
կանութեան՝ ան է որ հակառակ իր զօրա-
ւոր իրապաշտութեան, բառերը չմեղմելու
ուշագրաւ ձգտումին, ու իրականութիւնը
միայն նկարելու փափաքին, ունի գոյու-
թիւն անիրականութեան յստակ երակ մը,
երանգ մը: Այնքան քմայական էր եղած
կեանքը այդ օրերուն, զպէքերը՝ այնքան
անսպասելի, որ իրականին ընդմէջ սահմա-
նագիծը կը թուէր կորսուած, ու ամբող-
ջութեամբ իրապաշտ մնալ ուզելով հան-
դերձ, գրականութիւնը կը հասնէր քմայա-

կան արդիւնքներու: Կեանքը աւելի զօ-
րաւոր էր քան fictionը:

Զարդանկարային և ուժական այս աղ-
ջամղութիւններու արձակէն էր որ 1924-ին
ծնունդ առաւ Ընդամիայը: Անկէ սաղին Սո-
վետ Ռուսիոյ գրական ամենէն տիրական
սեռը՝ վէպն է կրնանք ըսել: Դժուար է
ժամանակագրութիւն բռնել յաջորդ տաս-
նամեակին համար: Արդիւնքը այնքան հըս-
կայական է որ հեղինակներու և գիրքերու
անունները միայն յիշատակել ամբողջ գիրք
մը լեցնել պիտի նշանակէր: Պէտք է գո-
հանալ ուրեմն հիմնականներէն հիմնական-
ներուն յիշատակումով:

ԿԼԷՊ ՍԹՐՈՒՎ

ԶԵԿՈՅՑ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՆ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ ՌԻՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Ի ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍԻՆ

Մայր Տաճարը, ներքուստ, բացի կեդրոնական մասէն, կը պահէ իր վերջին քա-
ռասնամեակի պարզունակ վիճակը — պատերն ու առաստաղը մերկացած իրենց նախկին
գեղարուեստական զարդանկարներէն և պատկերներէն: Կեդրոնին մէջ, կաթողիկէին
ներսը, չորս սիւններու կամարները և անոնց անկիւնները, կը պահեն տակաւին ԺԸ.
գարու ոսկեթուփ զարդանկարները և ծաղկումները: Անկէ մի քանի պատարիկներ կը
մնան առաստաղի զանազան մասերու վրայ, թափելու մօտ: Առաստաղէն կախուած են
բիւրեղեայ ելեկտրական ջահեր, իսկ կամարներէն արծաթեայ կանթեղներու շարան-
ներ: Իջման և Աւագ Սեղանները զարդարուած են ոսկեզօծ խաչերով, ճաճանչներով
և աշտանակներով: Ըստ սովորութեան, պատարագամատոյց սեղաններու վրայ մեղ-
րամօ կը գործածուի: Եկեղեցւոյ յատակը Աւագ Սեղանէն մինչև Իջման Սեղանի դասի
վանդակը ծածկուած է մեծ ու փոքր գորգերով: Կաթողիկոսական երկու գահերը իրենց
յատուկ օճով և Իջման Սեղանը իր կաթողիկէով կը կազմեն Մայր Տաճարի առանձ-
նայատուկ զարդն ու գեղեցկութիւնը: Մայր Տաճարի գանձատունը և զգեստուց պահա-
րանները կը մնան իրենց նախկին կարգ ու սարքին մէջ: Մասնաւոր խնամքով կը պահ-
ուին հին և թանկարժէք զգեստներն, անօթներն ու զարդերը, Վեհափառ Կաթողիկոսի
անմիջական հովանաւորութեան տակ: Այս մասէն զգեստ կամ անօթ կ'առնուի Եկեղե-
ցւոյ գործածութեան համար Վեհափառի մասնաւոր արտօնութեամբ և Լուսարարապետի
և Գանձատան Յանձնարտօմի ձեռքով: Գործածականները կը պահուին Աւագ Սեղանի
ձախակողմեան պահարանին մէջ: Հոն են նաև Միւռոնի չքեղ կթխան, Ս. Յակոբ
ՄԺՅՈյ Հայրապետի Աջը, Ս. Գեղարդը, Նոյեան Տապանի մասունքը և ուրիշ պատ-
մական նուիրական սրբութիւններ, որոնց ուխտի կուգայ ժողովուրդը, շարունակ և մեծ
ջերմեռանդութեամբ: Ամէն օր, մի քանի անգամ Տաճարի մուտքը կը բացուի ընդու-

ներու ուխտաւորներն և հետաքրքիր հիւրերը, որոնց մէջ մեծ թիւ կը կազմեն հայ և ռուս զինուորները, Ալլահովդմեան դասի պատին մէջ կառուցուած է Մկրտումեան աւազանը որ նորոգուած և աւելի նպատակայարմար կերպով ձեւաւորուած գտայ այս անգամ։ Ա. էլմիածնի աւազանին մէջ մկրտուիլը հայ հաւատացեալներու սրտին շատ մօտիկ ըլլալով՝ Ս. էլմիածնի քահանաները գրեթէ շարունակ պաշտամունքներու ժամերէն դուրս Մկրտութեան Ս. խորհուրդ կը կատարեն, հերթաբար։

Ամենօրեայ երկու պաշտամունքները և կիրակնօրեայ և ալ տօներու Ս. Պատարագները Մայր Տաճարի մէջ կը կատարուին անխափան, վանքի մէջ ապրող բոլոր եկեղեցականներու մասնակցութեամբ։ Ժամերգութեանց երգեցողութիւններուն կը մասնակցին մի քանի աշխարհական ձայնաւոր զաւրներ, փոխառացութիւնը հերթաբար կը կատարեն Վաղարշապատցի տաներկու ձայնաւոր պատանիներ։ Պատարագներու երգեցողութիւնը կը վարէ Արթ. Տ. Նիկոլ Բնյ., իր մարդած երգեցիկ խումբով։ Միաբան վարդապետներ և քահանաներ խումբով պատարագի կերթան էլմիածնէն դուրս գտնուող եկեղեցիներն ու պատմական սրբավայրերը՝ անոնց տօն օրերուն, Սրբոց Հոգիսիրմեանց և Գայրանեանց տօներուն անոնց նուիրուած տաճարները, Ս. Մեսրոպի և Թարգմանչաց տօներուն՝ Օշականի եկեղեցին, Պայծառակերպութեան տօնին՝ Գառնի և Գեղարքայ վանքի եկեղեցին և այլն։ Մայր Տաճարի բոլոր պաշտամունքներուն միշտ ներկայ կը գտնուի Ժողովուրդը մեծ կամ փոքր թուով, իրենց աշխատութեան ժամերու և արձակուրդներու համաձայն։ Տաճարի ներքին և արտաքին մասերու ամբողջական նորոգութիւնը Ազգային-Եկեղեցական Ժողովի հրատապ հարցերէն մին էր և պիտի ներկայացուի Ժողովի Քեկոյցին մէջ։

Վեհաբանը ամբողջութեամբ նորոգուած էր դուրսէն և ներսէն, բացի Մազկեայ Դանլիճէն, ուր կը գտնուի Կաթողիկոսական Գահը և քովի անձնական աշխատութեան ծաղկեայ սենեակէն և ննջարանին։ Նորոգուած էր ամբողջ կահաւորումը։ Պատերը զարդարուած էին կաթողիկոսներու իւզաներկ մեծադիր պատկերներով, պատուհաններէն կարուած էին վալեդուշ վարդաշուքներ, սրահներու և սենեակներու յատակները ծածկուած էին արժէքաւոր գորգերով։ Վեհաբանի մէջ կը գտնուէր նաև Կոմիտաս Վարդապետի երգեհոնը։

Վեհաբանի ընդարձակ, պտղաւետ և ծաղկաւետ պարտէզ-բանջարանոցը, որ միշտ խնամքի առարկայ է եղած իրբն Վեհաբանի առողջական պայմաններուն նպաստող ազդեցութիւնն էին, կատարելագործուած էր Տեղակալի յանձնարարած նոր մշակութիւններով՝ վկայեալ պարտիզպանի մը միջոցաւ որ զրկուած էր Երևանի բուսաբանական ինստիտուտին կողմէ։ Ի միջի այլոց գուրգուրանքով կը պահուէին Հանգուցեալ խորհրդակցութիւնի ձեռքով տնկուած և զարգացած տարեկան վարդենիները։

Այս գեղեցիկ պարտէզի հարաւային կողմը կը գտնուի վանքի թանգարանի մեծ շէնքը, կառուցուած իրիմեան Հայրիկի օրով։ Իր չորս համալսարհ սրահներով, պարզ շէնք մըն է, դժգոյսաբար ոչ բաւականաչափ լուսաւորուած։ Հարաւային երեսը կը նայի դէպի Ներսէսեան լիճը։ Պարտէզի հիւսիսային կողմի ռահմատապատէն անդին կը գտնուի Սինդոքի շէնքը, իր յատուկ ծառատանով, որ կ'երկարի մինչև վանքի արտաքին շէնքը։

Վեհաբանի հարաւային և հիւսիսային ծայրերէն կցուած են Ղազարապատի և Տրգատայ զրան յարկարաւորները, որոնց մէջ կը բնակին վանքի Միաբանութեան անդամները, Երկու շէնքերն ալ, իրենց բոլոր սենեակներով, նորոգուած և կահաւորուած էին։ Վաղարշապատէն դէպի արեւելք երկարող շէնքին մէջ էին վանքի ընդարձակ ճաշարանը, մառանը, մթերանոցները, շահմարանները, կառածը՝ ուր կը պահուէին Ամենապատիւ Տեղակալի անձնական գործածութեան յատկացուած ինքնաշարժը և վանքին բնականաբար մեծ ինքնաշարժը։

Այս երկար բերդամասն շէնքի վերջաւորութեան վրայ կը գտնուի տպարանը, իր յարակից շէնքերով։ Ասոնց մէջ պիտի կեդրոնացուին Մայր Աթոռի, վանքի և Ընծալ տարանի բոլոր տպագրական գործերը։

Տպարանի շէնքերու աջ կողմը կը բարձրանայ եռաթիւ նորաշէն Յպիսկոպոստանը, զարգարուն և վայելուչ շէնք մըն է ան առանձին յարկաբաժիններով և քնակարանի բոլոր յարմարութիւններով: Այս շէնքն ալ ունի իր առջևի ծառաստանը, որուն կեդրոնական ծառուղին կը տանի դէպի Մատենադարան:

Մատենադարանի շէնքը Էջմիածնի պարսպէն ներս կառուցուած շէնքերուն ամենէն սիրունն է, իր սրահազարդ ճակատով և մուտքով և հալկական ճարտարապետական ընդհանուր գիծերով: Գետնայարկին վրայ ունի ուրիշ յարկ մը, մեծ ու փոքր սենեակներով ու պատշգամբներով: Գետնայարկին վրայ կը գտնուին լուսուտը և օդասուն մեծ սրահներ: Այս շէնքը պիտի գործածուի Ընծայարանի համար: Սրահներէն մէկուն մէջ դասաւորուած անասնոց սաներու գրասեղաններն ու նստարանները, մահճակալներն ու անկողինները: Մատենադարանի և Եպիսկոպոստարանի հիւսիսային կողմը կը տարածուի փարթամ ծառաստան որ կ'երկարի մինչև Սինոզի և Նոր Վեհարանի շէնքերը: Ընծայարանը պիտի ունենայ երկու եռամիայ շրջաններ, առաջինը բարձրագոյն վարժարանի ծրագրով, երկրորդը՝ Աստուածաբանական:

Գէորգեան Ընծարանը որ արեւելեան պարսպէն դուրս կը գտնուի իր յարակից շէնքերով, այժմ կը գործածուի իբրև զինուորական ապաքինարան: Յառաջիկային վանքին պիտի տրամադրուի, երբ Ընծայարանը պէտք ունենայ: Ընծարանի հանդիպակաց մեծ շէնքը կը գործածուի իբրև գեղարուեստից և մշակութային կեդրոն:

Ներսէսեան Լիճը իր շրջակայ ծառուղիներով և մօտակայ անտառով, Էջմիածնի ամենահաճելի գրասպասարն է: Վեհարանի պարտէզէն անցնող մշտահոս առուն միշտ լեցուն կը պահէ զայն: Հարաւային կողմէն ունի ելք մը որ կը հաւատարակողէն մօտքը: Յաւելեալ ջուրը կը ջրէ անտառը և շրջակայ այգիներն ու պարտէզները: Լճին արևելեան կողմը կը գտնուի վանքին հիւրանոցը որ այժմ կը ծառայէ իբրև զինուորական հիւանդանոց:

Արեւմտեան պարսպէն ամիթպպէն դուրս կը գտնուի Նոր Վեհարանը որ ուղղակի դէպի Տաճար կը նայի: Աւարտելէն վերջ գծախտարար կարելի չէ եղած կահաւորել և գործածել, զլիսուորաբար անցեալ պատերազմին պատճառաւ, ու յետոյ անոր յաջորդող աննպաստ և ծանր դէպքերու: Հսկայ շէնք է ան և կահաւորուում և զգալականութիւնը պէտք պիտի ունենայ համապատասխան զուսմանքերու: Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի փափաքն է որ Մայր Տաճարի նորոգութեան զուգահեռ պիտի ալ բացուում: Իրեն յատուկ անկեղծութեամբ և Էջմիածնապետութեամբ կը խորհի թէ անկարելի է մտածել մարդոց ֆիզիքական հանգստի համար երբ մեր հողին Էջմիածնայ Տաճարին մէջ, Աստուծոյ ճան մէջ, կը տառապի, անոր տխուր կերպարանքը տեսնելով: Շէնքի մէկ մասը կը գործածուի իբրև զինուորական վարժարան:

Ո. Էջմիածնի պարսպապատ քառանկիւսն (275 մէթր լայն և 235 մէթր երկար) ներսն ու դուրսը տարածուած և զարգացած ծառաստաններն ու անտառները, վանականներու յարատեւ աշխատանքին մնայուն և զնահատելի արդիւնքներէն մին է: Յօշուելինք որ ներկայ Միաբնակներն իր նախորդներու նախանձախնդրութեամբ ներշնչուած և ոգևորուած անոց խտլանով, պիտի արդիւնաւորէ իրեն հասած փառաւոր այս ժառանգութիւնը, վանական կեանքի բոլոր մարգերուն մէջ — կրօնական, ուսումնական, գրական և շինարարական:

Յունիս 13-ին և 14-ին մասնակցեցանք եկեղեցականաց այն ժողովներուն որոնք տեղի ունեցան Վեհարանին մէջ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի նախագահութեամբ: Ներկայ էին կիրիկիոյ Վեհ. Հայրապետը, Եպիսկոպոսները և թեմակալ առաջնորդները: Խորհրդակցութեան նիւթ ծաղան Ազգ.-Եկեղեցական ժողովի օրակարգին վերաբերեալ խնդիրները:

Յունիս 15-ին առաւօտուն կիրիկիոյ Վեհ. Հայրապետի առաջնորդութեամբ բոլոր հոգևորական պատգամաւորներա ուխտի գացինք Ս. Գայիանէ կոյսին տաճարը և վերադարձանք Ներսէսեան լճով:

Ազգային-Եկեղեցական ժողով. — Յունիս 16, Շաբաթ օր, առաւօտեան ժամը

11-ին, Ս. Էլմիսանի Մատենադարանի շինքին մէջ տեղի ունեցաւ Ազգ. - Եկեղեցական ժողովի բացումը ի ներկայութեան Ամենայն Հայոց Ազգընտիր Տեղակալ Տ. Գեորգ Ս. Արքեպիսկոպոսի, Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոս Գարեգին Ա-ի, Երուսաղէմի Պատրիարքի, Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Միութեան և արտասահմանի բոլոր թեմերու հոգեւորական և աշխարհական պատգամաւորներու, ընդամենը 102 պատգամաւոր, 28ը հոգեւորական և 74ը՝ աշխարհական:

Բացման արարողութեան ներկայ էին նաեւ ՍՍՌ Միութեան Ժողովմասնակցին կից Հոգեւոր Պաշտամունքի Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլեանսկի և Խորհրդային Հայաստանի Ժողովմասնակցին կից Հոգեւոր Պաշտամունքի Խորհրդի նախագահ Սուրեն Ներսէսի Յովհաննէսեան:

Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի հրաւերով բացման աղօթքը արտասանեց Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը որուն յաջորդեց անմիջապէս Էլմիսանի ի Հօրէն շարականի երգեցողութիւնը Երեւանի Օբերայի մասնաւոր երգչախումբին կողմէ: Ամեն. Տեղակալը խոսեցաւ իր բացման ճանքը վեր հանելով Ազգ. - Եկեղեցական Ժողովի պատմական քառաթէքը, զրուստելով հայ ժողովուրդի կատարած դերը, հայրենակալի պատերազմի մէջ, Զորք արտայայտութիւններով ողջունեց Խորհրդային Միութեան ներկայացուցիչ Պ. Ի. Վ. Պոլեանսկի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Պ. Սուրեն Ներսէսի Յովհաննէսեանը, Հայաստանեայց Եկեղեցւոյ Աթոռներու ներկայացուցիչները և թեմակալ առաջնորդները և աշխարհական պատգամաւորները: Ի պատասխան խօսք առին Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը և Խորհրդային Միութեան և Հայաստանի Կառավարութեան ներկայացուցիչները: (Տե՛ս Վիճի-Միացեալ նախորդ թիւերը, 5-8):

Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի առաջարկութեամբ ժողովը հեռագրաւ իր յարգանքն ու երախտագիտութիւնը ներկայացուց ՍՍՌ Միութեան Մեծ Մարաշխա Ստալինին:

Ժողովը, անցնելով իր օրակարգին, կատարեց նախագահութեան, Ատենապետութեան և Բարաուդարութեան ընտրութիւնները: Նախագահութիւնը յանձնուեցաւ Ամեն. Տեղակալ Սրբազանին, Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին և Երուսաղէմի Պատրիարքին: Ատենապետ ընտրուեցան Տիար Աւետիք Խաւակեան, Ակադեմիկոս Ստեփան Մալխասեան, Վահմ. Ծանիկ Ջազըր, Տիար Հայկ Գալուզեան և Տիար Ռոմանոս Իսախան: Բարաուդար ընտրուեցան Տ. Գրիգոր Մ. Վրդ. Կարապետեան, Տ. Սահակ Ա. Բենյ. Սահակեան, Տ. Վահան Բենյ. Թաժարեկեան և Տիար Առաքել Եղաբեան: Մանդաւային Յանձնաժողովի անդամք ընտրուեցան Գեր. Տ. Արտաւազգ Արքեպիսկոպոս (Նախագահ), Տ. Ջազգէն Վրդ. Պալեան, Տքտ. Արմենակ Աղաջանեան և Տիար Սեդրակ Բարաեան:

Այս ընտրութիւններէն յետոյ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանի հրաւերով Ժողովը իր ամբողջ կազմով Մայր Տաճար դնաց ներկայ գտնուելու Հանգուեցաւ Խորէն Վեհափառ Կաթողիկոսի Հոգեհանգստեան Պատարագին որ կը մատուցուէր Իման Սեղանի վրայ: Պատարագիչն էր Գեր. Տ. Մամբրէ Եպիսկոպոս որ և քարոզեց, բնաբան ունենալով «Հովիւ քաջ գանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Պատարագին ներկայ էր Գանդըրպրի Աւագ Երէց Հիւլիթ Զօնսըն որ ներկայանալով Ամենապատիւ Տեղակալին Ազգային - Եկեղեցական Ժողովի գումարումը շնորհաւորեց: Ս. Պատարագէն վերջ տեղի ունեցան նաեւ Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն և գերեզմանի այցելութիւն ի Ս. Գալիկանէ: Յաջորդ օր՝ Կիրակի, Ս. Պատարագ մատուցուեցաւ Աւագ Սեղանի վրայ, ժամարարութեամբ Գեր. Տ. Արտաւազգ Սրբազանի: Կ'երգէր Օբերայի խումբը:

Սրկորդգ հիստին, որ տեղի ունեցաւ Յունիս 18-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ատենապետութեամբ Ակադեմիկոս Տիար Աւետիք Խաւակեանի: Կարդացուեցաւ Խորհ. Պետութեան Ժողովմասնակցի նախագահ Մարաշխա Յ. Ի. Ստալինի ներկայացուելիք յարգանքի և երախտագիտութեան հեռագիրը: Յետոյ, Ամեն. Տեղակալ Սրբազանը կարդաց իր զեկուցումը 1941-45 տարիներու Մայր Աթոռի գործունէութեան մասին: Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը յանուն Ազգ. - Եկեղեցական Ժողովին գումանակութիւն յայտ-

նեց Ամին՝ Տեղակալ Սրբազանի խոհուն, զգոյշ և իմաստուն գործունէութեան համար, Կարդացուեցաւ նաեւ Ամին. Տեղակալ Սրբազանի այն յուշագիրը որ մատուցուած էր Մեծ Մարաշխատին Ս. Էլմիածին անհրաժեշտ կարգներու մասին: Ընթերցումէն վերջ Ժողովին ցոյց տրուեցան Մեծ Մարաշխատին հաւանութեան մակագրութիւնը և ստորագրութիւնը զոր հաճած էր զնել յուշագրի ճակտին: Ժողովը յօտենկայս և ծափահարութեամբ իր խորին յարգանքն ու մեծ երախտագիտութիւնը յայտնեց: Ժողովը իր երախտագիտութիւնը և յարգանքը յայտնեց նոյնպէս Հայաստանի խորհրդային Կառավարութեան:

Ժողովը այնուհետեւ զբաղեցաւ Ակադեմիկոս Ստեփան Մալխասեանի բերած խնդրով ըստ որում կ'առաջարկուէր Ազգովին տօնելու Մայր Աթոռի փոխադրութիւնը Կիւրիկիայէն Էլմիածին: Խնդրոյն վերջնական կարգադրութիւնը յետաձգուեցաւ յաջորդ Ժողովին որ տեղի ունեցաւ յաջորդ օր Յունիս 19-ին: Ատենապետութեամբ Պ. Իսահակեանի և Զանկի Զազըրի, Ատենապետը կարգաց պատճէնը այն հեռագրին որ յանուն Ժողովը պիտի ջարդուէր Հայաստանի խորհրդային Կառավարութեան: Հեռագիրը ընդունուեցաւ ծափահարութեամբ:

Ժողովը անցաւ Եկեղեցւոյ Սահմանադրութեան նախագծի քննութեան, սակայն Ամինապետի Տեղակալի առաջարկութեամբ յետաձգեց այդ աշխատանքը յաջորդ նիստերուն, որպէսզի բոլոր պատգամաւորները անձամբ ուսումնասիրելու պատենութիւնը ունենան:

Ամին. Տեղակալ Սրբազանը մանրամասն տեղեկութիւններ և լուսաբանութիւններ տուաւ Հոգեւոր Զեմարանի ծրագրի և ծախուց մասին: Կարդացուեցաւ ծախուց նախաւորէր, որ կը հասնէր 1.150.000 օուրիքի: Առաջարկուեցաւ կազմել պիւտճէի Յանձնարարութիւնը, Զեմարանի և Վանքի պիւտճէի կազմութեանը զբաղելու:

Ժողովը յետոյ լսելով Կիւրիկիոյ Վեհ. Կաթողիկոսի կազմած բանաձևը Մայր Աթոռի Կիւրիկիայէն Էլմիածին փոխադրելու տնտեսականութեան մասին, որոշեց 1945-46 տարին հաւակել Երեւանի Զարկ պատմական այդ դէպքը և անոր յաջորդող Մայր Աթոռի 500 ամեայ գործունէութիւնը արժանաւորապէս գնահատելու, յիշելով այս առթիւ Կիւրիկիոյ, Երեւանի ընթացքին:

Ժողովը իր չորրորդ նիստին մէջ Ատենապետութեամբ Տիար Հայկ Գալուսեանի և ի ներկայութեան 104 պատգամաւորներու (31 հոգեւորական և 73 աշխարհական) կազմեց Պիւտճէի Մասնաժողովը: Ատենապետը Ժողովին յայտարարեց թէ Տիար Մկրտիչ Մարեան յանձն առած էր Մայր Աթոռին նուիրելու տպարանական ամբողջ նոր սարուածք մը: Ժողովը ընդունեց այս նուիրատուութիւնը ծափահարութեամբ: Այնուհետեւ Ժողովը զբաղեցաւ Ընծայարանի սաներու որդեգրութեան հարցով: 42 սաներ որդեգրուեցան հետեւեալներէն. Նիւ-Իօքթի թեմ՝ 10, Գալիֆօրնիոյ թեմ՝ 10, Վրաստանի թեմ՝ 6, Իրան-Հնդկաստանի թեմ՝ 4, Տիար Հայկ Գալուսեանի թեմ՝ 3, Վանք, Զանկի Զազըր՝ 2, Ատրպատականի թեմ՝ 1, Եգեմի թեմ՝ 1, Գեք. Արմաւազի Սրբազան՝ 1, Ակադեմիկոս Մալխասեան՝ 1, Մկրտիչ Մարեան՝ 1, Իօսէյն Փափաղեան՝ 1, և Կարապետ Սարեան՝ 1: Որդեգրողները յանձն առին իրենց որդեգրեալին համար վճարել 6 տարի, տարեկան 500 տուարի հաշւով: Ժողովը Ընծայարանի համար անհրաժեշտ տեսաւ նաեւ Մատենադարան մը որ բովանդակէր կրօնական և եկեղեցական գիրքեր: Մայր Աթոռի պահպանման համար որդեգրուեցաւ, «Լուսաւորչի Լուսմայ» ի տուրքի գրութիւնը:

Ժողովը այս նիստին մէջ մեծ կարեւորութեամբ զբաղեցաւ նաեւ Մայր Տաճարի նորոգութեան հարցով: Որոշուեցաւ ամէն զնով ի գլուխ հանել այս անյետաձգելի ազգային նուիրական պարտականութիւնը:

Այս նիստին, Կերաբար, ներկայ կը գտնուէր Գանձըրպրիի Աւագբեք՝ Գեքյարեւի Տոքը. Հիւլիէթ Զոնսըն: Նախագահութեան փափաքով Ատենապետը առաջարկեց Ժողովի կողմէ շնորհակալութիւն յայտնել բարձրատիճան հիւրին, իր ազնիւ հետաքրքրութեան և ուշադրութեան համար: Տոքը. Զոնսըն պատասխանեց Ատենապետի

խօսքին զգայուն ճառով մը։ Ամեն. Տեղակալ Սրբազանը գնահատելով յայտնուած զգացումները խոստացաւ գեղեցիկ հոգեւոր նուէրով յաւերժացնել անոր այցելութիւնը։

Երեկոյին, Մայր Տաճարի մէջ, Թարգմանչաց տօնին առթիւ Նախատօնակ կա- տարուեցաւ։ Ժողովը, իր հինգերորդ նիստին, ունկնդրեց Պիւտճէի Մասնաժողովի տե- ղեկագիրը, ըստ որում, կը շարատարաւորուէր թէ միաձայնութեամբ համաձայն էին որ հարիւրին 5 տոկոսի տուրքի խնդիրը, յանձնուի նորընտիր Հայրապետին տնօրինելու ըստ իւր հայացակէտին։ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանը խոստացաւ յաջորդ նիստին լուսաբանութիւններ տալ պիւտճէի մասին։ Մանդատային Յանձնաժողովի Նախագահ Գեոր. Տ. Արտաւազդ Սրբազան, կարգաց պատգամաւորներու անուանացանկը վեր- ճըլդուեցան կատարելու համար, և յայտարարեց որ ներկայ պատգամաւորներու թիւը 106-ի հասած էր։

Մայր Տաճարի վերանորոգութեան հարցին նկատմամբ Ժողովը Ակադեմիկոս Մալ- խասեանի առաջարկութեամբ որոշեց կազմել Նախագիծ — Նախահաշիւ մը ձեռնարկու ան- ձերնա անկացութեամբ։ Ժողովը, յետոյ, լսելով Եկեղեցւոյ Սահմանադրութեան Նախա- գծի մասին Տեղակալ Սրբազանի բաւարար բացատրութիւնները, միաձայնութեամբ հա- մամիտ գտնուեցաւ որ անոր քննարկութիւնը կատարուի յաջորդ նիստին։

Այդ նիստին որ տեղի ունեցաւ Ատենապետութեամբ Վսեմ. Զանիկ Զազըրի, Ժո- ղովը իր օրակարգի գլխաւոր խնդրոց դառնալով կանոնաւորութեան համար որոշեց պիւտճէի հացը վերջացնելէ յետոյ անմիջապէս կատարել Հայրապետական ընտրու- թիւնը, իսկ Եկեղեցւոյ Սահմանադրութեան քննութիւնն ու վաւերացումը կատարել ընտրութիւնէն յետոյ։

Ըստ այդ որոշման, Ամեն. Տեղակալ Սրբազանի հրահանգով Գեոր. Տ. Ռուբէն Մ. Վրդ. Դրամբեան, կարգաց 1945—46 տարեշրջանի Մայր Աթոռոյ և Ս. Էջմիածնի Միա- բանութեան պիւտճէն իր բոլոր մանրամասնութիւններով, որոնց գումարը կը հասնէր 2.100.000 ռուբլիի։ Ամեն. Տեղակալ Սրբազանը Ժողովին տուաւ բացատրութիւններ և լուսաբանութիւններ թէ՛ պիւտճէի մասին, և թէ՛ եկամտից աղբիւրներու մասին։ Ժո- ղովը ընդունելով ներկայացուած տեղեկութիւնները՝ որոշեց պիւտճէն դրոցել, սահման- ուելիք տուրքին վրայ աւելցնելով «Լուսաւորչի Լուսմա»ն։

Ժողովը յետոյ դարձաւ իր օրակարգի յաջորդ կէտին և որոշեց այդ օր երեկոյեան ժամը 3.30-ին կատարել Հայրապետական ընտրութիւնը Մայր Տաճարին մէջ։

(Տե՛ս Սիոն-ի միացեալ Նախորդ թիւերը, 5—8)։

Ազգ. — Եկեղեցական Ժողովի վերջին նիստը տեղի ունեցաւ Յունիս 25-ին, Նա- խագահութեամբ Ն. Ս. Օձուքեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Զ. ի, և Ատենապետութեամբ Ակադեմիկոս Աւետիք Իսահակեանի։ Ժողովը անցաւ Եկեղեցւոյ Սահմանադրութեան քննութեան և վաւերացման։ Կարգացուեցաւ Սահմանադրութիւնը։ Եղած դիտողութիւններուն տրուեցան բաւարար լուսաբանութիւններ։ Ժողովը ընդու- նեց զայն այնպէս ինչպէս ներկայացուած էր — իբրեւ Նախագիծ և ոչ վերջնական բնոյթ ունեցող օրէնք։ Կոնգակաւ զրկուելէ յետոյ և գործնական բովէ անցնելէ վերջ անիկա պիտի խմբագրուի վերջնականապէս և պիտի հաստատուի Ազգ. — Եկեղեցական Ժողովի կողմէ։

Ժողովը կազմեց Գեորգոյն Հոգեւոր Խորհուրդը հետեւեալ հոգեւորական և աշխար- հական անդամներէ։ Տ. Ռուբէն Մ. Վրդ. Դրամբեան (այժմ Եպիսկոպոս), Տ. Վահան Մ. Վրդ. Կոստանեան (այժմ Եպս.), Տ. Ներսէս Մ. Վրդ. Աբրահամեան (այժմ Եպս.), Տ. Կարապետ Մ. Վրդ. Թուսանեան (այժմ Եպս.), և Տ. Եղիշէ Վրդ. Յարութիւնեան, Ակադեմիկոս Ստեփան Մալխասեան, Երուանդ Շահազիզ, Բրօֆ. Մինասեան և Ստեփան Կամսարական։

Եկեղեցւոյ Բարեկարգութեան հարցին նկատմամբ եղած հարցումին ի պատասխան Ամեն. Տեղակալ Սրբազանը վերստին յայտարարեց թէ Ժամանակի ողութեան և այլ պատճառներով Ժողովը հնարաւորութիւն պիտի չունենար զբաղելու այդ հարցով։ (2)

ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՒՐԸ

Ամայն է շէկ, փոշի, աւազ,
Աչրներուս,
Ըսես դարերն են աղացուե
Դարձե մոխիր,
Շինեք կաշին բըլուրներու,
Ջըլացուեցաւ որոնց ընդմիջ,
Համբոյրն ծաղկին, դողը խոսին,
Որոնց ըլլաւ յաւեթ մերժուած
Աչքն աղբիւրին:

Դուն աղբերակն իմ հայրենի,
Ինչպէ՞ս կուգաս
Թեւին վըրայ հին հէքեաթին,
Ջիս գրսնելու ամայներուն
Այս աննոգի,
Ինծի տալու կաթիլը սուրբ
Աղամանդիդ:

Դեռ հոն ես դուն,
Արծաթ կոկորդը մեր լեռան,
Շունչն անըստառ գեղակայլակ
Մեր դաւեսերուն:

Դեռ հոն ես դուն,
Խորն հանգոյցին ճամբաներու,
Դիւղին, հօսին, մըշակներու,
Թերեւս միմակ,
Մեր աշխարհի արեւին տակ
Մանեակ, մանեակ,
Կը տողանցես քու ալեակներդ,
Կամ կը վազես արօտն ի վար,
Փայլակելով ծիլ ու ծաղիկ,
Հայլիներուն մէջ քու կախարդ:

Իմ հայրենի քաղցր աղբերակ,
Խիղճն իմ գիւղին,
Կ'երկննային կոնակ, կոնակ,
Բազուկներ զոյգ քու ջուրերուդ,

Լեռնէն իջնող հօսին ծառաւ,
Եւ հարսերուն՝
Պասկերն որոնց հէքեաթ մ'ինչպէս
Տես կը ցոլան ջուրերուդ մէջ,
Երբ կը լեցնեն փարջերն իրենց,
Կարկաջն որոնց
Ծառաւ մ'է ճոր:

Սափորն ուսած կը հեռանան
Հարսերն աղուոր,
Բայց կը մընար
Պասկերն իրենց շրջաւ, շրջաւ,
Տեսիլ մ'ինչպէս հին օրերու
Ջուրիդ վըրան:

Երբ երկարէր բարձրներու
Շուն անսահման,
Հովիւ տըղան,
Մերից արինգ կ'ուղակէր
Բոցն իր սրբին.
Մինչ արեւը հորիզոնին,
Ինչպէս մաւած ոսկեդրամ
Լեռնէն անդին կ'իյնար քաւալ:

Ու հեռաւոր ձորերուն մէջ,
Եղնիկները սիրահարուած,
Ջուրիդ մէջէն կը խըմէին
Մեղրը ձայնին,
Որ կը բացուի ընդերքներէն
Այս աշխարհին,
Փըշուելու խորն անգանդին
Երկիններուն:

Իմ հայրենի քաղցր աղբերակ,
Կը յիշես դուն,
Խաղէն յոգնած երբ կուգայի
Քու ջուրերուդ,
Հուրն անցնելու իմ այսերուն,

Վազգէն առած բոցը մասադ
Արիւններուն:

Եւ այժ աչի կը մընայինք
Մենք իրարու:
Սիրէդ՝ խուրձ, խուրձ,
Բըխէր շուշան,
Բըխէր բենեզն եօթնարփենի,
Երիզ, երիզ, պասրոյզ, պասրոյզ,

Եւ ծով առ ծով,
Ծոցդ ընելով արեւներու
Վառ առագաստ:

Իմ հայրենի քաղցր աղբերակ,
Տո՛ւր ինձի ես
Պատկերը քառմ իմ մանկութեան,
Որ օր մ'իմկաւ
Ծոցդ ազամանդ:(")

ԵՂԻՎԱՐԴ

(*) Քերթուած մը Եղիվարդի տակաւին նոր հրատարակուած «Անցորդ» հատերէն:

ԱԶՔԵՐՈՎ ՄԵՍ ՈՒ ՏՐՏՈՒՄ...

Աչքերով մեծ ու օրհուսմ, ու ժըպիտովն իր ֆողեալ,
Զայն ես տեսայ, անգամ մը, ու չըկրցայ ա՛լ մոռնալ.
Ապա, նորէն տեսայ զայն ու խօսեցայ իսկ իրեն
Քանի մը բառ բարեկամ... ու, գուտակեց զիս արդէն

Կ'ուզեմ ընկերն իր ըլլալ, իր մեծ ցաւին ապաւէն.
Ոչ թէ մոռցնել տալու զայն, այլ բառերով ընտանի,
Վարժեցընել զինքն անոր, տակաւ սիրցնել իսկ իրեն.
Անով՝ ընել զինքն հըրպա՛րս, ընել անով՝ զայն ա՛րի.

Ըլլալ ընկերն այդ միայն... ու, խընամփիս իմ փոխան,
Երախտապարս թէ ըլլայ, կամ թէ ըզգայ քիչ մը սէր,
Պիտի ոչինչ ուզէի, ուրիշ ոչինչ ա՛լ տարբեր:

Զի՛ ահմարկին իր ներքեւ, ու ժըպիտին հանդիման,
Ի լուր ձայնին իր գգուող ու ծիծաղի՛ն իր ի տես,
Պիտի հոգիս իմ շէննա՛ր, գարնան՝ երկի՛նք մը որպէս:

Ն. ԿԱՏԱՐ

ԻՄ ԱՍՏՂԻՆ

Ու դուն գիւե՛ր Պաղտատի, Փետրուարի աստղին տակ.

Երեսիդ մութն է նստեր, հէփաթ նայումսդ յըսակ
Մոռցընելու չափ բեզմէ, զի ցերեկին, հովը տափ
Թեւն իր ամուլ՝ տարածել ուզեց փռով, խորհակով.
Դուն ա՛մպ, անձե՛ն, պատմունա՛ն, սուտին, մեղկին դէմ խրոով...:

Դո՛ւն՝ մե՛րկ գիւե՛ր, կը սիրես կըծու քամին, գորովով,
Ամբան ու ծոյլ յօրանջին որ նըւաղի աղը ծով,
Բջիջներուն մէջ մարդոց որ նստի սերմը առողջ՝
Անկեղծութեան ու գեղի, ուր բանա՛ս դուն սիրեց ամբողջ...:

Դի՛ւե՛ր, աչերդ այն ասեմ յըսա՛կ՝ ու ի՛նչ գորովոս...
Քիչե՛ր սակայն դուրս ելլող՝ ուժ ու գեղիդ գալու մօտ:
Ու տրտման, աստղերուդ հուրքն ամպերուն ընդմէջէն

Կախած՝ թախծորդ իբրեւ, նորէն — գարուն արեւէն
Մշտնորոգ հըրապոյր հագնող պարման զոյլու պէս —
Արեւներու հովին մէջ ծաղկըւորիլ դուն կ'ուզես...:

Քո՛ւ աստղին հետ, ո՛վ գիւե՛ր, ըսին զիս մայրս է ծըներ...:

1946 Պաղտատ

ՇէՆ - ՄԱՀ



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ

ՎԱՐԿԱԾԻՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԵՐՈՒ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Գիտութիւն մը ուրիշէ մը կը տարբերի իրեն յատուկ նիւթովն ու մէթոտովը: Բնական գիտութիւններու նիւթը անկեանք գոյութիւնն է ու անոր մէթոտը փորձառական մէթոտն է: Փորձառական մէթոտին մէջ եւրեք էական պահեր կան. ա) — Զննութիւնը, բ) — Թելագրութիւնը, եւ գ) — Ստուգումը, Առաջինով՝ մեր ուշադրութեան առարկայ կը դարձանք մեր ուսումնասիրելիք եղելութիւնները. երկրորդով՝ կը յղանանք գաղափար մը որու միջոցաւ պիտի ջանանք բացատրել զանոնք: Երրորդով՝ փորձի կ'ենթարկենք մեր վարկածը, ճշգրիտ համար անոր արժէքը իբր իրաւ կամ սուտ:

Յստակ ու համառօտ կերպով արտայայտելու համար մեր գաղափարը այս երեքին յարաբերութեան մասին, ըսենք՝ որ եղելութիւնը կը թելագրէ գաղափարը կամ վարկածը, վարկածը կը վարէ փորձը կամ փորձարկութիւնը եւ վերջապէս այս վերջինն ալ կը գիտէ ու կը գտնէ վարկածը: Բնական գիտութիւններու մէջ, գաղափարին ու եղելութիւններուն զերը ճշգրտաւնապարզ բանաձեւն է ասիկա, ուր որոշապէս կը ցուցուի որ եթէ վարկածը եղելութիւններուն կուտայ իրենց նշանակութիւնը, եղելութիւններն ալ իրենց կարգին գաղափարին կը հայթայթեն իր հակակշիռը եւ կ'որոշեն իր արժէքը: Բայց գաղափարին ու եղելութիւններուն այս սերտ գործակցութիւնը չէ հասկցուած եւ զործարկուած միշտ գիտուններու կողմէ: Անոնցմէ ոմանք գաղափարին տուած են ուրոյն արժէք մը, եւ փորձարկութենէն անկախաբար, մինչ ուրիշներ յաւանքած են ձեռքադատիլ անկէ բոլորովին, նկատի ունենալու համար միայն եղելութիւնները: Ահաւաստիկ այս կերպով է որ յառաջ եկած են երկու անհարապատ մէթոտներ, վարկածական եւ փորձականը, որոնք մեծապէս զանազանացուցած են բնական գիտութիւններու յառաջխաղացքը:

Ասոնցմէ 'առաջինը' վարկածական մէթոտը՝ կը յատկանշուի եղելութիւններու հանդէպ ունեցած իր մոռացումով, եւ վարկածին զեղծական գործածութեամբ. իսկ երկրորդը՝ փորձական մէթոտը՝ կը յատկանշուի վարկածին մերժումով, եւ եղելութիւններու նկատմամբ ունեցած իր այլա-մերժ փոյթով:

Արդ, նկատի ունենանք զանոնք անշատաբար, իւրաքանչիւրին պարագային ցոյց տալու համար միւսին կարեւորութիւնը, եւ ապա փորձառական մէթոտին մէջ հաշտեցնենք զիրենք:

Ա. Եղելութեանց կարեւորութիւնը. — վարկածական մէթոտին հերքումը. —

1. — Անշուշտ անուրանալի է որ գաղափարը մեծ գեր ունի գիտական ամէն գիւտի մէջ. անիկա հարցումի մը պէս է զոր գիտունը կ'ուզէ բնութեան. բայց ասիկա տակաւին կէս մասն է միայն գիտութեան. բնութեան եղած այս հարցումին պատասխան մը կ'ուզուի, եւ այդ պատասխանը, ասիկայն, բնութիւնը մեզի կուտայ միայն եղելութիւններու միջոցաւ: Եղելութիւններու այս հակակշիռէն զուրկ վարկածը կարծիք մըն է լոկ, անարժէք կանխադատում մը միայն: Այս կերպ իմացումով մըն էր անշուշտ որ նեւտոնը կը զգուշանար այնքան վարկածէն. ասիկա, սակայն, ապահովաբար ոչ թէ անոր համար որ ան կ'ուրանար գաղափարին զերք գիտութեան մէջ, եւ կամ ամենեւին կը դատապարտէր վարկածը. — ինք որ անոր այնքան մեծերը յղացած էր — այլ որոշապէս ցոյց տալու համար թէ վարկածը արժէք ունի միայն այն ատեն երբ փորձարկութիւնը կամ եղելութիւնները կուգան հաստատել զայն:

Արգարեւ, փորձինն է միշտ վերջին ու վճռական խօսքը: Եղելութիւնները հաստատեն վարկած մը, կամ թէ հերքեն զայն, երկու պարագաներուն ալ միակ ե օրինաւոր կեցուածք մը պարտի ունենալ ճշմարիտ գիտունը. այսինքն՝ պարտի հնազանդիլ ու հպատակիլ: Իրապէս, եղելութիւններն ու զննութիւնները ամենահաստատ մասն են միշտ գիտութեան, եւ յաճախ աւելի կ'ապրին քան ամենէն հանճարիմաց տեսութիւններն ու վարկածները: Մարդկային գիտութիւնը, գիցարանութեան Ան-

գէին նման, նոյնիսկ իբր ամենազմեմ յղացուցնեալ մէջ, ոյժ և արժէք կ'ունենայ միայն այն ատեն, երբ շփման կուգայ եւ զեղութիւններու հաստատուն գծաւորին հետ:

2. — Ահա թէ ի՞նչ կ'անդիտանայ վարկածական մէթոտը, իր մեծագոյն սխալն է, համբարատար գննութիւնը եւ կանոնաւոր փորձարկութիւնը փոխարինել կուսուսով կամ գուշակութեամբ: Եղելութիւնը հազիւ թէ հաստատուած՝ զայն բացատրելու համար օգնութեան կը կանչէ վարկած մը, և, առանց եղելութեանց հակակշիռին ենթարկելու տաժանքը յանձն առնելու, կանախասօրէն զայն կ'ընդունի իբր անվիճելի օրէնք, անկէ հանելու համար ապա արամաբանական թուած բայց այնքան զիրարբեկ հետեւութիւններ:

Այս մտահաճ մէթոտին է որ կը պարտինք, տարբարանութեան մէջ, չորս տարբերուն անստութիւնը. այսինքն՝ տաքին և ցուրտին, չորին ու թացին ստեսութիւնը, բացատրելու համար մարմիններն ու անոնց փոխակերպութիւնները: Նոյն այս մտահաճ մէթոտին է որ կը պարտինք զարձեւել, բնագիտութեան մէջ, գատարկութեան սարսափը. աստղագիտութեան մէջ, Պտղոմէոսի Դրութիւնը, առանց տակաւին յիշելու Ալիքմիի և աստղաբաշխութեան նոյնքան արտառոցութիւնները: Ուրքա՛ն զիւրին ու հանելի է երեակայելը, բայց որքա՛ն զբժւարելու տաժանագին է, մանաւանդ, գիտնալը:

3. — Այս մէթոտը կերարկուած չէ սակայն հնութեան մէջ, և կամ Միջին դարերուն միայն. Տէքարդի tourbillonsներն ու animaux-machinesները, ու նոր ժամանակներու և դեռ անկնչ և մեր օրերը երկարող փոխակերպութեան ու եղաշրջման անստութիւնները ուրիշ բան չենք իթէ ոչ մաքին յղացուցները, նոյնքան վաղահասօրէն օրէնքներու եւ ապացուցուած ճշմարտութեանց կարգը ցատկաւոր:

Բնութիւնը թոյլ չի տար որ զինքը այնքան զիրութեամբ գուշակեն. եղելութիւնները, վարկածը թելադրելէ վերջ, պէտք է տակաւին գատեն զայն վերջնապէս: Կը պատահի սակայն որ փորձը վճռական չլլայ, պէտք է խոհեմ շաժիլ այս պարագային. ու եթէ ներքի է վարկածը այժմէարար պահելը, ոչ մէկ կեր-

պով թոյլատրելի է սակայն որ անոր արժէքը այնքան չափաւորեցուի որ ա՛յ նախապէս անհնար թուի զայն հերքելու ամէն փորձ: Ուրովհետեւ, Պիւֆօն ըսածին նման, վերացական գաղափարներու վրայ կառուցուած՝ ամէն շէնք Սխալին համար բարձրացուած տաճար մըն է, օրբութեամբ՝ ու սարսափով լի ու անոր համար իսկ անշուշտ անձեռնմխելի:

Բ. Գաղափարին անհրաժեշտութիւնը. — Փորձական մէթոտին ժխտումը. — Եթէ սխալ է վարկածին զեղծական գործածութիւնը, նուազ սխալ մը չէ սակայն անոր բացարձակ մերժումը, կառչելու համար միայն եղելութիւններուն. փորձական մէթոտին սխալն է տսիկա անաւասիկ, ԺԸ. դարու տրամաբաններուն հիմնական սխալը եղաւ ասիկա, ու այսպէս է որ կը մտածեն, զարձեւել, դժբախտաբար, մեր օրերու դրապաշտներէն ոմանք:

1. — Նման մէթոտի մը թերութիւնը հասկնալու համար պէտք է ըսել որ եղելութիւնը ըստ ինքեան ոչինչ կ'արժէ: Իրեն կապուած գաղափարն է որ կ'արժեւորէ զայն. և Եղելութիւնն մը գիտի մը վերածողը ոչ թէ այդ եղելութիւնը ինքն իսկ է, այլ անկէ բղխած նոր գաղափարներ, կ'ըսէ Բլոստ Պէննար: Եթէ Բարէն գոհացած ըլլար այն հաստատումով՝ թէ կաթսայի մը մէջ եռացող ջուրը վեր կը բարձրացնէ անոր կափարիչը, մեծ ծառայութիւն մը ըրած պիտի չլլար մարդկութեան, ապահովարար. շոգիին տարածական ոյժին ընդհանուր գաղափարն էր որ իր մէջ յայտարար նշանը հանդիսացաւ հանճարի ցոլքին:

Գիտութեան նպատակը՝ գիտել ու հաստատել չէ միայն, այլ նաեւ հասկնալ ու բացատրել: Եղելութիւնները իրեն համար նշաններ են միայն զորս պէտք է մեկնել, և այդ մեկնութիւնը կարելի կ'ըլլայ միայն գաղափարին լոյսով: Ահաւասիկ թէ ինչո՞ւ, իթէ վարկածը փորձարկութեամբ միայն արժէք ունի, այս վերջինն ալ, իր կարգին, ոյժ և ազդեցութիւն կ'ունենայ միայն վարկածով: Վարկածն է որ պիտի բանաձևէ փորձարկութեան լուծելիք խնդիրը. ինքն է որ բնութեան պիտի ուղղէ՝ հարցումը, անկէ առնելու համար ապա պատասխանը. ինքն է որ պիտի վարէ փորձը այնպէս մը որ բնութիւնը հնարաւորու-

թիւն ունենայ վճռելու. ինքն է վերջապէս որ հասկնալի կը դարձնէ բնութեան և եղելութիւններուն տուած պատասխանը. որովհետեւ, ինչպէս կ'ըսէ Գիտ Պէդնար, «այն որ չի գիտար թէ ի՛նչ է իր փնտածը, չի հասկնար իր գտածը»:

2. — Իրաւ ալ, առանց զինք առաջնորդող և լուսաւորող վարկածին, փորձարկութիւնը պարզ խարխափում մըն է միայն. փորձարկութիւնները, որքան ալ շատ ըլլան թիւով, եթէ կապ չունենան զազափարի մը հետ զոր պիտի հաստատեն կամ պիտի հերքեն, անխմատ և ամուլէ են: Աւելին, իւրենց այնքան շատ եւ ներուժաւոր պէտք ալ, այնքան հակասական արգասիքները փոխանակ միտքը լուսաւորելու, կ'ապշեցնեն ու կը մոլորեցնեն զայն:

Կը տեսնուի ուրեմն որ եղելութիւնները գիտութիւն չեն, այլ այն նիւթեղէնները՝ որոնցմով պիտի գաղմօսի գիտութիւնը. եղելութեանց չնչի մը այնքան գիտութիւն չէ որքան քարերու կոյտ մը չէնք մը չէ բնաւ. որպէսզի եղելութիւններու դէպէ մը գիտութիւն յառաջ գայ, անհրաժեշտ է առաջնորդող զազափարը, բանական այն տարրը՝ որ իրարու կը միացնէ բոլոր մասերը, և կարգ կը գնէ խառնակութեան մէջ:

Գ. Գաղափարին ու եղելութիւններուն միութիւնը. — Փորձառական Մէթոտը. — Այս մէթոտը կը զգուշանայ վերոյիշեալ երկու մէթոտներէն իւրաքանչիւրին յատուկ սխալէն, ի մի կը բերէ այդ երկու մէթոտները և զանոնք կը ձուլէ մէկ ու ամբողջ մէթոտի մը մէջ, արագբերով ոչ հաշտեցնելով զանոնք:

1. — Վարկածական մէթոտին նման, փորձառական մէթոտը կ'ընդունի, կը ճանչնայ զազափարը և անոր անհրաժեշտութիւնը, զայն իբր մեկնակէտ նկատելու համար միայն, իբր ենթադրութիւն մը որ իր վերջնական վճիռը պիտի ստանայ փորձարկութենէն: Փորձական մէթոտին նման ալ, փորձառական մէթոտը կը գնահատէ եղելութիւններուն հիմնական կարեւորութիւնը, բայց կը հասկնայ նաև որ անոնք պէտք է մեկնաբանուին վարկածով և արժեւորուին փորձառական պատճառաբանութեան լոյսով: այսպէսով է որ փորձառական մէթոտը կը խուսափի վարկածական մէթոտին արտադրութիւններէն և փորձական մէթոտին

անբաւարարութենէն: Մասնաւորին հետեւում եղող փորձարկութեան և այդ մասնաւորին մէջ ընդհանուրը որոնող բանակաւորութեան այս սերտ գործակցութենէն, գազափարին ու եղելութիւններուն այս ներդաշնակ արձակցութենէն է որ կը ծնի գիտութիւնը:

2. Այս մէթոտն է որ կիրարկած են բոլոր ճշմարիտ ու մեծ գիտունները. ան է որ առաջնորդած է զանոնք ամենամեծ գիտներուն: Այս մէթոտին խղճամիտ դործածութիւնը կ'ենթադրէ երկու շատ կարեւոր յատկութիւններ որոնք կը յատկանշեն գիտական հանաքը. ասոնցմէ առաջինն է զօրաւոր երեւակայութիւն մը, ապա, ըլլալիքը տեսնող, և երկրորդը իրականութեան քննութեան մէջ ճշգրտութիւնն ու խստութիւնը որ ի բաց վանէ յափշտակութեան ու խաբկանքի ամէն կաշիւութիւն: Տեսնող մը և գատող մըն է միանգամայն ճշմարիտ գիտունը. զօրաւոր երեւակայութեան մը բարձրաթիւ թեւերուն՝ ու ստոյգ բանականութեան մը հաստատուն ու զերբաշարժ գեկին անձնատուր՝ երջանիկ ճամբորդն է գիտունը՝ բնութեան խորհուրդներուն ընդմէջէն իր արշաւը կատարող:

Իրական արուեստագէտին ու հերոսին նման, ճշմարիտ գիտունն ալ հազուադէպ է նոյնքան: Հիմնական ու հաստատ ձիւղքերու վրայ կանգնած կոչումի տէր մարդն է անիկա, անոր միշտ հաւատարիմ ու հաւատաւոր ըլլալու խիզախ յառաջադրութեամբ: Կանխակալ կարծիքներէ և յառաջգիմութեան արգելք հանդիսացող նախապաշարքայնութիւնը զերծ ու վեր՝ մարդկային քաղաքակրթութեան ու մշակոյթին մեծագոյն քառարիչներէն է անիկա, և անոր կեանքը յաճախ առաքինութեան, չըսելու համար նոյնիսկ երբեմն սրբութեան կատարներուն հանող գիտակցաբար, քաջաբար ու սիրով կրուած զոհողութիւններուն և զրկանքներուն գրաւչութեամբն է համակուած: Աւետարանական բացատրութեամբ, ճշմարտութեան պապական ու քաղցը ունեցողներէն է անիկա, ու ատով իսկ, հետեւաբար, իրապէս ու արժանապէս «երանելի»:

Լ.

ԼԵՋՈՒՍԳԻԾԱԿԱՆ

ԵՐԲԱՅԱԿԱՆ ԱՁԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ(*)

Առաջին խնդրը, որ ծագում է այս փոխառութեանց առթիւ, այն է թէ արդեօք նրանք ուղղակի երբայական բնագրից են անցած հայերէնի թէ յունարէնի վրայից, քանի որ ուղղակի բերան առ բերան փոխառութեան հարցը վերացուած է մէջտեղից:

Երկար որոնումների կարիք չկայ հաստատելու համար թէ հայերէնի երբայական փոխառութիւնները կատարուած են ոչ թէ Ս. Գրքի երբայական բնագրից, այլ պարզապէս նրա յունարէն թարգմանութեան վրայից: Երբայեցեբէնը ունի մի քանի հընչիւններ, որոնք չկան յունարէնի մէջ. յիշենք յատկապէս ց եւ շ ձայները: Յոյն թարգմանութեան մէջ այս հնչիւնները դարձած են երկուսն էլ ս, որ գտնուում ենք նաեւ հայերէնի մէջ: Այսպէս օրինակ՝

| Երբայեցեբէն | յունարէն | հայերէն |
|-------------|----------|---------|
| նեցար | նեեսար | նեսար |
| նոցա | նեեսա | նեեսա |
| ցրբաօք | սաբաօք | սաբաովք |
| սագղայ | սագղայ | սագղայ |
| բղեբիմ | բաղեսիմ | կաղեսիմ |
| բաղե | բաղես | կաղես |

Երբայեցեբէնն ունի նաեւ հ հնչիւնը որ յունարէնը չունի և տառադարձութեան ժամանակ ջնջուում է. նոյն ձայնը հայերէնի մէջ էլ պակասում է. օրինակ՝

| Երբայեցեբէն | յունարէն | հայերէն |
|-------------|----------|----------|
| հալիուլ ահ | ալիւուիա | ալիւուիա |
| հաբամա | աբբանա | աբբանա |

Թէ հ ձայնի ջնջման և թէ շ ձայնի փոփոխութեան օրինակ է հոգիանա ոսաննա ովսաննայ

(*) Շարունակութիւն՝ մեծամուն հնգհնակի «Պատուարիւն Հայ Լեզուի» գործէն (Ժ.Գ. Գրուխ):

Հայերէնը ունենալով ց (նաեւ ծ, ծ), շ և հ (նաեւ խ) ձայները, կարող էին մեր թարգմանիչները ամենայն դիւրութեամբ հարազատ ձևով ներկայացնել երբայական հնչիւնները, եթէ ձեռքի տակ ունենային երբայական բնագրերը: Եւ, եթէ այդպէս չէ եղել, նշանակում է թէ մեր փոխառութիւնները յունարէնի վրայից են և ոչ թէ երբայեցեբէնի:

Այս բանը կարելի է հաստատել դեռ հետեւեալ փաստերով:

Կան երբայեցեբէն բառեր որ յոյն թարգմանութեան մէջ վեր ի վայր են շըրջուած. սրանց դէմ էլ հայերէնը հաւատարմիմ կերպով համապատասխանում է յունարէնին և ոչ բնաւ երբայեցեբէնին. օր.

ի քարոզ ուայ քարոք վայքարովք
(Հին հայերը գիտէին որ յոյնները օտարների վա ձայնը թարգմանում են ուա. հմմտ. Ուտարապալս = վաղարեապալս):

Նոյն իսկ այնպիսի տեղեր, ուր երբայական բառը ունի մի տարբեր ընթերցում, սխալ ձև կամ աղճատում, հայերէնը նոյն է յունարէնի և ոչ թէ երբայեցեբէնի հետ. օրինակ՝

գանգակ ղախսո փախով
(որ առնչուում յունարէն խակխսո ընթերցումից է):

Ա. Թագ. Ի. 19 և 41 կարգում ենք. ձնտցին առ երգարաւոյ այդուիկ . . . եւ յարեալ Դաւիթ յարգարայնո: Սրգաք կամ արգաք բառի դէմ երբայական բնագրում առաջին զէպքում գտնուում ենք սեղէի քար և երկորորդ զէպքում «հարաւի կողմից»: Յայտնի է ինչ թիւրիմացութեամբ յոյն թարգմանութեան մէջ այս բառերը դարձել են Սրգաք, Արգաք: Հայերէնն էլ ճիշտ սրանց հետեւելով դնում է երգաք, արգաք, արգոք:

Իբրեւ վերջին օրինակ յունարէնի հաւատարմի հետեւողութեան՝ դնենք այստեղ ակհան, եկհան և սոգ բառերի համեմատութիւնը:

Ակհան «փուշ» բառը գործածուած է երկու անգամ Դ. Թագ. Ժ. 9. «ակքան ի Լիբանանէ յղեաց առ եղեւնախայտն . . . եւ կոխեցին զակքանն»: Երբայական բնագրում այս բառի դէմ երկու տեղումն էլ գրուած է հախուլիս, որի ուղղականն է խուլիս ուղղափուշ: Նոյն երբայական բառը

զանուսմ ենթ նաև Բ. Մինաց. ին. 18, երկու անգամ գործածուած, որոնց դէմ տալան հայերէն օրինակէն ունի մի անգամ ուրագ ձ մի անգամ եկիւմ: Այսպէս ցոյցող որ ի իրականն է, յղեալ առաջարկն . . . եւ եկեալ կորսեցին զամենայն եկբան»: Ուրեմն միւնտոյն երրայական բարի դէմ ունինք հայերէնում երեք ձև. ալիքան, ուրագ եկիւմ:

Ի՞նչ է այս տարբերութեանց պատճառը:

Այս սարգեթութեանց պատճառը յուշարէնն է։ Ս. Գրքի յունարէն թարգմանութիւնը առաջին և երկրորդ զկայութեանց մէջ գնում է ակամ, երրորդում ակիսուխ (այլ ձեռագիր ունոզ) և չորրորդում ակիսուխ (այլ ձեռագիր ակիսուխ)։ Սրանցից ոչ մէկը յունարէն չէ և անշուշտ երբայցեցեթէն հալիսուխ բառի տառադարձութիւններն են։ Ուրեմն ուղիղ ձեւն է ակիսուխ, միւսները բոլոր փակում, ակիսուխ, իսկոզ) այլափոխեալ։ Յունարէնի մէջ կայ ակամիս «փուշ» բառը, որի պատահական նմանութիւնը թեւադրել է գրիչներին՝ ակիսուխ ձեւ դարձնել զերջապէս ակամ։ Հայ թարգմանիչը տառադարձրել է յունարէնից այն ձեւերը, որ գտնել է իր գործածած ձեռագրում։ այսպէս իսկոզ ընթերցուածը պահել է ունոզ, իսկ յունարէնը ակամն, եկամն։ Սրանք յունարէնի երեք ձեւերից ոչ մէկի հետ նոյն չեն. այլ ներկայացնում են նրանց խառնուրդը. այսպէս ակամը կրում է երկրորդի առաջին մասը ակիս և առաջինի երկրորդ մասը։ Սրանից կարելի է հետևցնել որ կամ յն. բառը ունէր ուրիշ երկրորդական ընթերցուածներ և յատկապէս մեր թարգմանչի գործածած ձեռագրում ակիսամ, եկիսամ ձեւերը և կամ հայերէնը պէտք է կարգաւ ակիսուն, իրր յունարէն ակիսուն փոխանակ ակիսուխ ընթերցածով։

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ մեր թարգմանիչները չեն ունեցել իրենց ձեռքի տակ Ս. Գրքի եբրայական բնագիրը, այլ միայն յուշական, որից էլ տառագրարձեր են եբրայական բառերը՝ հաւատարմօրէն հետեւողութեամբ։ Եւ եթէ այսպէս է, պէտք է հետեցնել թէ մեր նախնիք իրենց ուսման ծրագրի մէջ չէին առած եբրայեցիներն եւ հետեւաբար եբրայեցիները նաեւ զրգական ճանաթարհով ուղղակի ազդեցութիւն չունի հայերէնի վրայ։

Բացի Ս. Գրեքից՝ ներայայացներէն բառեր,
թէն շատ սակաւ թուով զտնուս հնք նաեւ
Ոսկեգարեան ուրիշ գործերի մէջ։ Ինչպէս
եղանակի, Կիրեղ Աղեքսանդրացու մէջ
են։ Սակայն սրանք էլ յունարէնի միջո-
ցով են։

Եթէ Ոսկեդարեան ծաղկեալ չըլլանին հայերը երբայեցեւին չէին սովորում, հաւանական չէ որ յաջորդ դարերում սովորէին, քանի որ նոյն իսկ ատուրերէնի և յետոյ իջ յունեւորէնի ուսումը հետզհետէ վեհանոսմ էր: Խորհրդին Պ. ՅԶ գրում է թէ ուղարկուել է Երուսաղէմ և Պաղեստին, և Անցաք ի օրըր տեղիսն երկրպագել, եւ մնալ վայրկեան ի Պաղեստինացւոց հրահանգս, բայց այս պատմութիւնը եթէ ստոյգ է ի լինի, մի անցողական և մասնաւոր դէպք է:

ԺԱ. դարում ունինք Կարապետ Սա-
նեցի անուշտով մի գրող, որ թողել է մեզ
Մեծարորի վրայ մի Ներգրողան, բաւա-
կան ճոռաճարան լիւզելով: Դիտուն երեակաւ
կամար, իր զովասանական տիտղոսների
մէջ, գործածում է նաև մի խուժբ այն-
պիսի անսովոր բառեր, որոնք թէև աղա-
աղեկան է անհասանալի, բայց երևում է
որ երբայեղբէն են. այսպէս ամաստաւ
աղեր, արգաւիք եւ ասոր, բրու բոլոր ան-
ձամբ, գունի պտղայից, գաբասա ողլուգա-
լից են. (էջ 53-65): Սրանք էլ յունական
ձամբով են հասած:

Յունական փոխառութիւնների նման երրայական բառերն էլ հայերէն լեզուի մէջ մարմին ստացած ձևեր չեն. նրանցից հազիւ 15 հաւոր սովորական լեզուի մէջ մտնեն, որոնցից իբր 6 հաւոր նաև արդէ ժողովրդական լեզուի մէջ: Դրանք են՝ աշուշտէլ, ակշաթ, ակհան (որից գրական եկհանիկ), աշխ, բակեղեք, քելաթ, քելիշխաթ, բուսոր, քեհեհ, եհովա, յոքէլեան, ովսանցալ, ռաբբի, ռաբբունի, սասան, որոնցից ստորագծեալները գործածական են նաև ժողովրդական բարբառներում, բոլորն էլ իբր կրօնական բառ, այսինքն զբական ճամբով: Այս հանգամանքը թոյլ չի տալիս մեզ քննելու այդ բառերի քաղաքակրթական զարգացումին և տեսնելէ առաջ, ճիշտ ինչպէս յունական փոխառութիւնները:

Եւրոպական փոխառութիւնների երկ-
րորդ շարքն են կազմում յատուկ անուն-

ները: Սրանք էլ երկու կարգի են բաժանւում. ա) այն անունները որոնք թէև Հին Կտակարանում կամ այլ տեղեր յիշուած են, բայց հայոց մէջ չեն գործածուած: Այս կարգի անունների թիւը շատ մեծ է: Օրինակ, Մնացորդաց գրքից պատահաբար բացուած մի էջում (Ա. Մնաց. Դ. 24-26) վեց տողի մէջ գտնոււմ ենք 11 անուն, որոնք են՝ Նամուէլ, Յամին, Յարիր, Սաղեմ, Բասան, Ասեման, Մազբա, Ամուէլ, Սաբուդ, Ջաֆուր, Սեմէի: Սրանք հայ կեանքի և հայ լեզուի պատմութեան համար ոչ մի արժէք չեն ներկայացնում, ուստի մենք էլ նկատողութեան չենք առնում:

բ) Այն անունները, որոնք մտել են ինչպէս այլ քրիստոնեայ ազգերի, նոյնպէս և հայոց մէջ, այսինքն գործածուած են հայ անհատների կողմից: Այս կարգի անունների մի ամբողջական հաւաքածոյ չկայ զեռ: Փաղելով իմ Հայ Անշնորհաշէն Բարաբանտիպ աշխատութիւնից, զննւմ եմ այստեղ նրանց ցուցակը, ընդամենը 98 անուն:

| | | |
|-----------|-------------|-----------|
| Աբգիւս | Աբեղնաղով | Աբել |
| Աբիսողոմ | Աբրահամ | Ադամ |
| Ագրամեյիս | Ագարիա | Ահարոն |
| Անեմուն | Ամբակում | Անանիա |
| Աննա | Ասանք | Ասանազ |
| Բաղդասար | Բանարգես | Բառաբաւ |
| Բարաղամ | Բարդոյիմեոս | Բերդենիմ |
| Բենիամին | Բաբրիէլ | Գաղ |
| Գասպար | Գեղեղոն | Դանիէլ |
| Դաւիթ | Եզեկիէլ | Եգր |
| Եղիա | Եղիազար | Եղիսէ |
| Եղիսաբէթ | Ենովք | Ենովս |
| Եսայի | Եսթեր | Երեմիա |
| Եւա | Եփրեմ | Ջաֆարիա |
| Ջորաբաբէլ | Էմմանուէլ | Քամար |
| Քորդում | Իսայիէլ | Իսրայէլ |
| Լիա | Հեղի | Մաքուսաղա |
| Մաղաֆիա | Մամբի | Մանասէ |
| Մանուէլ | Մարիամ | Մեյի |
| Մեյիսեդեկ | Միսայիէլ | Միսաբ |
| Միհայիլ | Միքիա | Մովսէս |
| Յաբէթ | Յակոբ | Յեսու |
| Յոբ | Յովաբ | Յովակիմ |
| Յովասափ | Յովել | Յովնաննէս |
| Յովնաբան | Յովնան | Յովսէփ |
| Յորդանան | Նազարէթ | Նաբան |
| Նաբանայիլ | Նոյ | Ռափայիլ |
| Ռեբեկա | Ռուբեն | Սաղովկ |

| | | |
|---------|----------|----------|
| Մանակ | Սաղաթիէլ | Սամուէլ |
| Սամիսոն | Սաուա | Սեդաբ |
| Սեթ | Սիմեոն | Սիոն |
| Սիրաբ | Սաղուէ | Սաղունոն |
| Սոփոնիա | Փանուէլ | |

Ինչպէս եբրայական հասարակ անունները, նոյնպէս և այս յատուկ անունները՝ որ յիշեցինք, մտել են՝ հայերէնի մէջ ոչ թէ ուղղակի եբրայեցեցեցից, այլ Ս. Գրքի յունարէն թարգմանութեան միջոցով: Ապացոյցները նոյն են. ուստի չենք ուզում ծանրանալ այս կէտի վրայ, այլ միայն տալիս ենք մի քանի անունների համեմատութիւնը հայերէն, եբրայեցեցեցեց և յունարէն լեզուներով, որով ամէն ինչ պարզոււմ է.

| | | |
|----------|-----------|----------|
| Ամբակում | Խաբակուկ | Ամբակում |
| Անանիա | Խանանիյան | Անանիա |
| Եզեկիէլ | Յրիսեկիէլ | Եզեկիէլ |
| Ենովք | Խանուկ | Ենուք |
| Սոփոնիա | Յրեմիա | Սոփոնիա |

Եբրայական անունների մի մասն էլ մտել են մեր մէջ ասորերէնի միջոցով՝ Ս. Գրքի առաջին (ասորական) թարգմանութեան, ինչպէս և Եփրեմի, Ջոսիէի և այլ ասորական գործերի թարգմանութեանց վերայից: Այս մասին խօսել ենք արդէն վերը, (տե՛ս Սիոն, 1944, էջ 83) և աւելորդ ենք համարում կրկնել: Չենք ուզում կարգ առնել նաեւ այն անունների վրայ, որոնք յետոյ արաբերէնի և աւելի ուշ՝ եւրոպական զանազան լեզուների միջոցով անցել են մեզ. ինչպէս Իբրահիմ, Դաւուտ, Եսուսի (= Աբրահամ, Դաւիթ, Յովսէփ) կամ Իզապիլա, Ջապիլ, Լիզա, Ինա, որոնք եբրայական եղիսաբէթ (ժողովրդական եղիսա, եղիս, Սաբէթ) անունն սպանական, ֆրանսական և ռուսական ձևափոխութիւններն են ներկայացնում:

Յիշենք վերջապէս եբրայական մի այլ ազգեցութիւն, այն է եբրայական յատուկ անունների թարգմանութիւնը հայերէն համապատասխան ձևերով. օրինակ Միսիբաթ, որ է Նաւուս (= եբր. Նախում նշանակում է «միսիթարի»)։ Երևոյթը ճիշտ նոյն է յունարէն անունների հայ թարգմանութեան հետ. ինչպէս Սեփիաննոս = Պսալ, Ապուսոլոս = Առաքեալ, Անասաս = Յարութիւն և այլն:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՐԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Մ Յ Ն Ո Ւ Ո Ր Տ

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԵՕԼԵԱՆ

Վերջին քառամսեակին՝ նիհար, տըժ-
գոյն հատորներ խնդեցին գրական մեր
հրապարակը, բանաստեղծականը մանա-
ւանդ։ Ու այսօր, շեշտ է կարծէք մեր ան-
տրամադրութիւնը՝ բանաստեղծական հա-
տոր մը ձեռք առնելու, մեր վախը՝ ար-
ուեստական շպարին և թէքիք արդուզար-
դին առջև մնալու։ Ու ասկէ, իրաւ բանաս-
տեղծներու ալ՝ անստեղծ խեղճ ու ան-
փառունակ ճակատագրով։ Պատճառները...
— պակասը՝ հաւատքի, հողի, հաւաքական
խոր ապրումներու, երեւակայութեան։ —
Լիցքը՝ արգիական լայն հետեւողականու-
թեան, գրական ու լեզուական քրտնարդին
փայլի։ — Թեթեւ յաւակնութիւններ ու
փառասիրութիւններ արօց՝ որոնք գիտեն
գրել քերականական ճշգրտեամբ։

Ու այս բոլորին հետ՝ կնիքը մեր ժա-
մանակներուն։ Արեւմուտքը այսօր, ստեղ-
ծած իրեն համար նւթապաշտութեան և
հիւշէններ արձակելու գործողութեան դարը,
կը բաւարարէ անոր մէջ քրտնաթոր, կար-
ծէք անհաղորդ՝ հայեցողութեան, զգաց-
ման, երազանքի և երեւակայութեան ստեղ-
ծագործ և թարմացնող շիջին։ Ու այս տագ-
նապին գիմաց, անոր շունչովը անող ա-
րեւելքի մէջ, մեր երիտասարդութեան ի-
մացական ամբողջ ճիւղն ու ստեղծագործու-
թիւնը ժամագրաւաբար է սուսած բանաս-
տեղծական հատորներու։

Հասկնալի՞ ուրիշ վտանգը՝ որուն կը
վազեն անոնք, որոնք տիրանալու իրենց
յամառութեամբը։

Մթնոլորտի հեղինակը, Մ. Թէօլէօլեան,
քաջատեղեակ այդ վտանգին, կը բանայ
փշոտ իր ճամբան ընթանալու Մուրթի Աքիմ
ու յոյսին, հակառակ իր խոնջ ծուռկերուն
կաթիլ կաթիլ ուժասպառող նահանջին, և
ապրելու վախով տկարացած գիտակցու-
թեան։

Ան երիտասարդ մըն է Հալէպէն, կազ-
մըած Յեթ-գաթեալեան Պաշա, ուր ջախ-

ջախուած են ազգային յոյսերն ու երազ-
ները, և արգիւումած՝ հայ հողի խոշոր տա-
ռապանքին անդրադարձն իսկ։ Ու ասկէ՝
Սիւրուքի մէջ հազիւ փորձուած զգայնու-
թիւնը Մթնոլորտին։

Եթէ Սիւրիի քերթուածներն ու տա-
րիներու գրական ճիգը չի կրցան պատուան-
դան մը ապահովել մեր իրաւ բանաստեղծ-
ներու շարքին, եթէ սիւրիի Մեծարենցի
տաղերուն կարեւոր տոկոսը մնաց տեղոյն
ու չյաջողուած, եթէ Թորոս Ազատեանի
բոլոր գործերը ցուրտ են պակասովը հայ
սրտի ջերմ զարկերուն, պատճառն այն է
որ ասոնք՝ և նմանները, իրենց ազգու-
թիւնը, իրենց ցաւը ծածկելու ստիպուած
հոգեկան փոքրկութիւնն են դրած յատակ
իրենց գործերուն, և կը հպին կեանքի մա-
կերտին թեթեւ նւթեր վերցնելու և ա-
նոնցմով գրականութիւն (ըսենք՝ գրական
ժամանց) ընելու։

Եթէ Մթնոլորտը չի նետուիր այդ գծին,
կը լիշեցնէ զայն։ Մտքի պատրանքն հա-
գած խորհրդածութիւններ, կեանքի դառ-
նութիւններուն զէմ շիջալարերով պայքար,
ու տիեզերական ուժին զէմ վտիտ բազուկ-
ներ սպառնալին ցցելու յանդուգն յիմա-
րութիւն, կը գաւաճեն զինք այդ գիծէն,
բայց չեն բաւեր տալու գործին նոր յա-
տակ մը։

Եթէ Սիւրիեան շպարն ու ռոմանթիզմը
արտաքուստ են Մթնոլորտէն, աւելի պարզ
ու աւելի մարդկային ըլլալու ի խնդիր,
սակայն թեթեւ ու փափուկ բառերով, խը-
նամուած ու եղանակաւորուած լեզուով,
նկարագրող ոճով ու յարգուած օրէնքներ-
րով բանաստեղծ մը գառնալու հաւաքած
տակաւին կը յամարէ հոն։ Ու բանաստեղ-
ծութիւնը բառ, թէքիք, ճաշակ ըլլալէ
առաջ ու վեր, է հոգեղէն գրութիւն, հողի։
Մեկ համար քերթուած մը բանաստեղծա-
կան իրական գործ մըն է, երբ էական,
ընդհանրական և յաւիտեական ապրումնե-
րով կերպադրէ աշխարհ մը ուր կը տես-
նենք եթէ ոչ համամարդկային ցուցում-
ներ, գոնէ ժամանակի մը ու ժողովուրդի
մը մարդոց ճակատագիրն ու աշխարհը։

Բիւզանդ Թօփալեան մեծ քաղաքներու
հեւքոտ կեանքը և այդ կեանքին մէջ հա-
յուն ապրիլ կարենալու ճիւղն ուղեց երգել
և մեր համակրութիւնը ունեցաւ իրեն հետ։

Մտառականի Առաջադասները մեր սերունդի որբ ու աքցանուած երիտասարդութեան ներաշխարհին վկայութիւնը ուղեց բերել, ու գործունէութեամբ մօտեցանք աւերի:

Դուրեան, Մեծարենց, Վարուժան (անուններ տուած ըլլալու համար) ապրելով հանգերձ իրենց ժամանակը, վեր մնացին անկէ, ու կ'ապրին մեր քերթողութեան վալուստին մէջ իբրեւ վաւերական յայտնութիւններու գաղաթիւներ:

Մընդլո՛րսք... — Չունի յաւիտեական և էական ապրումներու սեւեռութիւն, ինչպէ՛ս մեր սերունդի տղոց հոգեվիճակի արտայայտութիւնը բերող վաւերական տախտակներ:

Ապրելու վախ, փշրուած երազներ, հաւատքի նահանջ, դառնութեան և ըմբոստացումի պահեր, կը տրուին մեզ տկար կառուցումներով ու մենք չենք այցուիւր գլխաւորութեան զօրաւոր հոսանքէն ու անխառն յուզումէն: Բանաստեղծութիւնը՝ իբր երգը հոգիին, կը սպասենք որ տրուի մեզ յստակ յօրինուածքով ու զօրաւոր թելադրականութեամբ: Տկար է իր երևակայութիւնը, որով կարճ իր թո՛ղիքը, ու կը դառնայ հաղորդական միայն այն ատեն երբ մտած է իր եսին փոքր չըլլալէն ներս, իր յիշատակ դարձած սէրերուն վերյիշումին, և կուտայ զանոց զուգու ու հանգարտ յուզումներու բխումներով: Հոն ուր խառնուածքի մը շունչն ու համը կ'առնէք, ազդեցութիւնը օտարին կը դառնայ ճնշող: Ձիւն քե մոխիրը, օրինակ՝ կը յիշեցնէ Թէլքէսներ, Կսկիծը՝ Մեծարենցը:

Իր նորութիւնները փնտռուած, անտեղի ու շատ յանդուգն գաղափարներ են յաճախ, որոնք մնաս են բանաստեղծական խառնուածքին քան յաւելում: Ինչպի՛ս ով Տէր (էջ 26), Հայրենիքի մը հաւաք (էջ 37), և Տէր (էջ 42) ոտանաւորներով կը հրամացուին մեզ անակնկալ նորութիւններ որոնք չեն ներգաշնակուիլ: Բանաստեղծի հոգիին հետ: Թէօլէօլեան փառասիրութիւնը ունի չըլլալու սովորական, տափակ, ընթացիկ քերթողագիր: Այդ վախէն մղուած, կ'աշխատի նորութիւններով տարազեկ գեացումները, որոնք գժբախտաբար արուեստակալ են դարձած դրօշմովը մօքի ճիգին, յաճախ անհրապօր և երբեմն այլաւեակ: Նորու-

թիւններն ու յանգստութիւնները սիրելի կը դառնան երբ սանձուած կ'ըլլան մտածումներու և գեացումներու դրութեան մը մէջ:

Դառնութիւններուն ու ցաւերուն մէջ կ'ուզէ հայրենացի ու անէծք դառնալ՝ սուլաքուած իր Աստուծոյն դէմ: Հայ հոգիի պատկերը չէ այս բնաւ: Ու պէտք չէ մոռնալ նաև որ բանաստեղծին համար արուեստին աւազանն է գերագոյն այդ լիութիւնը՝ Աստուած, որմէ կ'իջնեն հոգեկան բոլոր բարիքները, և որուն կը դիմեն մարդկային հոգիի ճիգերուն արդիւնքը եղող բոլոր արուեստի իրագործումները: Անոր մէջ է որ պիտի սրբուի ու բիրեղանայ բանաստեղծի հոգին: Հայհոյել զայն, կը նշանակէ ուրանալ արուեստը, վաճառ Թէլքէսանի Պիսի լսնիք Աստուծոյ (Հայերէս-Ֆրէնչ էջ 63) ոտանաւորին մէջ կը հանդիպինք բողոքի՝ ուղղուած Աստուծոյ:

Պիսի բաճեմ. — «Մեզ դրժոխք, դրժոխք դրկէ՛ անգամ մ'ալ,

Ձե՛ որ զայն լաւ կը ճանչնամք, զայն ճանչցուցիր մեզ օտս լաւ,

Եւ բաւեցրուն յաւկացո՛ւր աւալալու քիւնրդ ամբաւ...»:

Բողոքը մըն է այս, ուր կայ սակայն խտացած հայ հոգիի տառապանքով հասունցած երկիւղած և զսպուած պոռթկումը:

Ուրիշ ոտանաւորի մը մէջ՝ Տէր երբ դուն (Հայերէս-Ֆրէնչ էջ 171) շրթունքներուն օրհներգովը Թէլքէսան կը բանայ իր ցաւերը Աստուծոյ, իսկ Թէօլէօլեան եթէ բանայ իր շրթունքները, պիտի անիծէ զԱստուած և ասորով փառքերուն ծով ճահիճները, ու «սարսոզ երկինքէն» վար քաշելով զայն, պիտի աշտնծնէ իր իսկ արդարութեան դահիճին:

Ըսել չենք ուզեր անշուշտ որ բանաստեղծներ պիտի չըլլան իրենք զիրենք: Ոչ ալ կը սիրենք տեսնել անոնց բխումներուն հոսուած արդէն բացուած ակօսներէ: Մեր ուզածը նորութիւնն է, ըսուած նոր ձեւերով, բայց ըսուած բանաստեղծական շնորհով, բոլորովին վեր՝ ամբոխավարի ճարպիկութիւններէն և հետադարձական ձեւերէն: Թէօլէօլեան վիրաւոր է այս թերութիւններով, բայց չենք կրնար ձգել զայն շարքին անոնց, որոնք առանց հաւաքական ապ-

ԽՍՀՄԱԿԵՍՆԻՔ ԿՍՄ ՊՈՌՈՇԵԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՊԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԶ: Գաղութային
 Արհեստագործական Միությունները՝ պատկերա-
 զարդ, մեծադիր, երկսիր, էշ 292, օպ. Մուսաղյան,
 1942 Ն. Մասնաճյուղ, Շաղախ մեծադիր, Ե. Երկսիր,
 էշ 248, օպ. Ն. Երկսիր, 1942 - 3:

Խաղաղական կամ Պաշտպանական իշխանական
 տան և առաջ հետ կապուած շատ ընդարձակ
 պատմական ու հնագիտական ուսումնասիրու-
 թեան մը Բ. և Գ. Հատորներն է որ Յովսէփեան
 Արքեպս., Տանն Կիլիկիոյ արդի Շնորհապարհ Գա-
 ճեղին կաթողիկոս, զրեթէ միաթամանակ, մէկը
 Երուսաղէմի ու միւսը Նիւ Յորքի մէջ է լոյս
 կ'ընծայէ, յայտարարութիւնը ուղարկելով յաղաղի-
 սական քանի որ տարիով, հաւանաբար պատե-
 ռադմի հետ կապուած, արգելքներով: Այս ման-
 րապատում ու հոյակապ աշխատասիրութեան Ա.
 Հատորը լոյս էր տեսած 1928 ին վաղարշապատի
 մէջ ու բարձրապատիւ հեղինակը պատիւ ըրած
 էր ինձ օրինակ մը զրկելու Նոր Նախիջևանէն՝
 որուն արժանաւոր Առաջնորդն էր այդ տարիներ
 ունէ, առիթ տալով որ արժէքաւոր մատենան եւ
 ներկայացնէի կայ բանասիրական աշխարհին, ա-

րումներու, առանց նոյնիսկ ապրելու հաւա-
 ճական հոգեկանութիւնը իր ամբողջութեա-
 նը մէջ, միատուութիւնն ունին այսօր՝ կա-
 թիլ մը զգացում լուծելով սոսկեւ շար-
 քերուն մէջ, կամ պահ մը ապրում հնչեա-
 կելով, ինքզինքնին հրամցնել մեզ իրեն
 զնաւարաններու աջժանի տիպոսեալ
 բանաստեղծ: Մթնոլորտի հեղինակը կը մնայ
 վեր աննշմամբ: Ան ծանօթ է արդէն մեզ իր
 Մախբուրաքով (Սօֆիա ստուած 1937-ին),
 որուն արձակ էջերու նմոյշներէն ազա-
 տագրած է ինքզինք հոս, ու գիտցած է
 ընտրել անկէ յաջողագոյն ստանաւորները
 և հիւրընկալել նոր գործին մէջ, ու, վկա-
 յութիւնն ըլնէ է այս իր հասունցող ճաշակէն:

Թէպէտեման ոչ միայն ծանօթ է մեզ
 իրեն բանաստեղծ, այլ նաեւ նախանգամ է
 մեր սերունդի իմացական շարժումին եւ
 յախուռն քննադատ:

Իր ըրածին գիտակցութիւնը ունեցող
 մէկու մը գործին առջև կը գտնուիք ու այդ
 գիտակցութեամբ մտանքային իր նոր գործին,
 լուսագոյն յայտնութիւններու պնդակու-
 թիւններով կը սպասենք իրմէ նոր գործեր:

Մուսաղյան
 1945

ԱԿԵՏՈՒՄ

առանձին գրախօսականով մը(*) ուր փափաք էի
 յայտնած որ ո՛չ միայն այդ առաջին հատորին
 յաջորդող երկու աւելի ընդարձակ ու լրացուցիչ
 հատորները չուտով լոյս տեսնէին, այլ և անոնց
 զէթ առ այժմ ֆրանսերէն թարգմանութեան և
 տպագրութեան ծախքերը հազարէնէին, գիտու-
 թեան և արուեստի հովանաւոր հաստատութիւն-
 ներու և անձնակորութեանց կողմէ: Ուրախ եմ
 որ Սրբազանին աշխատութեան գիտական բարձր
 արժէքը ինքնին բաւական եղաւ որ ան պահ-
 ուած ըլլար Երուսաղէմի Մարգ Թարգմանաց
 Դուռնու Դրական Մրցանակով և բարգաւաճ և ծա-
 խիւք Տիկին Արմենուհի Մխիթրեանին:

Այս զոյգ հատորները պատմութիւնն են Մի-
 ջին դարու ընաշխարհի մեր ա՛յն վանքերուն՝ ա-
 ռոնք Հայ Եկեղեցւոյ պատմութեան, ճարտարա-
 պետութեան, զրուեսթեան և ծաղկումի արուես-
 տին, մանրանկարչութեան, մատենագրութեան
 և նկարչեցոյ ներքին ուղղութեան ու արտա-
 քայլութեան, զորքերուն տեսակետով մեծ զեր ու
 ազդեցութիւն ունեցան, այդ վանքերէն իւրա-
 քանիւրը իր կարգին հանդիսացած ըլլալով է-
 մացական աշխատութեան, մասնակցան ու ինք-
 նամուսաց աղօթքի, քրիստոնէական մաքուր հա-
 յեցողութեան և ազգային խղճամբ գիտակցու-
 թեան լուսաւոր կեդրոն մը: Գիրքը, իր երեք
 հատորներով հայ հին վանքերու պատմութիւնը
 չէ միայն, վասն զի նման աշխատութիւն մը,
 լուրջ հետազոտութիւններով, շատեր կատարած
 են մեր մէջ, Բաբխուրյաններն, Սմբատեան, Փեր-
 ղալէմեան, Կոստանեան, Սրուանձեռանց, Այի-
 շան, Շահնաթեանեան: Հայոց Գոտաւորեան, Էփ-
 րիկեան և զեւ շատեր, ըստից Յովսէփեանի այս
 մեծարժէք աշխատասիրութիւնը կը զերազանց
 բոլոր իր նախորդները, Նախ որ հեղինակը այս
 գտնի վրայ մասնագիտորէն պատրաստուած ե-
 կեղեցական է և թէ իր հետազոտութեանց մե-
 ծագոյն մասը կատարած է անձամբ, սեղւոյն
 վրայ, շլուստելով իրմէ առաջ կատարուած ըն-
 թերցումներու ընդօրինակութիւններուն ու իր
 կոթողական գործը զարդարելով իր կողմէ առ-
 նուած լուսատիպ պատկերներով, շնանալով իրա-
 կատար ամբողջութեամբ մը հրապարակ հանել
 զայն, շնորհակալ թէ՛ այս և թէ իր գիտական
 բազմաթիւ ուսումնասիրութիւնները լրացու-
 ցած է Ս. Հովսէփեանի վանքի մէջ առանձ-
 նացած այն եօթը երկար տարիներուն՝ հոր վա-
 նահայտն էր նոյն վանքին և ուր բնէր գիտա-
 կան պարագլուհներու ավեն յարմարութիւն: Յե-
 տոք իր այս երկաթիւրութեամբ հեղինակը տար-
 բեր հայեցակէտ մըն ալ կը հետապնդէ, աղնիւ-
 հայեցակէտ, արդարեւ, որ պայծառորէն կը շըշ-
 մարուն ազգայնական իր գրեթէ բոլոր երկասի-
 րութիւններուն մէջ, ինչ որ դարերէ է վեր սեպ-
 կականութիւնն է Հայաստանեայց Եկեղեցին,
 մայր տաճար, վանք, դպրանոց, աղօթարան,
 դաստառն, բանասիրական բազմաթիւ հիմնադ-

Առաւազ Վրդ., «Սին» ամսագիր, 1929,
 երկրորդ, էջ 76:

կուսակցություններ, հայրենի, անհետացած կամ կանգնած ու գեռ կենդանի, առաջ բացի երկու գլխավորներէն այնքան հաղթանակներ միջև, բոլորն ալ արդիւնք են հայ ցեղին հաւաքական կամ մասնակի գործարարութեան, ուստի ալ լուսաւորելով ու ծրագրելով աւ հայ նախադարձներով ու առաջանիւթով կառուցուած Մ. Էջմիածնի Մայր Տաճարէն ու ասոր հետ ճարտարապետական այնքան վանքերէն մինչև այսօր հիմնարկուած բոլոր տուճարներն ու վանքերը: Հայ եկեղեցւոյ Հայրապետը, եպիսկոպոսն ու քահանան ուղղափառ հայ ժողովուրդի և ազգային եկեղեցւոյ զաւակներ բոլորն ալ, հայ ժողովուրդին աւ անոր իշխաններուն հետ միտքով ու հոգիով բնեւորուած, զըլուխ են կ'անցնէր Հայ եկեղեցւոյ կենդանացնող ու ապրեցնող հոգեւոր ու մտաւոր զաւանգար ձեւակերպներու: Այս է եղած Հայ եկեղեցւոյ վաղընթացիկ պատկերը, նկարագիրը, տոնիկը, հայրենի, ներքին հայեցողութեամբ, առանց արտաքին անկեղծութեան, բոլորն ալ շինուած հայկական քարով տուֆով, կրով ու աւազով ու հայրենի անտառներէն կտրուած փայտով, վերջապէս հայ բազմակողմ ու ճիգով աւ մշտական նուիրատուութեամբ լուսաւորելով հայաստանը: Այս է եղած եկեղեցւոյ հրդարանը ամէն տեղ ու ամէն դարու մէջ աւ այս անձնաւ ու հայացումը: Ընդհանուր երևոյթին ցայտուն մէկ պատկերն է պատմութիւնը Արարատեան դաշտի մէջ ԺԲ. - ԺԳ. դարերուն և աւելի յետոյ իբրեւ եւսական կառուցուած ու բարեբար ու միայնակ արդիւնքներով իրենց աղնուացողները զերն աւարտող հաշակաւոր վանքերուն ու եկեղեցիքն ու աւազներէն: Երբեք բոլորն ալ իբր իշխանական տուրք իրենց Մայրենի եկեղեցիքին, բարձրացած են խաղաղութեան կամ Պաշտանց աղնուացումն տունէն: Այս իբր ալ պատմագրական աւ եռահարկ թանկագին ուսումնասիրութեան նպատակը կրկին է. տալ պատմականը շուրջ մը վանքերուն ու յիշել անոնց անժխտելի ծառայութիւնները ու միանգամայն անհիշելի մեր ազգակից իշխանները՝ որ նոյն անմեռ ոգիով շարունակեն աւել տալ հայ նահապետի բայց կենդանի եկեղեցին Հայաստանի և Սփիւռքի մէջ զայն պահելով իր արժանի բարձրութեան վրայ:

Աւ ահա Միջին դարու մեր ազգային ու եկեղեցւոյն պատմութեան ամենին փառաւոր մէկ շրջանն է որտեղ զինաստան կեդրոնակը լայնօրէն էր ներգլայացնէ հայ և օտար բանասիրութեան, իր բոլոր աւանդութիւններով և ուր ազգային հայրատութեան և անգլապ հիացումով կը տեսնուի թէ ինչպէս քաղաքական այնքան զմբախտ պատահականներէն վերջն իսկ և նոյնքան անբողկացողութեան մը մէջ ինքուական, ազգաւոր ու ինքնիշխան ազատատենի տունն էր, իբնէ զորժակից անհնարաւոր նոյնքան աղնուական ծագումով ու ազգայնական բարձր գիշացնելներով տալարուած ստատիկ կամ լեռնորդի եկեղեցականներ Հայաստանի ուղղափառ իբրեւ միայնակ կուսակցութեան օգնականներ, իբր միայնակ կուսակցութեան հայ ստեղծագործ միտքին և իբր պտուղ

ցեղական բարեպաշտութեան, ինչպէս տունական տունն էր, Պաշտանցները, որոնք մէկ կողմէ քաղաքական ու զինուորական գոռարիք կաւաւածներու մէջ ազգագործ նուազուներ կատարելով, իրենց մասնակցութիւնը կը բերեն եկեղեցական գործերու մէջ ալ զիրենց անհաղաքող ինքնութիւններով ու օրինակ դառնալով յաջորդ սերունդներուն: Նոյն այդ պայազատ տունն էր որ իր կիսախառն ասանկութեան մէջ պիտի ծաղկեցնէր Գլանորի Բարձր Դպրոցը, որ իր կարգին ախոյան պիտի կանգնէր Ազգային եկեղեցիքին, զայն պաշտպանելով օտարամէտ բոլոր վտանգաւոր հակուսներուն դէմ: Նաու պիտի ինչորէն որ բարձրագոյն կը իշխանէր այս մեծարժէք ու մեծադիր ուսումնասիրութիւնը իր երեք հասարակութիւնը կարգադրելու երեք Հետընդին որ անհիշողի զիտական աշխատութիւնն էր, բազմաթիւ արձանագրութեան, տապաւնաբարեւ, ձեռագրաց յիշատակարաններու պարզ ընդօրինակութիւնը կամ արտահանումը, անհրաժեշտ էջուսներով, ու վանքերու, եկեղեցիներու և խաչքարերու ճարտարապետութեան և ռեկուսի շինարարութիւնը, այլ համազօրէն որ ներթափանց այդ շէնքերուն՝ որոնց աւերակները միայն կը մնան, ու մնացած բնիկներուն ուսումնասիրութեան հետ, հետաւորուած են նոյնպէս անոնց կատարած դերը, այնքան անմոռանալի և գնահատելի, Հայ եկեղեցւոյ պատմականութեան և յաւերժացման մէջ: Այս մէջ աւելի ձեռնադրութեամբ ու աւելի ինքնակազմութեամբ պիտի յաջողէր խաղաղութեան կամ Պաշտանց իշխանական տան համապետ կենսագիրը գառնալ, Ֆիդիքական ու մոտաւոր անհայտելի յոգնութեան գինով ինչ որ Գարեգին Արքեպիս, Ռեզնէփեան (Գաթիկոս): Պաշտանց այս երկրորդ հատարը, 117 ամենայնող պատկերներով և խնամուած, պատուաւոր ապագութեան և փորձերու ուղղորդ կողմով խաղաղ, կը բովանդակէ վեց գլուխներ, Ա. Կենտրոն. — Բ. Արքիք կամ Գերարդայ վանք. — Գ. Աղբը Ս. Սեփագետ. — Դ. Թանգար վանք. — Ե. Կուրի և Ոռնգայ վանքեր և Զ. Գլանորի Բարձր Դպրոց կամ Հայապետութիւն:

